№	[HSal]/[Mo]	[HSal] моль/л 10^{-4}	[Sal] моль/л 10^{-4}	lg[Sal]	ε л/моль см $\cdot 10^4$	$\varepsilon_{\max} - \varepsilon$	$\frac{\varepsilon}{\varepsilon_{\max} - \varepsilon}$	$\lg \frac{c}{c_0 - c}$	$\frac{\varepsilon_{\max} - \varepsilon}{c}$	$K = \frac{\varepsilon_{\max} - \varepsilon}{\varepsilon} \cdot [\text{Sal}]^3 \cdot [H^+]^2$
1	0,2	0,4	0,4	7,4	0,015	0,075	0,2	-0,698	5	$0,32 \cdot 10^{-21}$
2	0,5	1	1	7	0,039	0,051	0,764	-0,117	1,308	$1,308 \cdot 10^{-21}$
3	1	2	2	6,7	0,048	0,042	1,142	0,058	0,875	$7 \cdot 10^{-21}$
4	1,5	3	3	6,5229	0,0575	0,0325	1,77	0,248	0,565	$15,255 \cdot 10^{-21}$
5	2	4	4	6,3979	0,065	0,025	2,6	0,415	0,384	$24,576 \cdot 10^{-21}$
6	2,5	5	5	6,3010	0,07	0,02	3,5	0,544	0,285	$35,625 \cdot 10^{-21}$
7	3	6	6	6,2218	0,0735	0,0165	4,45	0,648	0,224	$48,384 \cdot 10^{-21}$
8	3,5	7	7	6,1549	0,08	0,01	8	0,903	0,125	$42,875 \cdot 10^{-21}$
9	4	8	8	6,0069	0,085	0,005	17	1,23	0,058	$29,696 \cdot 10^{-21}$
10	5	9	9	6,045	0,085	0,005	17	1,23	0,058	$42,282 \cdot 10^{-21}$
										$K_{\text{об}} = 24,73 \cdot 10^{-21} =$ $= 2,473 \cdot 10^{-20}$

Ամփոփում

Սպեկտրալուսաչափական մեթոդով ուսումնասիրված է մոլիբդեն (VI)-ի կոմպլեքսագոյացումը սալիցիլաթթվի հետ: Հաստատված է, որ կոմպլեքսագոյացումը տեղի է ունենում աստիճանական: Որոշված է առաջացած կոմպլեքսի անկայունության հաստատունը՝ $K = 2,473 \cdot 10^{-20}$ (հաշվարկային) և $K = 2,511 \cdot 10^{-20}$ (գրաֆիկական): Երկու տարբեր եղանակներով ստացված տվյալները բավականին մոտ են:

Резюме

Спектрофотометрическим методом исследовано комплексобразование молибдена (VI) с салициловой кислотой при постоянной концентрации $\text{Mo(VI)} 2 \cdot 10^{-4}$ моль/л и азотной кислоты HNO_3 . Установлено, что в изучаемой системе имеет место ступенчатое комплексобразование. Определена общая константа неустойчивости образующегося комплекса $K = 2,47 \cdot 10^{-20}$.

Լիտերատուրա

1. Мохосоев М. В., Шевцова Н. А., Состояние ионов молибдена и вольфрама в водных растворах. Бурятское книжное изд-во. Улан-Удэ, 1977.
2. Капанцян Э. Е., Саркисян Р. А., Багдасарян С. Д., Ученые записки ЕГУ, 2001, '3, с. 86.
3. Капанцян Э. Н., Балаян Т. В., Багдасарян С. Д., Зейтагян Г. М., Григорян С. К., Ученые записки ЕГУ, 2007, '1, с. 67.
4. Бьеррум Я., Образование аминов металлов в водном растворе.-М.: Изд-во ип. литературы, 1961.
5. Практическое руководство по химии комплексных соединений. Изд-во Казанского университета, 1979.

ՀՏԴ-631.575

Կենսաբանություն

ՍՏԵՔԱՆԱԿԵՐՏ ԲԱՐԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾՐԱՆՈՒՄ ԵՐԿՎՈՐՑԱԿՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.Հ. Թորոսյան, Ն.Կ. Գրիգորյան

Մարդու գենետիկայի ուսումնասիրման երկվորյակային մեթոդը առաջարկվել է 19-րդ դարի վերջին Հալտոնի կողմից, որ դեռևս իր ժամանակին տարբերում էր միաձվային (մոնոգիգոտ) և տարաձվային (դիգիգոտ) երկվորյակներ: Ներկայումս միջին հաշվով յուրաքանչյուր 84 նորածիններից մեկը լինում է երկվորյակ, իսկ նրանց 1/3-ը լինում է մոնոգիգոտ (ՄԵ): Վերջիններս զարգանում են քնդսնավորված ձվաբջջի բաժանումից առաջացած բլաստոմերներից, որոնք միմյանցից անջատվում են և առանձին սաղմի սկիզբ են տալիս, ուստի և ունենում են նույն գենոտիպը և նույն սեռին են պատկանում [1, 3]:

Դիգիգոտ երկվորյակները (ԴԵ) զարգանում են միաժամանակ հատունացած երկու տարբեր ձվաբջջիներից, ուստի կարող են լինել և նույն սեռի և տարասեռ: Այժմ նույն հատկանիշները երկվորյակների մոտ առկա են, ապա նրանք կոչվում են կոնկորդանտ, իսկ նրբ ուսումնասիրվող հատկանիշներով նրանք միմյանց նման չեն՝ դիսկորդանտ [2, 4]:

Երկվորյակային մեթոդը հնարավորություն է տալիս որոշել գենոտիպի և միջավայրի դերը հատկանիշների արտահայտման գործում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախում երկվորյակների վերաբերյալ հետազոտություններ գրեթե չեն կատարվել, ուստի հետաքրքրություն է առաջացել պարզելու համար, թե ժառանգականությունը և միջավայրի պայմանները ինչպիսի՞ ազդեցություն են գործում երկվորյակների և նրանց մոտ հիվանդությունների արտահայտվածության վրա:

2005-2007թթ. Ստեփանակերտի ծննդատանը հետազոտվել են 18 զույգ երկվորյակ, որոնցից 5-ը միաձվային երկվորյակներ են, իսկ 13-ը՝ տարաձվային:

Մանկական հիվանդանոցում (2005-2007թթ.) հետազոտվել են 17 երկվորյակ՝ 8 միաձվային և 9-ը տարաձվային: 2006թ. հետազոտված միաձվային երկվորյակներից մեկը եղել է սրտի արատով: Հետազոտություններից պարզվել է, որ մայրը ունեցել է այդ հիվանդությունը: Նրա 2-րդ ծննդաբերության ժամանակ երեխան մահացել է, իսկ այս միաձվային երկվորյակները ունեցել են այդ հիվանդությունը, որը ժառանգել են մորից:

Ընակչության շրջանում ուսումնասիրվել են 20 երկվորյակներ, որոնցից 10-ը միաձվային էին, 10-ը տարաձվային (1:1):

Երկվորյակների նմանություններն ու տարբերություններն ըստ որոշակի մորֆոլոգիական հատկանիշների ներկայացված են աղյուսակ 1-ում:

Միաձվային (ՄԵ) և տարաձվային (ԴԵ) երկվորյակների նմանությունները և տարբերություններն ըստ որոշակի մորֆոլոգիական հատկանիշների

Աղյուսակ 1

Մորֆոլոգիական հատկանիշներ	Դիսկորդանտություն (%)	
	ՄԵ	ԴԵ
Աչքերի գույնը	4,3	87,5
Մազերի գույնը	13,0	93,7
Մաշկի գույնը	0	56,3
Մազերի ծնր	0	34,3
Հոնքերի ծնր	0	50,0
Քթի ծնր	0	65,6
Շրթունքների ծնր	0	40,6
Ակտնյունքի ծնր	8,6	78,1

Հետազոտված 23 զույգ միաձվային երկվորյակներից աչքերի գույնով դիսկորդանտություն նկատվել է 1 զույգի մոտ, որը կազմում է ուսումնասիրված երկվորյակների ընդհանուր թվի 4,3 %-ը,

մագների գույնով՝ 3 գույգի մոտ (13,0 %) և ակաեցների ձևով՝ 2 գույգի մոտ (8,6 %)։ Մաշկի և մագների գույններով, հոնքերի, շրթունքների ու քթի ձևով միաձվային երկվորյակների մոտ դիսկորդանսություն չի նկատվել։ Իսկ հետազոտված 32 գույգ տարածվային երկվորյակներից աչքերի գույնով դիսկորդանսություն նկատվել 1, 4 գույգի մոտ (87,5 %), մագների գույնով՝ 30 գույգի մոտ (93,7 %), մաշկի գույնով՝ 18 գույգի մոտ (56,3 %), մագների ձևով՝ 11 գույգի մոտ (34,3 %), քթի ձևով՝ 21 գույգի մոտ (65,6 %), շրթունքների ձևով՝ 13 գույգի մոտ (40,6 %) և ակաեցների ձևով՝ 25 գույգի մոտ (78,1 %)։

Այսպիսով, նշված 8 սորթոլոգիական հատկանիշներով նկատելի տարբերություններ գույգերի մոտ հայտնաբերվում են շատ հազվադեպ (միաձվային երկվորյակային գույգերի), երբ տարածվային երկվորյակային գույգերը չնայած գենոտիպի բավական նմանության ցանկացած հատկանիշներով տարբերվում են ավելի հաճախ։

Երկվորյակների մոտ ժառանգականության և միջավայրի պայմանների պզոնոզայան մեխանիզմի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ժառանգականությունը երկվորյակների մոտ ավելի վճռորոշ դեր ունի, քան միջավայրի պայմանները։

Մարմնի չափների վրա կատարած անալիզը միաձվային և տարածվային երկվորյակների մոտ ցույց է տալիս ժառանգականության մեծ դերը այդ չափանիշների փոփոխության գործում (աղ.2)։

Մարմնի չափների փոփոխությունները միաձվային և տարածվային տիպի երկվորյակների մոտ (2005-2006թթ.)

Բանավանքն հատկանիշներ	Դիսկորդանսության (%)	
	ՄԵ	ԴԵ
Մարմնի բարձրությունը	4,3	90,0
Մարմնի քաշը	8,6	96,8
Գլխի լայնությունը	0	93,7
Գլխի երկարությունը	0	81,2

Աղյուսակ 2

Հետազոտության ընթացքում (23 գույգ ՄԵ-ից) դիսկորդանսություն ըստ մարմնի բարձրության նկատվել է 1 գույգի մոտ, որը կազմում է ուսումնասիրված միաձվային երկվորյակների ընդհանուր թվի 4,3 %-ը, իսկ մարմնի քաշի՝ 2 գույգի մոտ (8,6 %), ըստ գլխի լայնության և երկարության դիսկորդանսություն չի նկատվել (0 %)։ Հետազոտված 32 գույգ տարածվային երկվորյակների դիսկորդանսություն ըստ մարմնի բարձրության նկատվել է 29 գույգի մոտ, որը կազմում է ուսումնասիրված տարածվային երկվորյակների ընդհանուր թվի 90,0 %, ըստ մարմնի քաշի՝ 31 գույգի մոտ (96,8 %), ըստ գլխի լայնության՝ 30 գույգի մոտ (93,7 %) և գլխի երկարության՝ 26 գույգի մոտ (81,2 %)։

Այսպիսով, աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ մարմնի չափների էական տարբերություններ նկատվում են տարածվային երկվորյակների մոտ, մինչդեռ այն համարյա անփոփոխ է միաձվային երկվորյակների մոտ։ Նույնիսկ մանկույց ընկնելով տարբեր պայմաններ վեր նշված քանակական հատկանիշները անփոփոխ են մնացել։

Երկվորյակների մոտ ուսումնասիրություններ են կատարվել ժառանգական նախադրյալի դերը պարզելու համար այնպիսի հիվանդությունների գարգացման վրա, որոնք ժառանգական էին համարվում։

Միաձվային և տարածվային երկվորյակների կոնկորդանսության բնութագիրը ըստ տարբեր ինֆենկցիոն հիվանդություններով հիվանդանալու ունակության ներկայացված է աղյուսակ 3-ում։

Միաձվային և տարածվային երկվորյակների կոնկորդանսության բնութագիրը ըստ տարբեր ինֆենկցիոն հիվանդություններով հիվանդանալու ունակության

Աղյուսակ 3

Հիվանդությունը	ՄԵ		ԴԵ	
	գույգերի թիվը	կոնկորդանսության %	գույգերի թիվը	կոնկորդանսության %
Կարմրուկ	14	92,8	25	80,0
Ջրաղիկ	12	91,6	16	81,2
Խոզուկ	8	75,0	15	66,7
Անգինա	21	57,1	30	36,6
Թոքերի բորբոքում	19	36,8	28	21,4
Տուբերկուլոզ	0	0	0	0

Հետազոտված 23 միաձվային երկվորյակներից 14 զույգի սոտ հայտնաբերվել է կարմրուկ հիվանդությամբ հիվանդանալու ունակությունը, ընդ որում նրանցից միայն 13-ի մոտ է նկատվել կոնկորդանտություն, որը կազմում է ընդհանուր թվի 92,8 %-ը, իսկ ջրծաղիկ հայտնաբերվել է 12 զույգի մոտ, որից կոնկորդանտություն նկատվել է 11 զույգի մոտ (91,6 %), խոզուկ հայտնաբերվել է 8 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 6 զույգի մոտ (75,0 %), անգինա հայտնաբերվել է 21 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 12 զույգի մոտ (57,1 %), թորերի բորբոքում հայտնաբերվել է 19 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 7 զույգի մոտ (36,8 %)։ Հետազոտված 32 տարաձվային երկվորյակներից կարմրուկ հայտնաբերվել է 25 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 20 զույգի մոտ (80,0 %), ջրծաղիկ հայտնաբերվել է 16 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 13 զույգի մոտ (81,2 %), խոզուկ հայտնաբերվել է 15 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 10 զույգի մոտ (66,7 %), անգինա հայտնաբերվել է 30 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 11 զույգի մոտ (36,6 %), թորերի բորբոքում հայտնաբերվել է 28 զույգի մոտ, իսկ կոնկորդանտություն նկատվել է 6 զույգի մոտ (21,4 %)։

Աղյուսակ 3-ի տվյալները գույց են տալիս, որ կոնկորդանտությունը միաձվային երկվորյակների մոտ ավելի մեծ է, քան տարաձվային երկվորյակների մոտ։ Կարմրուկի և ջրծաղիկի ժամանակ ժառանգական նախադրյալը ոչ մի դեր չի խաղում, խոզուկի, անգինայի, թորերի բորբոքման դեպքում ժառանգական նախադրյալը որոշակի նշանակություն ունի, իսկ տուբերկուլոզի ժամանակ ժառանգական նախադրյալը ավելի մեծ դեր է կատարում։ Մեր կատարած հետազոտությունների ժամանակ երկվորյակների մոտ տուբերկուլոզ չի հայտնաբերվել։

Անհրաժեշտ է նշել, որ միաձվային երկվորյակները սովորաբար ավելի ուժեղ են շփված իրար հետ, քան տարաձվային երկվորյակները, իսկ դա կարող է էական բարձրացնել նրանց մեկը մյուսից վարակվելու հնարավորությունը։

ԼՄՀ-ում երկվորյակների ուսումնասիրումը կարող է օգտակար լինել գենետիկի դերի և միջավայրի պայմանների ազդեցության, ինչպես նաև տարրեր նորմալ կամ այստաբանական բնույթի հատկանիշների բացահայտման համար։

Ամփոփում

2005-2007 թթ. ուսումնասիրություններ է կատարվել Ստեփանակերտ քաղաքի ծննդատանը, մանկական հիվանդանոցում և բնակչության շրջանում պարզվելու համար, թե ժառանգականությունը և միջավայրի պայմանները ինչպիսի ազդեցություն են գործում երկվորյակների և նրանց մոտ առաջացած հիվանդությունների արտահայտվածության վրա։

Резюме

В 2005-2007 гг. проводились исследования в Степанакертском родильном доме, детской больнице и среди населения для того, чтобы определить какое воздействие послезачатый фактор и условия окружающей среды оказывают на двойняшек и на выраженность признаков у них болезней.

Գրականություն

1. Միսակյան Ս.Հ., Ընդհանուր և բժշկական կենսաբանություն, Երևան, 2005, էջ 220-224։
2. Մյուսարով Ա.Ա., Կենսաբանություն և ընդհանուր գենետիկա, Երևան, 1983, էջ 271-318։
3. Дубинин И.П., Новое в современной генетике. М. 1986, с. 191-194.
4. Мюнтшиш А., Генетика. М. 1967, с. 81-85.

ԱրՊՀ, կենսաբանության ամբիոն

ՀՏԴ-631.575

Լինաաբանություն

ԱՐՅԱՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՌԵԶՈՒՍ-ԳՈՐԾՈՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՆ ՀԱՃԱՅԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՐ
ՍՏԵՔԱՆԱԿԵՐՏ ԶԱՂԱՔԻ ԲՆԱԿԱԶՈՒԹՅԱՆ ԵՐԶԱՆՈՒՄ

Ա.Հ. Թորոսյան, Ն.Վ. Հովհաննիսյան

Հայտնի է, որ արյան և ռեզուս գործոնը մարդու ողջ կյանքի ընթացքում չեն փոխվում և փոխանցվում են ժառանգաբար:

Արյան խմբի պատկանելիությունը կախված է Լրիթթոգիտների մակերեսին գտնվող անտիգեններից (օտարածին նյութ): Հայտնի է, որ անտիգեն ներարկելիս մարդու արյան պլազմայում առաջանում են յուրաքանչյուր հավամարմիններ: Այդ անտիգեններից շատերը սպիտակուցային նյութեր են: Հավամարմինները նույնպես սպիտակուցներ են, որոնք արտազատվում են արյան մեջ հատուկ հավամարմին առաջացնող բջիջների կողմից [2, 3]:

1924թ. Բերլինյնը բազահայտնեց ABO համակարգի ժառանգումը, որը կապված է Լրիթթոգիտների արտաքին մեմբրանում A և B անտիգենների (սպիտակուցներ) առկայությունից: Տարբերում են այս համակարգի չորս խմբեր: Եթե Լրիթթոգիտային մեմբրանում բացակայում են այդ անտիգենները, ապա օրգանիզմն ունի 0 կամ I խումբ, եթե կա A սպիտակուցը՝ A (II) խումբ, եթե B սպիտակուցը՝ B (III) խումբ և եթե A և B սպիտակուցներ՝ AB (IV) խումբ:

Արյան խմբերի ABO համակարգը մեծ նշանակություն ունի արյան փոխներարկման, ինչպես նաև դատաբժշկական վիճելի հարցերի պարզաբանման համար:

Եթե ծնողները ունեն I խմբի արյուն, ապա երեխաները կարող են ունենալ միայն իրենց ծնողների արյան խմբերը: Եթե մայրը և երեխան ունեն I խմբի արյուն, այդ դեպքում հայրը չի կարող ունենալ IV խմբի արյուն և այլն: Սակայն եթե ծնողները հետերոգիգոտ են II և III խմբերի նկատմամբ (AO և BO), այդ դեպքում երեխաները կարող են ունենալ հնարավոր բոլոր չորս խմբերի արյունը: Արյան խմբերով կարելի է ժխտել տղամարդու՝ երկխայի հայրը լինելու հարցը, սակայն հաստատել հայրությունը հնարավոր չէ [1, 4]:

1940թ. ռեզուս մակակ կարգիների արյան Լրիթթոգիտներում հայտնաբերեցին մի անտիգեն (Rh - գործոն), որը գոյություն ունի նաև մարդկանց արյան մեջ: Հետագայում պարզվեց, որ մարդկանց 85 % - ի արյան Լրիթթոգիտներում այդ գործոնը կա, ուստի նրանց անվանեցին ռեզուս դրական (Rh⁺), իսկ 15 % - ի արյան Լրիթթոգիտներն այդ անտիգենը չեն պարունակում, հետևապես նրանց անվանեցին ռեզուս բացասական (Rh⁻):

Ի տարբերություն ABO համակարգի ռեզուս գործոնը չունի իր բնական հավամարմինը, այն ձևավորվում է, երբ Rh⁻ ռեցիպիենտին ներարկեն Rh⁺ գործոն: Ռեզուս համակարգում իմունոլոգիական բախում է տեղի ունենում, երբ ռեզուս բացասական մարդուն կրկնակի անգամ ներարկում են ռեզուս դրական արյուն և հղիության դեպքում, երբ մայրը Rh⁻ է, հայրը՝ Rh⁺ [2, 3]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արգայիսը պատերազմական գոտի է ու ժազմական գործողությունների ժամանակ հաճախակի է անհրաժեշտություն լինում արյան փոխներարկումներ կատարել, ուստի նպատակահարմար ենք գտել ուսումնասիրություններ կատարել պարզելու համար, թե Ստեփանակերտ քաղաքի բնակչության շրջանում արյան ո՞ր խմբերը և ռեզուս ո՞ր գործոնն է գերակշռում:

Մեր կողմից 2005-2006թթ. փճակագրական հետազոտություններ են կատարվել Ստեփանակերտ քաղաքի զինվորական հոսպիտալի և արյան փոխներարկման կայանի իվանդների արյան խմբերի և ռեզուս-գործոնի առանձնահատկությունները որոշելու համար:

2005թ. արյան փոխներարկման կայանում հետազոտված 338 մարդկանցից 113-ը ունեցել են արյան I-ին խումբ, 135-ը՝ 2-րդ, 63-ը՝ 3-րդ և 27-ը՝ 4-րդ խումբ: Ռեզուս դրական են եղել 289 մարդ, որը կազմել է 85,5 %, ռեզուս բացասական՝ 49 մարդ - 14,5 %:

2006թ. ուսումնասիրվել է 350 մարդ, որից 122-ը ունեցել են I-ին խմբի արյուն, որը կազմել է 35 %, 153-ը՝ 2-րդ խմբի արյուն - 44 %, 56-ը՝ 3-րդ խմբի արյուն - 16 %, իսկ 19-ը՝ 4-րդ խմբի արյուն՝ 5,4 %:

Ստեփանակերտ քաղաքի բնակչության արյան խմբի և ռեզուս-գործոնի մասին տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Ստեփանակերտ քաղաքի ազգաբնակչության շրջանում արյան խմբերի և ռեզուս-գործոնի հաճախականությունը (2005-2006թթ.)

(Աղյուսակ 1)

Տարի	Բնակվել է մարդ (ընդամենը)	Ռիզ											
		O (I)		A (II)		B (III)		AB (IV)		Rh ⁺		Rh ⁻	
		մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%	մարդ	%
2005	338	113	33,4	135	40	63	19	27	8	289	85,5	49	14,5
2006	350	122	35	153	44	56	16	19	5,4	307	87,7	43	12,3

Այսպիսով, աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ 2005-2006թթ. Ստեփանակերտ քաղաքի ազգաբնակչության շրջանում գերակշռել է արյան 2-րդ խումբը և ռեզուս դրական գործոնը:

Հետազոտություններ են կատարվել նաև Ստեփանակերտ քաղաքի զինվորական հոսպիտալի զինվորների արյան խմբերի և ռեզուս-գործոնի որոշման ուղղությամբ (աղյուսակ 2):

Ստեփանակերտ քաղաքի զինվորական հոսպիտալի զինվորների արյան խմբերի և ռեզուս-գործոնի հաճախական հաճախականությունը (2005-2006թթ.):

(Աղյուսակ 2)

Տարի	Բնակել է մարդ (ընդամենը)	Ռիզ							
		O (I)		A (II)		B (III)		AB (IV)	
		Rh ⁺	Rh ⁻	Rh ⁺	Rh ⁻	Rh ⁺	Rh ⁻	Rh ⁺	Rh ⁻
2005	367	103	15	135	20	53	10	27	4
	Տեղումներով	28,0	4,0	36,7	5,4	14,4	2,7	7,4	1,1
2006	401	122	17	153	20	56	10	19	4
	Տեղումներով	30,4	4,2	38,2	5,0	14,0	2,5	4,7	1,0

Պարզվել է, որ 768 հետազոտված զինվորներից 2005թ-ին 103-ը կամ 28,0 %-ը ունեցել են 1-ին խումբ և ռեզուս դրական գործոն. իսկ ռեզուս բացասական գործոն ունեցել են 15 զինվոր (4,0 %), 135-ը (36,7 %) ունեցել են 2-րդ խումբ և ռեզուս դրական գործոն, իսկ 20-ը (5,4 %)՝ ռեզուս բացասական, 53 զինվոր (14,4 %) ունեցել են 3-րդ խմբի արյուն և ռեզուս դրական գործոն, 10-ը (2,7 %)՝ ռեզուս բացասական, 27 զինվոր (7,4 %) ունեցել են 4-րդ խումբ և ռեզուս դրական արյուն, իսկ 4-ը (1,1 %)՝ ռեզուս բացասական:

2006թ-ին 122 զինվոր ունեցել են 1-ին խումբ և ռեզուս դրական գործոն, 17-ը՝ ռեզուս բացասական, 153 զինվոր ունեցել է արյան 2-րդ խումբ և ռեզուս դրական գործոն, իսկ 20-ը՝ ռեզուս բացասական, 3-րդ խմբի արյուն ունեցել է 56 զինվոր, որից 10-ը ռեզուս բացասական, 19 զինվոր՝ 4-րդ խմբի արյուն, որից 4-ը ռեզուս բացասական:

Այս վերլուծությունից ես եկանք այն համոզման, որ Ստեփանակերտի բնակչության շրջանում գերակշռում են արյան 1-ին և 2-րդ խմբերը, ինչպես նաև ռեզուս դրական գործոնը, իսկ փոքրամասնությունը կազմում է 4-րդ խումբը:

Բաղադրագիական բնակչության տասը ընտանիքներում որոշվել է ընտանիքի բոլոր անդամների արյան խմբերը և ռեզուս-գործոնը (յովով 41 մարդ), պարզելու համար, թե այդ ընտանիքներում բնակչության անդամները ինչպիսի ժառանգական հիվանդությամբ են տառապում, արյան ո՞ր խմբին են պատկանում, և ինչպիսի՞ կապ գոյություն ունի արյան խմբերի և հիվանդությունների միջև: Աղյուսակները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Մարդկանց մոտ արյան խմբերի և ռեզուս-գործոնի ռսումնասիրությունը (2007թ.)

(Աղյուսակ 3)

<Հետազոտված մարդկանց թիվը	Մտոնների արյան խմբերը		Մերունների արյան խմբերը		Մտոնների ռեզուս-գործոնը		Մերունների ռեզուս-գործոնը	
	մարդ	հայր	աղջիկ	սուր	մարդ	հայր	աղջիկ	սուր
41	I	I		I-I	Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ - Rh ⁺	
	II	II	II-II-II		Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ - Rh ⁺ - Rh ⁺	
	I	II	I'-II		Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ Rh ⁺	
	I	II		II-I	Rh ⁺	Rh ⁺		Rh ⁺ - Rh ⁺
	I	II	II	I	Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺

	II	III	II	II	Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺
	II	II	II-II		Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ - Rh ⁺	
	I	I	I-I		Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ - Rh ⁺	
	II	II	II-II		Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ - Rh ⁺	
	II	II	II-II		Rh ⁺	Rh ⁺	Rh ⁺ - Rh ⁺	

* - հիվանդ

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ տասը ընտանիքներում ծնողները հիմնականում ունեցել են I-ին և 2-րդ խումբ, ինչպես նաև ռեզուս դրական գործոն: Ընդ որում հիմա կին ունեցել են արյան I-ին խումբ, որոնցից մեկի դուստրը ևս ունեցել է I-ին խումբ, սակայն ռեզուս բացասական գործոն: Այս երեխան տառապում է հեմոֆիլիա հիվանդությամբ: Հետազոտությունները ցույց են տվել, որ այս ընտանիքում պապիկը ուներ ռեզուս բացասական գործոն, ևս տառապում էր նշված հիվանդությամբ: Պարզվեց, որ աղջկա մոտ հեմոֆիլիա հիվանդությունը ժառանգաբար է փոխանցվել՝ պապից թոռանը: Ուրեմն հատկանիշը ռեցեսիվ գրգռություն ունի:

Մեր հետազոտությունների համաձայն Ստեփանակերտ քաղաքի բնակչության մոտ գերակշռում են I-ին և 2-րդ խմբի արյունը, ինչպես նաև ռեզուս դրական գործոնը: Գտնում ենք, որ պատերազմական գոտի համարվող ԼՂՀ-ում նման հետազոտությունները կարող են ունենալ անչափ կարևոր կենսական նշանակություն և օգտակար կլինեն փոխներարկումների անհրաժեշտության ժամանակ:

Ամփոփում

Աշխատանքում հետազոտություններ են կատարվել Ստեփանակերտ քաղաքի գինվորական հոսպիտալի, արյան փոխներարկման կայանի, ինչպես նաև քաղաքացիական բնակչության շրջանում արյան խմբերի և ռեզուս-գործոնի առանձնահատկությունները որոշելու համար:

Հետազոտություններից պարզվեց, որ Ստեփանակերտ քաղաքի բնակչության շրջանում գերակշռում է արյան I-ին և 2-րդ խմբերը, ինչպես նաև ռեզուս դրական գործոնը:

Резюме

В работе проводились исследования для определения группы крови и резус фактора в военном госпитале города Степанакерта, на станции переливания крови, а также среди гражданского населения.

Исследования показали, что среди гражданского населения города Степанакерта преобладают I - ая и II - ая группы крови, а также положительный резус фактор.

Դրականություն

1. Մինասյան Ա.Մ., Աղամյան Ծ.Հ., Սարգսյան Ն.Վ., Մարգու և կենդանիների ֆիզիոլոգիա, Երևան, 2006, էջ 255-258:
2. Դ.Ս. Խոտավերդյանի, Վ.Բ. Ֆանարջյանի խմբագրությամբ, «Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ», Երևան 1998, էջ 321-325:
3. Սիսակյան Ս.Հ., Ընդհանուր և բժշկական կենսաբանություն, Երևան, 2005, էջ 140-144:
4. Дубинин Н.П. Новое в современной генетике. М. 1986, с. 21-26.

ԱրՊՀ, կենսաբանության ամբիոն

ԼԱԽԱԿԵՐ ՄՈՒԻՆՆԵՐԻ ԻՆՉՊՈՆՏ ԳԱ ՀԱՍԿԱՆԱԼ

Ա.Ա. Գուլյան

Բանալի բառեր սննդի կալորիականություն, սպիտակուցներ, անփոխարինելի ամինաթթուներ, վիտամիններ, մոխրալիներ տարրեր:

Հնդկաստանի շրջանում շատ կարճ ժամանակահատվածում, ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում թե ՀՀ-ում և թե ԲՀ-ում հասարակության մեջ տեղի ունեցավ խիստ շերտավորում. առաջին հերթին դա կապված է առանձին խավերի ապրելակերպի, ընտանեկան եկամուտների ծավալների, պարզապես ապրուստի միջոցներով ապահովվածության աստիճանի հետ:

Այդ խնդրում ոչ պակաս դեր կատարեց աշխատավոր հասարակությանը, նրա ամեն մի անդամին իբր պետական ունեցվածքի (խմա ֆաբրիկա-գործարանային անշարժ կապիտալի) «բաժնետեր» դարձնելու ոչ ռազիոնալ գործընթացը՝ սեփականաշնորհումը: Որպես դրա շարունակություն և հետևանք, հատկապես քաղաքային բնակչության շրջանում, կապված արտադրական ծեղարկությունների գործունեության կազմավորման, գործազրկության և կալույն աշխատավարձ ունեցողների թվաքանակի խիստ կրճատման հետ, ստեղծվել է սոցիալապես անտվառի, աղքատ կամ կարիքավոր խավի մի ստվար շերտ, որն իր գոյությունը պահպանել կարողանում է միայն լրացուցիչ սոցիալական օգնության շնորհիվ:

Առաջին հերթին այդ խավի գոյատևումը ապահովելու համար Սոցիալական ապահովության և Առողջապահության նախարարությունների կողմից մշակվել ու առաջարկվել է, այսպես կոչված, մեկ շնչի «ապրելու» համար անհրաժեշտ նվազագույն գամբուտի ապահովման ծրագիր:

«Ապրելու» բառը չակերտների մեջ է առնված այն պատճառով, որ նման մակարդակով ապրելը պարզապես սովից չմեղեխել է: Այդ ծրագրով սահմանվել է, այն նվազագույն կալորիաների քանակը, որը պետք է ստանա միջին տարիքի մարդը մեկ օրում: Այդ կալորիաները շատ հեշտությամբ գումարվում են վերը նշված խավի կողմից ամենից մեծ չափերով օգտագործվող հացի, մակարենների, ծավալներին ու կարտոֆիլի հաշվին:

Այդ մթերքները հիմնականում ածխաջրեր (օսլա) են պարունակում և շատ քիչ սպիտակուցներ (կառուցանյութեր), վիտամիններ (կոյուստիտիսանակության կարգավորիչներ), հանքային միացություններ և այլն: Մենդաբաժնում պակասում են մսամթերքը, կաթնամթերքը, մրգեղենը, բանաջրեղենը և այլն:

Մթերքի սննդային արժեքը պայմանավորվում է երեք հիմնական գործոններով: Այն է՝ կալորիականությանը, սննդային լրացուցիչ տարրերով (վիտամիններ, անփոխարինելի ամինաթթուներ, հանքային նյութեր՝ երկաթ, կալցիում, կալիում և այլն), ինչպես նաև համայնի ու բոլորմանային (արոմատ) որակով, որոնք կտա ունեն օրգանական թթուների, տարբեր շաքարների, արոմատիկ միացությունների և այլ բաղադրամասերի պարունակության հետ, և իհարկե, ինչու չէ, նաև այդ մթերքի արտաքին տեսքով (2):

Կալորիականությունը մթերքի որոշակի քանակի պայմելու (օրգանիզմում դա օքսիդացում է) դեպքում գոյացող ջերմության քանակն է: Այն կարող է որոշվել նաև ենթյով տվյալ մթերքի քիմիական կազմից, իմանալով սննդամթերքի կազմի մեջ մտնող օրգանական (այդվել) բաղադրիչների՝ Լգ, ծարպի, սպիտակուցի ու ածխաջրերի (բոլոր տեսակի) կալորիականությունը: Հայտնի է, որ Լգ, ծարպի կալորիականությունը կազմում է 9.45 կկալ, Լգ, սպիտակուցինը՝ 5.65 կկալ, և Լգ, ածխաջրերինը՝ 4.20 կկալ: Ածխաջրերով հարուստ հացի, մակարենների ու կարտոֆիլի հաշվին (համեմատաբար Լժան են) շատ հեշտությամբ գումարվում են այդ սահմանված կալորիաների օրաքանակը: Բավական է ասել, որ 0.5կգ սպիտակ հացը (38-40% խոնավությամբ) պարունակում է 1000-1200 կկալ:

Միջին միայն կալորիաներ ընդունելով առողջ, զանազան հիվանդությունների նկատմամբ անընկալունակ, առավել նու աճող օրգանիզմ լինել չի կարող:

Պետք է հաշվի առնել նաև, որ ընդունվող սննդամթերքի մեջ արարունակվող կալորիաների այդ պոտենցիալ էներգիան օրգանիզմի կողմից ամբողջությամբ չի յուրացվում: Հացի (ցորենի) բարձր տեսակի ալյուրիզ թխվածք՝ ամլին քան 50%-ը ածխաջրերն են, մոտ 7.5%-ը՝ սպիտակուցներ և 2-2.5%-ը՝ ծարպանյութեր: Չոր նյութերի հաշվվելում (38-40% խոնավությունը

իաշված) ամխաչքերը կազմում են մոտ 80%, սպիտակուցները՝ մոտ 16-17%, որոնք յուրացվում են մարդու օրգանիզմում 85-91%-ով, իսկ հացի ողջ չոր նյութերը՝ 91-95%-ով (2,5):

Ուրեմն ընդունված սննդամթերքի մեջ օրգանիզմի կողմից յուրացվող, կամ ինչպես ընդունված է ասել, ֆիզիոլոգիական կալորիականությունը այնքանով պակաս է, որքանով ցածր է տվյալ մթերքի մարսելիությունը:

Մարդու համար, իսկ ածող տարիքում գտնվողների համար առավել եւս, կարևոր նշանակություն ունեն սննդաբաժնում մի խումբ հավելյալ, բայց կենսականորեն խիստ անհրաժեշտ գործոններ եւս: Ինչպես նշեցինք, դրանք վիտամիններ են, անփոխարինելի ամինաթթուներ, հանքային մի քանի տարրեր եւ այլն:

Մարդու համար անփոխարինելի են համարվում ութ ամինաթթուներ, որոնք օրգանիզմում չեն սինթեզվում, ուստի նրանք մարդը պետք է ընդունի պատրաստի վիճակում՝ բուսական կամ կենդանական սննդամթերքների հետ: Դրանք են՝ լիզին, տրիպտոֆան, լեյցին, իզովեյցին, թրենին, սերթոնին, վալին, ֆենիլալանին:

Հատկապես կարևորվում են լիզինը եւ տրիպտոֆանը, որոնցով աղքատ է գորենի, տարեկանի բարձրորակ ալյուրից թխված հացը: Հասուն մարդու օրական պահանջը այդ ամինաթթուների նկատմամբ կազմում է՝ լիզինի 5 մգ-ը եւ տրիպտոֆանի 1 մգ-ը:

Ալյուրակ հացի 500 գ-ը բավարարում է մարդու օրական պահանջը այդ ամինաթթուների նկատմամբ մոտ 20%-ով, իսկ մնացած 80%-ը պետք է լրացվի կենդանական ծագման սննդամթերքների՝ մսի, կաթի, պանրի, ձվի եւ այլ մթերքների հաշվին (2,5):

Ալիտակուցները եւ ամինաթթուները օրգանիզմի համար (հատկապես ակտիվ ածող) հիմնական կառուցանյութ են հանդիսանում: Այդ նյութերի նկատմամբ մարդու օրական պահանջի մի մասը ընդունվում է հացի, հացամթերքների, ծավալեղենի հետ: Դրանց կարևոր մտակարար են կենդանական ծագման մթերքները:

Ալիտակուցների եւ հատկապես անփոխարինելի ամինաթթուների լավ աղբյուր են թանկարեղենը եւ մրգերը: Լարեկը է, որ նրանց մեջ առկա են մարդու համար անփոխարինելի բոլոր ամինաթթուները:

Բանջարեղենի ու մրգերի անբավարարության դեպքում խորհուրդ է տրվում սննդի մեջ անփոխարինելի ամինաթթուների պակասը լրացնել՝ գորենի ալյուրի հետ եգիպտացորենի (լիզինով հարուստ), հատիկալեղենների (սերթոնինով հարուստ) ալյուր օգտագործելու միջոցով (4):

Գտնում են, որ հացաթխման ալյուրի մեջ ընդամենը 0,4%-ով լիզինի ավելացումը բարձրացնում է գորենի ալիտակուցի սննդային արժեքը մոտ 50%-ով: Հացի սննդային արժեքի բարելավման կարևոր պայման է նաեւ B₁ վիտամինով հարուստ խմորաանկերի օգտագործումը:

Մարդու օրգանիզմը կարիք է գգում նաեւ օրական մի շարք վիտամինների որոշակի նվազագույն քանակի: Օրինակ՝ հասուն մարդու մեկ օրվա պահանջը B₁ (թիամին) վիտամինի նկատմամբ կազմում է 1-1,5 մգ, B₂ (ռիբոֆլավին) -ի նկատմամբ՝ 2-2,5 մգ, C վիտամինի (ասկորբինաթթու) նկատմամբ՝ 50-100 մգ (2,4,5):

Վիտամինների նկատմամբ մարդու օրական պահանջի չափերը տարբեր հեղինակների մոտ միասնաձայն չեն: Օրինակ, խորհրդային առևտրի ինստիտուտի աշխատակից Գ.Ա. Լոկոմոնիկովայի տվյալների հասածայն տարբեր վիտամինների նկատմամբ հասուն մարդու օրական պահանջը հետևյալ չափերն ունի: Ասկորբինաթթու (վիտամին C)՝ 50-70 մգ, թիամին (B₁)՝ 1,5-2 մգ, ռիբոֆլավին (B₂)՝ 2-2,5 մգ, նիացին (PP)՝ 15-25 մգ, պանտոտենաթթու (B₃)՝ 5-10 մգ, պիրիդոքսին (B₆)՝ 2-3 մգ, թուոլին (վիտամին P)՝ 25 մգ, կարոտինոիդներ (պրովիտամին A)՝ 3-5 մգ, տոկոֆերոլներ (վիտամին E)՝ 5-30 մգ, նաֆտոխինոններ (վիտամին K)՝ 0,2-3 մգ եւ այլն (3):

Այս վիտամինների, ինչպես եւ մի քանի հանքային տարրերի հիմնական աղբյուր են հանդիսանում բանջարա-քոստանային սննդամթերքները, թե՛ն B₁, B₂, B₆ վիտամինների պարունակությունը հազամթերքներում ու այլ հատիկավորների հատիկում ավելի բարձր է, քան բանջարաբույսերում:

Մարդը հացի հետ չի ստանում A վիտամին կամ պրովիտամին A (կարոտին) եւ վիտամին C: Օրական 550 գ հաց օգտագործող մարդը գրեթե լրիվ բավարարում է P վիտամինի նկատմամբ օրգանիզմի պահանջը, ինչպես նաեւ B₁-ի նկատմամբ պահանջը՝ մոտ 70%-ով և B₂-ի՝ 15-16%-ով (2): Այդ վիտամիններով առավել հարուստ է կոպիտ աղացած, շատ թե քիչ թեփի ու սաղմի մնացորդներ պարունակող ալյուրից թխված հացը: Միևնույն հացի ու հացամթերքների մեջ բազմապիսյուն են C եւ A վիտամինները: Կարոտինի առավել ավազույն մատակարարներ են գազարը՝ 9 մգ %, կարմիր բիբարը՝ 10 մգ %, մաղադանոսը՝ 10 մգ %, ավելուկը՝ 8 մգ %, ալանախը՝ 5 մգ % և այլն: Պտուղներից A պրովիտամինով հարուստ են չիխանը՝ 8 մգ %, պրսը՝ 8 մգ % եւ այլն (3):

Վիտամին C-ի լավագույն աղբյուր են ծաղկակաղամբը՝ 47-93 մգ %, կանաչ սոխը՝ 52-81 մգ %, մաղադանոսը՝ 58-290 մգ %, քարավազը՝ մինչեւ 180 մգ %, սամիթը՝ 31-128 մգ %, արքունի՝ 8 մգ % եւ այլն (3):

սպանախը՝ 37-78 մգ %, կարտոֆիլը՝ մոտ 40 մգ %, կինձը՝ 44-140 մգ %, կանաչ՝ բիբարը՝ 80-200 մգ %, կարմիր բիբարը՝ 180-250 մգ % և այլն: Պտուղներից եւ հատապտուղներից C վիտամինով առավել հարուստ է, սնն հաղարպը՝ 300 մգ %, ապա հետևյալում են արծու՝ 150 մգ %, չիլանը՝ 40 մգ % եւ այլն:

Ի դեպ C վիտամինի առավելագույն պարունակությունը լինում է կանաչ (չհասնում) ընկույզի մեջ՝ մինչև 500 մգ %, մինչդեռ հատուկ ընկույզի միջուկում այն ընդամենը 5-10 մգ % է: Նույն ծնով կանաչ ոլոռի հասունանալուց հետո նրա մեջ C վիտամինի պարունակությունը մոտ կրկնակի անգամ նվազում է:

C վիտամինի մի շարք կարեւոր ֆունկցիաներից բացի նաեւ պայմանավորվում է օրգանիզմի անընկալունակությունը զանազան հիվանդությունների նկատմամբ:

Մարդու կողմից օգտագործվող բոլոր պտուղներում ու բանջարաբույսերում առկա են նաեւ խիստ անհրաժեշտ կարոտին, PP եւ B խմբի վիտամինները՝ ամենատարբեր չափերով: Կարոտինը 0,1-10 մգ %, PP-ն՝ 0,2-ից 2 մգ %-ի եւ B խմբինը՝ մինչև 0,8 մգ %-ի սահմաններում [3,4]:

Տարբեր տիպի մրգերում ու բանջարեղենում զանազան օրգանական միացությունների (սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի, վիտամինների, օրգանական թթուների, ֆենոլների ու հանրային տարրերի) պարունակությունը կախված է տվյալ կուլտուրայի տարիքից (կենսաբանական առանձնատկություններից), մշակության պայմաններից, հասունացման փուլից, պահպանության եղանակից եւ ժամկետից եւ այլն:

Պտուղների եւ բանջարեղենների մեջ B₁₂ եւ D վիտամիններ չեն հայտնաբերվել: Մինչդեռ B₁₂ վիտամինը վնասագործում է ձխախոտի վնասակար ազդեցությունը, հանգստացնում նյարդային համակարգը, կանոնավորում լյարդի գործունեությունը, նվազեցնում խոլեստերինի քանակը արյան մեջ եւ արգելափակում ճարպերի կուտակումը ներքին օրգաններում: Առողջ մարդու օրական զոգան 5-12 մգ է: B₁₂-ի լավագույն աղբյուր են կենդանական ծագման մթերքները, ամենից շատ կա տավարի լյարդի, ապա տավարի ու խոզի մսի, ձվի դեղնուցի, ձկան, բոլոր կաթնամթերքների մեջ (1):

Արդյունաստեղծման գործընթացի վրա բարերար ներգործություն է թողնում վիտամին B₉-ը (ֆոլիաթթուն), թե՛ն մարդու օրական պահանջը այդ վիտամինի նկատմամբ չնչին է՝ 0,1-0,5 մգ եւ կարող է բավարարվել բանջարեղենով ու մրգերով: Ֆոլիաթթուն շատ կա երակի մեջ (0,13-0,17 մգ %), որի համար այն քարեմպատ է ազդում սակավարյունության ժամանակ: Ֆոլիաթթուն շատ կա նաեւ բայի (0,15 մգ %) եւ մոխի մեջ (0,25 մգ %): E վիտամինի նկատմամբ մարդու օրական պահանջը մեծ չէ՝ 2-6 մգ: Սակայն այն կարելու է՝ մարդու ակտիվ կենսագործունեության համար: E վիտամինի լավ աղբյուր են կանաչ բանջարեղենը եւ մրգերը:

Ամենից շատ այն պարունակվում է չիլխանի՝ 2,9-9,6 մգ %, մասուրի՝ 1-2,4 մգ %, դեղձի մեջ՝ 0,6-2,8 մգ % [4]:

Օրգանիզմի համար ոչ պակաս կարեւոր դեր ունի վիտամին B₁-ը (պանգոմաթթուն), որի նկատմամբ պահանջը թե՛ն տասնորդական միլիգրամներ են կազմում, սակայն նրա անհրաժեշտությունը անչափ մեծ է: Հաստատված է, որ այն ունի թթվածնի փոխանակությունը ակտիվացնելու հատկություն եւ դրանով իսկ այն պաշտպանում է օրգանիզմը թթվածնային քաղցից, որը տեղ է գտնում ծերացման ժամանակ: Մյուս կարեւոր հատկությունը այն է, որ նվազեցնում է մի խումբ բուժական միջոցների մնացորդային թունավոր եւ այլ ոչ գանկալի ազդեցությունները [4]: Պանգոմաթթու ամենից շատ հայտնաբերված է ծիրանի կորիզում:

Մարդու օրգանիզմը նորմալ կենսագործունեության համար կարիք ունի նաեւ մի քանի հանրային տարրերի՝ երկաթ, կալցիում, կալիում, յոդ եւ այլն: Օրինակ՝ տարբեր մարդու առողջ օրգանիզմը մեկ օրում պետք է ընդունի 10-12 մգ երկաթ, որը անչափ կարեւոր է արդյունաստեղծման պրոցեսի, արյան կարմիր գնդիկների ծնւավորման համար, եւ մոտ 800 մգ կալցիում, որը ոսկրային համակարգի ամրապնդման կարեւոր գործոն է: Մինչդեռ հազը եւ հացամթերքները շատ աղքատ են այդ տարրերով [2,5]:

Կախված մարդու տարիքից, առողջական վիճակից, աշխատանքի բնույթից ու ֆիզիկական ծանրաբեռնվածությունից օրվա պահանջը ոչ միայն կալորիաների, այլ նաեւ վերը թվարկած այլ համվելալ տարրերի նկատմամբ կարող է տարբեր լինել: Մառուռ սննդամթերքն ամսին ժամանակակից ուսմունքը բուրդ տեսակի մրգերը ու բանջարեղենը դիտում է որսն կենսաբաղադրանք անհրաժեշտ մթերքներ, շնորհիվ նրա, որ այդ մթերքներն են հանդիսանում վիտամինների, հանրային տարրերի, օրգանական թթուների, բուրավետ նյութերի (համ ու հոտ (տամաքավորող), դուրամարտ ամիսաթերի (գլյուկոզա, ֆրուկտոզա), զանազան ֆենոլների (ղաբադանյութեր, ներկանյութեր, եւ այլն) հիմնական աղբյուրը: Դրանից ելնելով իր ժամանակին հորիզոնային Միությունական բժշկական գիտությունների ակադեմիան սահմանել է մեկ շնչի հաշվով այդ մթերքների տարրական անհրաժեշտ ծավալները՝ ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված վիճակներում: Այն է. կարտոֆիլ՝ 97 կգ, բանջարեղեն (տարբեր տեսակների)՝ 146 կգ, մրգեր եւ հատապտուղներ՝ 113 կգ եւ այլն [3]:

Իհարկե՝ հացի ու ձավարեղենի մեջ հանրային սի քանի անհրաժեշտ տարրեր ավելի շատ կան, քան մրգերի ու բանջարեղենի մեջ, սակայն նրանք ավելի հեշտ յուրացվող ձևով են հանդես գալիս հենց մրգերում ու բանջարեղենում: Բացի այդ մրգերը եւ բանջարեղենը հարուստ են սի շարք միկրոտարրերով (օրգանիզմի կողմից անհշտ քանակով պահանջվող, բայց խիստ կարեւոր նշանակություն ունեցող), որոնք բազակայում են այլ մթերքների մեջ:

Ի տարբերություն մսամթերքների ու հացամթերքների, հանրային տարրերի մեծ մասը մրգերի ու բանջարեղենի մեջ ներկայացված են հիմնային աղերի տեսքով, որն անչափ կարեւոր է արյան հիմնային ռեակցիայի պահպանման համար: Հանրային նյութերի ընդհանուր պարունակությունը մրգերում ու բանջարեղենում կազմում է 0,2-1,5 % (նրանց կշիռը): Ամենից հարուստ են սպանախը, կանաչ դոքը, կաղամբի տարբեր տեսակները եւ այլն [4]: Մոխրային տարրերի շարքում մրգերում ու բանջարեղենում ամենից մեծ չափով պարունակվում է կալիումը: Կալցիումը եւս բավարար չափով առկա է, մինչդեռ նրկաթը պտուղներում ներկայացված է 0,5-1,4 % -ի սահմաններում: Արկաթ ամենից շատ կա խնձորի (1,2 %), տանձի (1,0 %), կարմիր հաղարջի (1,4 %) մեջ:

Այսպիսով, եթե մարդը քաղցը հագեցնելու համար ամեն օր կալորիական սնունդ է ընդունում սպիտակուցների, ածխաջրերի, ճարպերի ձևով, ապա ամեն օր կարիք ունի նաեւ վիտամինների, օրգանական թթուների, հանրային տարրերի եւ այլ նյութերի ներկոսի, որոնց պակասը առաջ է բերում հիվանդագիյ պրոցեսներ, երեխաների ոչ նորմալ աճ, աշխատունակության անկում եւ այլ բացասական երևույթներ:

Յանկայի է, որպեսզի մրգերի, հատապտուղների, բանջարեղենի, կենդանական թարմ մթերքների օգտագործումը հնարավորինս կատարվի տարվա բոլոր եղանակներին: Դա անհրաժեշտ է, որպեսզի օրգանիզմը առաջին հերթին վիտամինային քաղց չունենա, հակառակ դեպքում տեղի են ունենում նյութափոխանակության խախտումներ, իմունիտետի թուլացում կամ զանազան հիվանդությունների նկատմամբ օրգանիզմի դիմադրողականության անկում՝ իր բացասական հետեւեանքներով:

Ամփոփում

Առողջ կամ լիարժեք սնունդը ոչ միայն առավելապես ածխաջրերով հարուստ հացի, մակարոնեղենի, ձավարեղենի, կարտոֆիլի ընդունումով պահանջվող կալորիաների օրական նորմային պահովումն է, այլ նաեւ սի շարք հավելյալ, բայց առողջ օրգանիզմի համար անհրաժեշտ սպիտակուցների, անփոխարինելի ամինաթթուների, վիտամինների, հանրային տարրերի, օրգանական թթուների, համ ու բուրմունք պարունակվող այլ սիագությունների որոշակի քանակի ամենօրյա ընդունումը, կենդանական ծագման մթերքների եւ հատկապես բանջարեղենի ու մրգերի հետ, տարվա բոլոր եղանակներին:

Резюме

Здоровое или полноценное питание-это не только необходимое каждому взрослому человеку количество калорий, которое легко складывается за счет богатых углеводами хлебобулочных изделий, крупы и картофеля, а также ежедневный прием ряда дополнительных и важнейших компонентов питания, как белки, незаменимые аминокислоты, витамины, минеральные вещества, органические кислоты и другие, придающие вкус и аромат, соединения, источниками которых являются продукты животного происхождения и, особенно, свежие овощи и фрукты.

Գրականություն

1. Гурвич М.М., гл. Здоровье, Март, 2000г.
2. Крестович В.Л., Биохимия зерна и хлеба. В кн. "Техническая биохимия", М., Высшая школа, 1973, с. 19-115.
3. Луковникова Г.А., Химический состав продуктовых органов овощных, бахчевых культур и шампиньонов. В кн. "Справочник по овощеводству". Л. Колос. 1982, с. 71-79.
4. Метлицкий Л.В., Биохимия плодов и овощей. В кн. "Техническая биохимия", М., Высшая школа, 1973, с 116-154.
5. Самсонов М.М., Сильные и твердые пшеницы СССР. М. Колос, 1967.

ԱրՊՀ, կենսաբանության ամբիոն

ԱԿԱՆՁԵՆ ԿԱՍ ՍՊԻՏԱԼԱԺՈՐ ՍՊԻՏԱԿԱՏԱՄԱՆԵՐԻ (CROCIDURA LEUCODON HERMANN, 1780) ՏԱՐԱՇԼԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՆ ԼՂՀ ՖԱՈՒՆԱՅՈՒՆ

Վ.Տ. Հայրապետյան

Աշխատանքում քննարկվում է *Crocidura leucodon*-ի էկոլոգիային և կենսաբանությանն առնչվող մի շարք հարցեր:

Միջատակերների կարգը կաթնասունների դասի ամենահինագույն խմբերից է, որոնք ծագել են մոտ 150 միլիոն տարի առաջ (8): Այս կարգն ունի տարածման լայն արեալ, բացառությամբ Ավստրալիայի, Հարավային Ամերիկայի մեծ մասի և Անտարկտիկայի (11):

Կաթնասունների դասի միջատակերների կարգի տնտեսական նշանակությունն այդքան շոշափելի չէ, սակայն մի շարք տեսակներ, այդ թվում և բնութագրվողը, մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը և անտառատնտեսությանը՝ սնվելով վնասակար միջատներով: Կարգի առանձին տեսակներ օգտագործվում են մարդու սննդաբաժնում (ոգնիներ):

Անդրկովկասի կաթնասունների ֆաունայի ուսումնասիրությունները սկսվել են XIX դարի սկզբներից և շարունակվում են առայսօր, բայց որքան էլ դա անհավանական թվա, չկան վերջնագրված տվյալներ Անդրկովկասի, մասնավորապես Արցախի կաթնասունների ֆաունայի վերաբերյալ: Այս տարածաշրջանում միջատակերների կարգի ուսումնասիրություններով զբաղվող մի շարք գիտնականների (4, 5, 7, 10) տվյալներ ֆորագնետար են: Այս առումով հատկանշական է հատկապես բնութագրվող տեսակը:

Արցախի կենդանական աշխարհում կարգի որոշ տեսակների տարածման արեալների բազմացման, աճի, զարգացման և կենսաբանական մի շարք առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների կարելի է հանդիպել Հայրապետյանի, Յավրույանի, Գրքարյանի (1, 2, 3) աշխատություններում:

Որպես մեր հետազոտման օբյեկտ ենք ընտրել միջատակերների (Insectivora) կարգի, գետնափորների (Soricidae) ընտանիքի, սպիտակատամների (*Crocidura*) գեղի ականջեղ կամ սպիտակափոր սպիտակատամ (*Crocidura leucodon*) տեսակը (նկ. 1):

Աշխատանքի համար որպես նյութ է հանդիսացել 2006-2007թթ. «Ասկերանի,



Նկար 1

Մարտակերտի, Մարտունու և Հաղուրի շրջանների ստացիոնարներում (քարտեզ 1) կատարած դաշտային հավաքը: Մեր կողմից հետազոտվել են նշված տեսակին պատկանող 25 (12♂ 13♀) առանձնյակներ: Կենդանիների որսը կատարել ենք կենդանորս և աղեղնածև թակարդներով, առանձին դեպքերում օգտագործել ենք պլաստմասե շշեր, որոնք տեղադրել ենք նախօրոք փորված փոսերում: Այս մեթոդը կիրառելի է միայն միզազգիղ կենդանիների

նկատմամբ, որոնք իրանականում սեփական որսատարածք չունեցող կենդանիներն են:

Կենդանիների տեսակային կազմը որոշելու համար օգտագործել ենք որոշիչներ (3, 6): Մորֆոմետրիկ չափումները կատարել ենք չափածոցով և օգտագործել հետևյալ հապափումները. ՄԵ-մարմնի երկարություն, ՊԵ- աղյի երկարություն, Հթե- հետին թաթի երկարություն, ԳԵ- գլխի երկարություն, ԳԼԵ- զանգի կոնդիլոբազալ երկարություն, ԱԼԼ- ականջի լայնություն (աղյուսակ 1): Տվյալների մշակումները իրականացրել ենք կենդանաբանության մեջ կիրառվող կենսաչափական մեթոդներով (9): Կենդանիների էկոլոգիական առանձնահատկություններին

ուումնասիրումը կատարել ենք կենդանաբանության մեջ ընդունված մեթոդներով: Այս գազանիկներն ունեն միջին չափեր (աղյուսակ 1):

Սպիտակափոր սպիտակատառիկ - *Crociodura leucodon* մորֆոմետրիկ չափումները

Աղյուսակ 1

	n	min-max	M	δ°	m'	Cv	t_{95}	p
Մե	12♂	5-7	5,9	0,58	0,16	9,8	1,6	>90
	13♀	4-6	5	0,63	0,17	12,6		
Պե	12♂	3-4	2,6	0,9	0,26	34,6	0	0
	13♀	3-4	2,6	0,71	0,2	27,3		
Քն	12♂	1,2-1,7	1,4	0,26	0,07	18,6	0,53	>90
	13♀	1,2-1,8	1,6	0,27	0,075	16,9		
Գե	12♂	1,8-2	1,8	0,1	0,03	5,5	0	0
	13♀	1,8-2	1,8	0,1	0,03	5,5		
Գկե	3♂	0,8-1	0,9	0,1	0,25	11,1	0	0
	2♀	0,8-1	0,9	0,1	0,25	11,1		
Ալլ	12♂	0,7-1	0,8	0,12	0,03	15	0	0
	13♀	0,7-1	0,8	0,1	0,03	12,5		
Քաշը	12♂	5-6	5,4	0,4	0,11	7,4	0	0
	13♀	5-6	5,4	0,4	0,11	7,4		

Արտաքինից մկնամման են, բայց ունեն կարճ և համեմատաբար հաստ պոչ, որը ծածկված է կարճ մազերով և երկար, նոսր, խոզաններով: Մուրթը կարճեցված է և ավարտվում է շարժուն կնճիթով: Բթոսկրն ունի կողքնթացություն: Գլուխն զանգվածեղ է և լայն: Ականջները խոշոր են և զգալիորեն դուրս են ցցվում սազածածկույթից: Ականջների ստորին եզրում կա դնչիկ ներս և վերև թեքված մաշկային ծայր: Ստամոնների պսակները սպիտակ են:

Մազածածկույթը մեջքի հատվածում և կողքերին սևագորշավուն են, շիկավուն բծերով, որովայնի հատվածը՝ սպիտակ: Գույների միջև եզրագիծը խիստ արտահայտված է:

Արջայի (Ղարաբաղի) ֆաունայում այս կենդանիները տարածված են Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հաղորթի շրջանների տարբեր լանդշաֆտային գոտիներում (քարտեզ 1): Սակայն գերադասում են լեռնատափաստանային, մերձանտառային գոտիները, ծ.մ 800-1850 մ բարձրությունները, այգիները, այսինքն որոնող հարուստ է լեռնամոֆաունան:

Մենդային բաժնում անողնաշարավորներից գերակշռում են միջատները, միջատների թրթուրները, սարդակներակեր, տզեր, անձրևավորողներ, իսկ ողնաշարավորներից՝ գորտերի և սողունների ծագերը: Մեր կողմից պարզվել է, որ կարծրաշենավորներից կերաբաժնում ընդգրկված է այլաբզեղ, մայիսյան բզեղ, հավասարաթևավորներից՝ ցիկադները և այլն:

Սպիտակափոր սպիտակատամները, ինչպես գետնավորների ընտանիքի մյուս ներկայացուցիչները, սեփական բներ չեն փորում, զբաղեցնում են հիմնականում կրծողների լքված բները, թաքնվում են քարերի տակ, ծառերի հարթարմատային անցքերում: Վարում են գիշերային կենսակերպ, հազվագյուտ դեպքերում կարող են հանդիպել օրվա լուսավոր ժամերին: Մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ այս գազանիկներն ամառային շրջանում ունենում են ակտիվության մի քանի տիպեր՝ ուշ մթնշաղի, մինչև գիշերվա առաջին կեսի և գիշերվա երկրորդ կեսի: Ձմեռային շրջանում, տաք եղանակներին նկատվում է երեկոյան ակտիվություն, իսկ սառնամանիքների ժամանակ ինչպես երեկոյան, այնպես էլ գիշերային ակտիվություն չի արձանագրվել:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այս գազանիկների բազմացումը: Սպիտակափոր սպիտակատամների հոգիությունը տևում է 28-30 օր: Տարվա մեջ ունենում են մեկ կամ երկու ծին: Մենդարեկությունից առաջ հոգատար մայրերը կատուցում են ներքին խոռոչով գնդաձև բներ, որտեղ ծննդաբերում են 5-8 մեղկ, կույր և անօգնական ծագուկներ: Զագուկների կյանքի 12-13-րդ օրը բացվում են աչքերը, իսկ 15-16-րդ օրը՝ մազածածկվում են: Մայրը ծագուկներին կաթով կերակրում է 18-20 օր: Իսկապահայի ավարտից 2-3 օր առաջ ծագուկները ինքնուրույն սկսում են հավաքել սննդի մնացորդները, որոնք մայրը բերել է թույնը: Հղիության ավարտին և լակտացիայի ընթացքում մայրը բնի սնու միջատներից պաշար է կուտակում, որոնց անշարժացնում է միջատի կրծքային հատվածը կրծոտելով և դրանք իրենց «թաքնությունը» պահում են մինչև մեկ օր, որից


հետո մայրերը կամ հասուն ծագերը ուտում են. 15-16 օրական ծագուկները շարժման ընթացքում ամուր կծում են իրար վերադրային հատվածից և առաջացնում այսպես կոչված «թարավաններ»:

«[տանգի դեպքում մայրն առանց երկուդի պաշտպանում է ծագուկներին, տարօրինակ ծվծվոցով վախ առաջացնելով՝ հարձակվում քնին սոտեցող կենդանու վրա: Ճագուկները մոր խնամակալության տակ մնում են մոտ մեկ ամիս:

Սպիտակափոր սպիտակատամների մոտ մագափոխանակությունը տարվա մեջ կատարվում է, երկու անգամ՝ զարնաըն և աշնանը:

[ՀՀ ֆաունայում այս կենդանիները բնաբնակ են և նրանք են պահպանության:

Քարտեզ 1



● Սպիտակափոր սպիտակատամի տարածման արեալները

Ամփոփում

Միջատակները, լինելով հնագույն կաթնասուններից մեկը, որքան էլ դա անհավանական թվա, և անդրկովկասյան, և արցախյան ֆաունայում մնում են թույլ ուսումնասիրված կարգ:

Այդ պատճառով սովյալ կարգից որպես հետազոտման օբյեկտ. ընտրել ենք պահպանության կարիք ունեցող սպիտակափոր սպիտակատամը:

Արցախի տարածքում կատարված հետազոտությունների արդյունքում պարզել ենք այս տեսակի տարածվածության, էկոլոգիայի և կենսաբանությանը վերաբերող որոշ հարցեր:

Резюме

Насекомоядные, являясь одним из древних млекопитающих, как это ни парадоксально, и в закавказской, и в арцахской фауне остаются слабо изученным отрядом.

Поэтому из данного отряда в качестве объекта исследования была выбрана нуждающаяся в охране белозубка белобрюхая..

По результатам исследований, проведенных на территории Арцаха, были выяснены некоторые вопросы, касающиеся экологии, биологии и распространения данного вида.

Գրականություն

1. Հայրապետյան Վ. Տ., ԼՂՀ միջատակներին (Insectivora) էկոլոգիան և մակաբույծները// ԱրՊՀ, գիտ. տեղ., Ստեփանակերտ, 1(4), 2001:
2. Յավրույան Է. Գ., Հայրապետյան Վ. Տ., Գլարյան Ն. Վ., Հայաստանի և Արցախի կաթնասունների մակաբույծները (հաղորդում I, ողնիներ) //, ԳՊՀ-ի կոնֆերանս, Գավառ, 2002:
3. Յավրույան Է. Գ., Հայրապետյան Վ. Տ.-Ղարաբաղի վայրի կաթնասունները (միջատակներ, ձեռաթևավորներ, կրծողներ) //, Ստեփանակերտ, «Դիզալ պլյուս» 2003:
4. Даль С.К., Насекомоядные и рукокрылые Армянской ССР и Нахичеванской АССР (данные по распространению, систематике и биологии)//-Зоол. сб. Т 2, Ереван, 1940.
5. Даль С.К., Животный мир Армянской ССР//Изд. Ан Арм ССР, Т 1, 1954.
6. Кузнецов Б.А.- Определитель позвоночных животных фауны СССР //, Ч. 3, млекопитающие. М., Просвещение, 1975.
7. Огнев С.И., Звери СССР и прилежащих стран (Т.1, звери Восточной Европы и Северной Азии), М. Л., 1928.
8. Павлинов И. Я., Млекопитающие//, ч.1.2. Жизнь животных. Природа России, М.: Астрель, 1999.
9. Папегелева И. Ю.- Математические методы в зоологии// Воронеж, 2003.
10. Сатунин К.А – Млекопитающие Кавказского края// Труды Зап. Кавказа, музея, 1915, серия N 1.
11. Соколов В.Е. Систематика млекопитающих//, изд.Высшая школа, М.,1973

ԱրՊՀ, կենսաբանության ամբիոն

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՄԻՈԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՏԻՎ ԶԱՐԳԱՏՈՒՄԸ ՈՐՈՇԱՊԱՆ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՊԱՆՈՒՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՈԹՅՈՒՆ

Հ. Ի. Գրիգորյան

Պաշտպանողականությունը որպես գաղափարաբանական հոսանք Ռուսաստանի հասարակական կյանք մուտք գործեց XIX դարի առաջին կեսին՝ Նիկոլայ I-ի կառավարման տարիներին: Առաջին անգամ միջնադարյան ժամանակներից սկսած, Նիկոլայ I-ը փորձեց հենվել ռուսական ավանդական իրողությունների վրա: Ժողովուրդը սկսեց դիտվել որպես ինքնավարական կարգի հենարան:

Յրանսիական Մեծ հեղափոխության ժամանակաշրջանից սկսած մինչ այժմ արևմտյան քաղաքակրթություն կրող երկրներում գործում են գաղափարական երեք հիմնական հոսանքներ լիբերալիզմ (ազատականություն), կոնսերվատիզմ (պահպանողականություն) և սոցիալիզմ: Այս հոսանքներն անգամ ավելի քան 200 տարիների ընթացքում եղել և մնում են խիստ կենսունակ և արդիական: Սակայն XX դարի 70-ական թվականների վերջին արևմտյան զարգացած երկրներում մեծացավ հետաքրքրությունը պահպանողականների նկատմամբ: Պատճառը երկրորդ աշխարհամարտից հետո մեծ արագություն հավաքած գիտատեխնիկական առաջընթացն էր և հասարակության անհատականացումը, որոնք առաջ բերեցին մի շարք խնդիրներ. շրջակա միջավայրի աղտոտում, միջուկային վտանգ, բարդական և հոգեոր արժեքների արժեզրկում և այլն, որոնց համար մարդկությունը բավական թանկ էր վճարում: Այս պայմաններում արևմտյան զարգացած երկրներում մեծ արձագանք ստացավ պահպանողական գաղափարախոսությունը՝ որնոր որակներով: «Ժամանակակից պահպանողականության մեջ,- գրում է Ա.Լ.Բ. Միխրայսկը,- օրգանապես զուգակցված է երկու միտում. դասական լիբերալիզմից բխող առանձին անհատի նկատմամբ ունեցած հարգանքը և պահպանողականության համար ավանդական դարձած այնպիսի արժեքների պահպանում, ինչպիսիք են կրոնը, ընտանիքը, օրենքը, կարգապահությունը և այլն» [1]:

Ռուսաստանում կրկին պահպանողական գաղափարախոսության նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ XX դարի 90-ական թթ.: ԽՍՀՄ փլուզումից հետո իշխանության եկան լիբերալները, որոնց ազդեցության կառավարումը քայքայեց Ռուսաստանի գրեթե ողջ տնտեսությունը, երկիրը կուսակնց հսկայական պարտքեր, լիբերալիզմի և դեմոկրատիայի անվան տակ մեծ չափերի հասավ պետական թալանը, նոր ձևավորվող արժեքային համակարգում աստիճանաբար վերահսում էր կապը անցյալի հետ, գլուխ էին քարծրացնում անփառալուսական ուժերը, արտաքին քաղաքականությունում իր դիրքերն էր գիշում երբեմնի հզոր Ռուսաստանը և այլն: Հետխորհրդային հասարակության հեղինակությունը վայելող լիբերալները տարեցտարի հեղինակազրկվում էին և խորհրդարանական յուրաքանչյուր ընտրության ժամանակ նվազեցնում տեղերը Պետական Դումայում: Իսկ 2003թ. դեկտեմբերի 7-ի ընտրություններում նույնիսկ չեղաթափարկեցին 5%-ոց արգելքը՝ վերածվելով արտախորհրդարանական քաղաքական ուժի:

Լիբերալներին փոխարինելու եկան պահպանողականները, որոնց համար հենարան ծառայեց XIX դարակգրքին ձևավորված պահպանողական գաղափարախոսության հիմնադրույթներն ու թեզերը:

Յրանսիական Մեծ հեղափոխությունից հետո ինչպես ողջ եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում մեծ արձագանք գտան լիբերալ-հեղափոխական գաղափարները, որոնք առաջին անգամ Ռուսական կայսրությունում իրենց զգացնել տվեցին 1825թ. դեկտեմբերի 14-ին: Դեկտրիստների ապստամբությունը ճնշելուց հետո հրամայական էր դառնում պետական նոր գաղափարախոսության մշակումը, որը պետք է չախչախսեր ու վարկաբեկեր լիբերալ-

* Աստվանիշով նշված բոլոր աշխատանքները գեներվել են «Երիտասարդ գիտնականների II գիտաժողովում»: Մանիֆեստներ, տարի, 2007թ.:

ինքնակառավարչական գաղափարախոսությունը և գրելը այն հասարակության այնպիսի մասին: Վերևից հենց այսպիսի պատմվածքով հանդես եկավ պաշտոնական ժողովրդայնության տեսությունն իր ներք հիմնարարներով՝ ուղղափառություն, ինքնակալություն և ժողովրդայնություն, որի կենսախայրն էր 1833թ. ժողովրդական լուսավորության նախարար նշանակված Ա.Ս. Ուվարովը: Այն տասնամյակներ շարունակ ծառայեց որպես ինքնակալության պետական գաղափարախոսություն [2]՝ ձեռք բերելով ազգային-պահպանողական նշանակություն: 1833թ. Միկուլայ I-ին հղած նամակում Ուվարովը գրում է. «ձորին համոզմամբ և ջերմորեն հավատարմով իսկությանը, ժողովրդական երկրի պահպանողականներն են ուղղափառությունը, ինքնակալությունը և ժողովրդայնությունը՝ կազմելով մեր երկրի փրկության վերջին խաղիսյը: Դա մեր ուժի ճշմարիտ գրավականն ու հայրենիքի հզորությունն է» [3]: Այս գաղափարախոսությունը թափանցեց Ռուսաստանի հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները:

Պաշտոնական ժողովրդայնության տեսությունը դարձավ Ռուսաստանի պետական գաղափարախոսության հայեցակարգի հիմքը: Ա.Ս. Ուվարովը պաշտոնական գաղափարախոսությունը ձևակերպում էր հստակ. «Նոր սերնդին բուժել կուրությունից և չմտածված կրքից դեպի օտարը՝ տարածելով հարգանք դեպի հայրենականը» [4]: 1834թ. ռուսական օկրուգների խնամակալներին ուղղված շրջաբերականում հայտարարում է, որ այն պետք է ուղեկցույց հանդիսանա ժողովրդական կրթության, գիտության, գրականության, արվեստի, երիտասարդության դաստիարակության համար [5]:

«Ուվարովյան երրորդությունը» ռուսաստանցիների գիտակցության մեջ ավելի խորությամբ արմատավորելու համար զարկվան իրագործեց քաղաքական բոլոր միջոցների համընդհանուր հավաքագրում: Այս տեսությունն արմատավորվում էր ամենուրեք. գյուղական եկեղեցիներից մինչև մայրաքաղաքային համալսարաններ:

Պաշտոնական ժողովրդայնության տեսության կողմնակիցներինց Ռուսաստանում ձևավորվեց պահպանողական հոսանքը: Պետք է նկատել, որ պահպանողականները ոչ բոլոր հարցերում էին հանդես գալիս միասնական ճամբարով: Նյախեց մի մասը՝ Մ. Պոգոդին, Ն. Ռուստրյակով, Ա. Շիլյով, Օ. Սենկովսկի, Ն. Գրեչ, Ֆ. Բուկարին և այլք, դասական պահպանողականության կողմնակիցներ էին, իսկ մյուս մասը՝ XIX դարի 30-40 թ.թ. սահմանագծին հասարակական կյանք մուտք գործած սլավոնաֆիլները՝ Ա. Խոմյակով, Ի. և Պ. Կիրենսկի եղբայրներ, Ալեքսանդրների նշանավոր ընտանիք, Յու. Սամարին և այլք, լիբերալ-պահպանողական գաղափարների կողմնակիցներ էին:

Ա.Ս. Ուվարովի կողմից առաջ քաշված տեսությունը զազաթանակետին հասցրեց Ռուսաստան-Եվրոպա հակաթեզի գաղափարը, որն էլ դարձավ ռուս պահպանողականների հավատամքին առ այսօր: Այն գիտամարտերն հիմնավորելու և ժողովրդի մեջ տարածելու համար անհրաժեշտ էր նորովի ուսումնասիրել Ռուսաստանի պատմությունը հնագույն ժամանակներից և գուգահեռներ անցկացնել արևմտյան քաղաքակրթության հետ: Այս գաղափարների լուսաբանողն ու տարածողը դարձան Մ. Պոգոդինը և Ն. Ռուստրյակովը, որոնք նաև Ռուսաստանի պատմության դասագրքերի հիմնականներն էին:

XIX դարի 30-40թթ. ընթացքին Ռուսաստանի պատմության առանձին հարցերի շուրջ ծավալված սուր բանավեճերով, որոնք տեղի էին ունենում դասական պահպանողականների, սլավոնաֆիլների և լիբերալ հայացքների հետևող արևմտականների միջև: Ա.Ս. Դուրգինսկայան անդրադարձալով այս շրջանին գրում է. «Ժեմ բանավեճերը Ռուսաստանի պատմության վերաբերյալ, նրա փիլիսոփայական իմաստավորումը վկայում էին ռուսական ազգային ինքնագիտակցության աճի մասին» [6]: Սակայն 1848թ. Եվրոպայում տեղի ունեցած իրադարձություններից հետո, Նիկոլայ I-ը հրաժարվելով պաշտոնական գաղափարախոսությունից՝ անցավ կոչու քաղաքականության և ավարտվեց «Հրաշալի տասնամյակը»:

Անվերահասի իմ ուրիշ բանաստեղծության մեջ այն խոհն է արտահայտվում, թե սերը անխուսափելի գոյածն է։ Սիրո հիշողությամբ վարակված բանաստեղծը կարոտից երեքվող քայլերով անցնում է պոետո օրվա միջով՝ ուղեկից ունենալով սիրո պակասից խեղճության հերթափախակցումը։ «Աշուն։ Պոետո է օրը։ /Մարմինն ծարավ է։ /Որեմն գոյածն է, թրջվելը/

Ես ապրում եմ/ Հին օրերից մեկը/ Հիշողության սարդոստայնում/ Թափվելով, թրջվելով/ Պողոթն Լ. օրը/ Միգրանտ են ծառ ու տներենք: /Մեկը անձրեանոցի տակից/ Նրեի խորոս ինձ: / Նա չգիտի, որ ծառավ էլ իմ մարմինը: / Իսկ ես պատիվում/ Ու հանգստություն էլ քայլերս/ Որ տուն մտնելիս/ Բոլորը տեսնեն/ Իմ վարքի սովորական տարբերակը»:

«Տիրուհի-ին» բանաստեղծության մեջ առկա են կորցրած սիրո լուս ցայն ու ներքին հաշտության որոնումները: Սիրո կորստի հետ իմաստասիրաբար համակերպված բանաստեղծի սիրտը տրամաբանական այսպիսի երանգ է ստանում: «Ես իմ ապրած-չապրած կյանքում/ կորցրել եմ հույսեր, / Եւ դու՝ իմ կորած հույսերից մեկն ես...»:

Բայց հաշտությունը միայն գիտակցության մեջ է, իսկ երազգիտակցականում դեռ մնում է զավթ: Նրկատված այդ հոգեմիճակում երացում հայտնվում է աղչիկը, որ վարկերկման սիրտ բերկրանքը: Ինքնաբանագումից հետո ծնված խոհր հավաղրվում է երագից անբաժան խոհին: «Դու, ՏԻՌՈՒՀԻՍ/ Ինձ վերադարձիր/ իմ ապրած-չապրած կյանքում/ կորցրած հույսերից մեկը»:

Լ. Հակոբյանի սիրո բանաստեղծություններում պատկերային- խորքային համաձուլվածքով եւ խոհագգայական հասուն նրբերանգներով առանձնանում է «Ապրիլ» միտում Լին երկնքում» բանաստեղծությունը՝ նոր արվեստի մի ուրույն բեկոր: «Ապրիլ» միտում Լին երկնքում/ Փնտրվարյան ցուրտ գիշեր էր/ Իսկ բաղնջներում մեր սերն էր տարանում: / Սակայն մենք փորը էինք/ Շփոթվում էինք/ Եւ հեռու չէր նաեւ բաժանումը: Ողորդ թե մենք կարողանայինք/ Դեռ մի անգամ ետ բերել/ Այն լուսնյակ գիշերը/ Ամեն ինչ ստանալ: Հիշողության ընդերքում/ Եւ մի պառավ տատիկ/ Մեր հուշերն է վաղուց ավելի/ Այն փողոցի Իսկ գիշերային կատունները մոլտալով/ Լիալուսին են գլորում մայթերգով...»:

Լիալուսին այստեղ ավարտվող սիրո խորհրդանշն է, որը հանդես է գալիս նաեւ որիչ բանաստեղծության մեջ. «Ասում են / Լուսինը տասնհինգ օր հեռու/ Իր փայլը արցունք կորցնել է սկսում: / Ասա, սիրելիս/ Բանի օրակա էր/ Մեր սիրո լուսինը/ Նրա արդատացման չքացած այն երկնքից/ Որ իմն էր ու նաեւ թոնք»:

«Բնք» վերնագրված եւ «Այս, աղջկայր-դիցուհին» տողով սկսվող բանաստեղծությունների մեջ կին-գեղեցկություն-ները կերպավորվում է որպես պատկերավոր գինձորի առարկան իմաստավորող ոգեղեն ու: «Այս գիշեր դարձիր անթնություն», «Բնք» բանաստեղծության մեջ թախանձու-հրամայում է քնարական հերոսը, իսկ հասցող երգը կարդում ենք. «Այս, աղջկայր-դիցուհին, /Չի համբուրել ձեզից ոչ ոք / Տեղտու շուրթ խրամատում, / Չի ջերմացել սոսոցակալած օրերի մեջ/ Դեմքս երբեք ձեր տար չնչից: Ես անունն եմ կրել ինձ հետ/ Ու չեմ մացել լուսնի արծաթի հիշողությանը / ձրամատի գարկունքս թույլ սառնության մեջ»:

Սիրո շնչով իմաստավորվում ու մխիթարանք է ձեռք բերում անգամ մահը. «Այս աղջկայր-դիցուհին... / Դուք մարտերում նահատակված/ Հերոսների շիրիմներին/ Լացող լացող դ, լացող դ աչքեր...»:

Հայրենիքի համար մղվող պայքարի բովում, կյանքի ու մահվան խրամատների մեջ է ծնվեց Լ. Հակոբյանի հայրենասիրական երգը: Ծննդավայրի աշխարհագրական գագաղթությունը բանաստեղծի պոեզիայում ակունքավորվում-այրիվում է վանա ծանր Արցախ՝ պատերազմի ծանր ու անորոշ պահին ավարտվելով այսպիսի լավատեսությանը՝ «Հերանոսական վարդով ու բարով / Ես ջուր կլսեմ/ Ծովից իմ վանա.../ Իսկ դրա համար հարկավոր է նախ եւ առաջ ոգի. «Հայրենիք իմ/ քո առավոտվող օրվա ծայրերը/ ինձ վաթսմ տանում...»: Բայց նույն վանքի կամարների տակ քնարական հերոսը ոգու աչքերով տեսնում է այն անցյալը, որ ճակատագրականորեն պատկանել է միայն իր հայրենիքին: «Ես քո խաչքարերի/ կնճռոված հայազրներում/ կարդում եմ պատմությունը կրամիր/ որ լույ թուն է»: Այնտեղանդերծ. «Հայրենիք իմ, Արցախ» բանաստեղծության մեջ կրկին ցույց է գալիսի հույսը. «Բն երկնքում ամեն օր /հույսի աստղեր են ծնվում, /որոնց արծազանթն այստեղ /օրորոցներ են/ Դու՝ լեռնացող երագ/ կորստյան մոխիրներից կարկառված քարերը/ վիճակը կոչեր են/ որ ոգեղնյալում են կյանք...»: Իսկ «Գանձաաշար» բանաստեղծության մեջ հույսը արդեն վերածում է լուսավոր հավատամքի: «Ես իմ հավատի միջից / կարկառված ձեռքս հպում եմ քո գալիքին, / որ լուսնդեն թագ է»:

Խրամատային առաջնիք ծնունդ են «Արեւածագին խաղաղ էր օրը», «Գրուն», «Ագլամամարտ» եւ մի շարք որիչ բանաստեղծություններ, որ առկա է նաեւ գավթ մարդկանք

կյանքի կորստի ոնց են/ Մարդը Մահվան դնալի մանկուց հիշողության ու ոտնահետքերն թիկնում: ...Մայրերով/ Դառնալով/ Կալը Լ. Հակոբյանի գարգացման պոեզիա: Բայ պոեզիայի ինչ Մուրնը

Դրանք հասնանդհատ ինչ չգոյությունը պարբի իմ չնքվին»: Այսպիսի միայն թե ակնկալություն կյանքի որոնումներին ճակարակներն պոեմում մեքերանգավորելուան են տեղմահանդի: Լ. Հակոբյանի մտածողության մակդիրները մարմնին, ծրաղորներն, «Դուք տաղանդի նախասահման համար, չդա

1. «Ագլատ
2. Լ. Հակոբյան

Արդ, գրվ

կյանքի կորստի համար. «Տեսն' ի եր, արդյոք /Ո'նց է սպանում/ Մարդն իր նմանին/: Տեսն' ի եր՝ ոնց են/ Մարդուց վախենում/ Անտեր շները»:

Մահվան գավն ու կարտոը կյանքի հանդեպ բանաստեղծի հիշողությունը տանում են դեպի մանկության հետքերը: Այդպես էլ վերնագրված է բանաստեղծությունը՝ «Ելնիուշ»։ «Իմ հիշողության պարանները /ծգվում են այս ծյունոտ բլուրների վրայով/ ուր մանկությանս սոնահետքերն են կնքված/: Ահա այն ծառը, /որի վրա/ մեր պատրաստած ձնեմարդն էր թիկնում/: ...Տարօրինակ է, որ չկա Արոն/, ու նրա անգուսպ սուլոցը/ լոկ ցնորք է/: Ես այն օրերի քայլերով /դառնում եմ տուն՝/ տատիկ շնչառությամբ/ հալելու մատներիս սառույցը/»:

Կ. Հակոբյանի հայրենասիրական նրբը դեռ ինքնավերագոտմաների մեջ էր, հոգևոր օտարացման ճանապարհին պիտի հասունանար եւ իմաստնանար՝ դառնալով գտարյուն պոեզիա: Բայց բանաստեղծի կյանքի հետ անավարտ մնաց նաեւ նրա հայրենասիրական պոեզիայի ինքնակայացումը:

Նույնը չի կարելի ասել Կ. Հակոբյանի խոհական բանաստեղծությունների մասին: Դրանք հասուն ոգու ներքին մենախոսություններ են: Ինչն է գարմանայի. բանաստեղծն անընդհատ խոսում է անդրաշխարհային գոյության մասին, ոգու աչքերով կանխատեսում իր չգոյությունը երկրային կյանքում. «Ես վախենում եմ, /որ մի օր չլինեմ/, եւ օրս, /հաշմված օրս/ ավերվի իմ չգոյությունից...»: Լրամ՝ «Իմ գալիք օրվա կադապարը/ Մնում է անհայտության թվին»: Այսբանից հետո տեղի է ունենում բանաստեղծի ինքնահաշտեցումը մահվան հետ, միայն թե իր վախճանը նման լինի «աստղային մահվան՝ /հաջորդ օրը երեւալու/ ավելակությամբ/»:

Կյանքի ներդաշնակության պակասն է նաեւ, որ բանաստեղծին մղում է երկնային որոնումներին. «Տուր ինձ ապրելու/ մի այլ ձեւ/, դուրս մղիր ինձ/ քո մգլոտ երակի միջից/ ես ծախյորանքի համար եմ ծնվել»: Զգոհագող դժգոհությունը կյանքից «Գոյության պատրանք» պոեմում վերածվում է աղբյսի՝ ուղղված տիեզերքի տիրոջը. «Ծնորի արա, Տեր/, նրանցպիտիփոխ իմ ինքնության/ հիմնարարները շրջելու/, թե չէ, տարտամ այս քայլերով/ ուր կտանես տենչանքներիս/ շղթաները անդամալույծ, /եւ կամ ոնց կփարատես/ իմ մենությունը մահահղի/ Ծնորի արա, Տեր, /որ օրս այսպեւ/ չդառնա դագաղն/ իմ կորուստներին...»:

Կ. Հակոբյանը պատկերավորման իր ուրույն ոճն ունեցող բանաստեղծ է: Նրա մտածողության գեղարվեստականացման գործում կարեւոր դեր ունեն նաեւ անսովոր մակդիրները, համեմատությունները, փոխաբերությունները, ինչպես՝ լուսաշողերից հունցված մարմնին, ծրարված սեր, հանգերգող լույս, գիշերվա ափ, իմաստագրվված ծառեր, ծերացած աղոթքներ, երեկոն՝ զնդեցկագույն տիկնոջ պարանոցի զարդ եւ այլն:

«Գոյության պատրանք» ժողովածուն Կ. Հակոբյանի բանաստեղծական հասուն տաղանդի առաջին ճիշն է եւ, անշուշտ, վերջինը չէր լինի, եթե ճակատագիրն այլ կերպ նախասահմանվեր, եթե բանաստեղծը կյանքը չգոհաբերեր իր հայրենիքի հավերժության համար, չդառնար «գոյության պատրանք» այդ հավերժության անհուններում...

Իրականություն

1. «Ազատ Արցախ», թիվ 5, 1993:
2. Կ. Հակոբյան, «Նվիրում», Նր., 1997:

ԱրՊՀ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

2 (15), 2007

ՀՏԴ 07

Ժողովրդագրություն

ՏՆՈՒՆԵԿԱԿՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՆԻՔՆԵՐԸ *

Գ. Ս. Մարդյան

«Ազատության գինը հավերժական գոնությունն է»
(Թոմաս Մեյֆեր)

Պետության գործադիր, օրենսդիր, դատական մարմիններին հսկելու և նրանց կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ տեղեկատվության կարիք ունեն։ Եթե նրկի քաղաքացիները տեղյակ չեն հասարակությանն ազատության միջև տեղի ունեցող գործընթացներին, ապա նրանք ի գործու չեն կարող մասնակցություն ունենալ այդ գործերին։ Նրանք իրավունք ունեն ստանալ հասարակական հետաքրքրություններ կապված կամ իրենց անձնական շահերը շոշափող, ինչպես նաև պետական մարմինների գործողությունների մասին տեղեկություններ, տեղեկալի նախատեղյակ և ընդունված օրենքներին, կառավարության և տեղական ինքնակառավարման որոշումներին, նախագահի հրամանագրերին։ Նման տեղեկությունների իմացությամբ քաղաքացիները կարող են հավոր պատշաճի վերահսկողություն իրականացնել պետական իշխանության գործունեության վրա։ Պատահական չէ, որ մարդու իրավունքների միազգային հասարակական կազմակերպություն «Արտիկլ 19»-ը տեղեկատվությունը բնութագրել է որպես «Ժողովրդավարության թափանցիկ»։ Ժողովրդավարությունը և տեղեկատվության ազատությունը քայլում են համընթաց, և մեկը առանց մյուսի լինել չի կարող։

Տեղեկատվության ազատության ապահովումը չափազանց կարևոր է ժողովրդավարական հասարակության համար, երբ տեղեկատվության ազատության իրավունքը օրենսդրական գործակալ կիրառություն է գտնում։ Այս խնդրի գործնական իրականացման համար առաջնային կարևորություն ունի տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքը անվտանգորեն ինչպես նրանք սահմանադրությամբ, այնպես էլ առանձին իրավական փաստաթղթերով։ Համաշխարհային մասշտաբով տեղեկատվության ազատության մասին առաջին իրավական ակտն ընդունվել է Շվեդիայում 1766թ.։ Եվ առհասարակ, տեղեկատվության ազատության իրավունքի գործնական իրականացումն ապահովող տեղեկատվության ազատության մասին օրենքներ գոյություն ունեն ավելի քան երկու հարյուր տարի և դրանից միայն մի քանիսը քան տարուց ավելի կյանք ունեն։ 20-րդ դարավերջին և 21-րդ դարավերջին նկատվում է տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրական ակտեր, որը հեղինակ է ամբողջ եվրոպականը։ Աշխարհի բոլոր տարածաշրջանների երկրները ինտեգրվել են տեղեկատվության ազատության օրենսդրական քայլարշավին։ Մական տեղեկատվության ազատության դասական օրինակը ձևավորվել է Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագրում։ 1946թ. ՄԱԿ-ի որոշմամբ ընդունվել է հետմյալ պահանջը. «Տեղեկատվության ազատությունը մարդու՝ հիմնարար իրավունքներից է և մյուս բոլոր ազատություններն անկյունարարը։ Այն կենսական նշանակություն ունի աշխարհում խաղաղություն և առաջընթաց ապահովելու գանկացած յուր փորձի համար։ Պետությունների միջև փոխըմբռնումը և համագործակցությունը անհնար է առանց արդեն և առողջ հասարակական կարծիքի։ Տեղեկատվության ազատությունը ներառում է անարգել կերպով ինֆորմացիա հավաքելու, փոխանցելու, հրապարակելու իրավունքը այլուր և ամենուր»։ Իսկ ահա ԱՄՆ-ի զերազուր դատարանի դատավոր Լուիս Բրանդեն հետաքրքիր մեկնաբանություն է տվել. «Մի փոքր արևի լույսը լավագույն ակտահանումն է»։ Սա է թերևս պատճառը, որ ԱՄՆ-ի որոշ նահանգներում տեղեկատվության ազատության օրենքները պարզապես անվանվում են արևի լույսի օրենքներ։

* Առաջանիշով նշված բոլոր աշխատանքները գնկուցվել են «Երիտասարդ գիտնականների և գիտաժողովում»։ Ստոկհոլմներ, տարի, 2007թ.։

որովհետև այն թափանցում է իշխանական մուր միջանցքներ եւ կանխում կառավարության «մտք» գործողությունները:

Եվրոպական շատ պետություններ ընդօրինակել են տեղեկատվության ազատության փաստաթղթերի ներկայացված պայմանները, սկզբունքները եւ օգտագործել դրանք որպես ազգային օրենսդրական փաստաթղթերի հիմք: Որպես Եվրոսոցիոսի անդամ պետություն Հայաստանի Հանրապետությունը խոսքի եւ տեղեկատվության ազատության իրավունքները ամրագրել է թե՛ Սահմանադրության մեջ եւ թե՛ առանձին իրավական ակտերում: Ժողովրդավարական գործընթացներից ամսման չի մնացել Լեւոնային Ղարաբաղը: 2001թ. ԼՂՀ Ազգային Ժողովը կիրառում է Եվրոպայի խորհրդի աջակցությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունները: Հնարավոր տարտաքին աշխարհը դեռեւս չի ճանաչում ԼՂՀ-ի անկախությունը եւ որպես առանձին պետության գոյությունը, այնուամենայնիվ արցախյան իշխանությունները եւ հասարակականությունը գիտակցել են, որ անհրաժեշտ է ինտեգրվել ժողովրդավարական արժեքներին ու քաղաքակրթության հետքերով առաջնորդվել: Այդ նպատակին հասնելու ամենապատշաճ միջոցն էր 2006թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ Սահմանադրության ընդունումն է, որի 27-րդ հոդվածի առաջին մասը լայն երաշխավորություն է տալիս տեղեկատվության ազատության իրավունքի շրջանակներում. «Յուրաքանչյուր որ ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք, այդ թվում՝ խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության գանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից...»: Այսօր արդեն ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու փոփոխություններ են կատարվում թե՛ քաղաքացիական եւ քրեական օրենսգրքերում, թե՛ ՁԼՄ օրենսդրական փաստաթղթերում: Թվով է ուղղորդվել առաքելաբազմ կազմակերպչական մեջ: (Ներքոհիշյալ վերլուծությունների մեջ մեր դիտարկումները կատարել ենք մինչեւ 2007թ., քանի որ վերջնական տեսքի չեն բերվել ՁԼՄ գործունեությունը կարգավորող օրենքները):

Մինչեւ 2006թ. նոյեմբերը Լեւոնային Ղարաբաղում ընդունվել են ամենատարբեր բնագավառների վերաբերյալ բազմաթիվ օրենքներ: Այդ օրենքները կանոնակարգում են Ղարաբաղի քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Անցումային ժամանակաշրջանում գտնվող հասարակությունում, որտեղ դեռ նոր են կառուցվում քաղաքացիական ինստիտուտները, յուրաքանչյուր օրենք կարող է շրջանցվել եւ այլ կերպ լուծվել: Ինչի արդյունքում վիճող կողմերը կարող են դժգոհ լինել միասնացից: Նման իրավիճակ է տեղի ունեցել ԼՂՀ-ում հետաքաշողազգային տարիներին, երբ սպազմական դրության ռեժիմը թափաքաշար է անդադրադնել քաղաքացիների իրավունքների մի շարք սահմանափակումների վրա: Երկրի բարձրագույն ղեկավարությունը քանիցս հայտարարել է, որ «Ռազմական դրության ռեժիմի մասին» ԼՂՀ օրենքի՝ մարդկանց հիմնարար իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ պարունակող հոդվածների գործողությունները կայանալով են: Սակայն խնդիրը նրանում էր, որ այդ հայտարարությունները չէին ամրագրված կոնկրետ փաստաթղթով, ասել է թե՛ հիշյալ օրենքում համապատասխան փոփոխություններ չեն մտցվել: Համենայն դեպս, ԼՂՀ Ազգային Ժողովում դժվար էր հայտնաբերել համապատասխան փաստաթուղթ: Սա վտանգավոր էր այն իմաստով, որ իրենց համար ցանկացած հարմար պահի իշխանությունները կարող են օգտվել իբր թե՛ անորոշ հոդվածներում առկա սահմանափակումներից: Մի քանի տարի շարունակ Լեւոնային Ղարաբաղի լրագրողական հասարակությունը դիմել է իշխանություններին հետևյալ խնդրանքով՝ փաստաթղթում ամրագրել հիշյալ հոդվածներում գործողություն ժամանակավորապես ազատության մասին որոշումը:

Հիշեցնենք, որ 2002թ. սկսած արցախյան ՁԼՄ-ում շատ է խոսվել Լեւոնային Ղարաբաղում տեղեկատվության ստանալու հետ կապված հիմնախնդիրների մասին: Հրատարակվել է փաստերի մասին, որ քաղաքացիների՝ պետական մարմիններին հղված հարցազնույնները եւ ընդհանրապես մնացել են անպատասխան, որ մարդիկ պարզապես չգիտեն, որ պետական մարմիններից տեղեկություն ստանալը ոչ թե՛ լրագրողի մենաշնորհն է, այլ ցանկացած քաղաքացու իրավունքը: Ստեփանակերտի մամուլի ակումբի ուսումնասիրությունները դրա վառ վկայությունն են: Սրանց հաջորդեցին հետմյալ դեպքերը: Ստեփանակերտի մամուլի ակումբը մղել է մշակել «Տեղեկատվության ազատության մասին» օրինագիծ, որը «Արտիկ-19» միջազգային կազմակերպության հետ ձեռք է բերվել ազգայնավորվածության համաձայն եւ նվիրված փոփոխություն է անցնել: Ի դեպ, նշենք, որ Լեւոնային Ղարաբաղում «խոսքի ազատության միջոցով ժողովրդավարության արմատավորումը Հարավային Կովկասում» նախագծի շրջանակներում «Արտիկ-19» միջազգային կազմակերպությունը համագործակցում է

Ստեփանակերտի մամուլի ակումբի հետ և տեղեկատվության մատչելիության թնդանյով Ազգային տարածքում կազմակերպում են սեմինարներ, թրենինգներ, հանրադարձ, ստեղծագործություններ և լրացրողական ծրագրեր: Ընդ որում միջազգային կազմակերպության միավորվելու և համագործակցելու անհրաժեշտությունը բավականին հրապարակապես ամենակարևորը՝ ուսանելի: 2004թ. «Արտիկ 19» միջազգային կազմակերպության և Ստեփանակերտի մամուլի ակումբը ԼՂՀ դեպարտությանն է դիմել մի խնդրանքով՝ ընդունել օրենսդրական փաթեթում նախատեսվող ՏԱ օրենքը: Ի դեպ, այդ օրինագիծը Լոնդոնի միջազգային փորձագիտության է ենթարկվել: Փաստորեն օրենքի ընդունմամբ լրացվում է օրենսդրական դաշտը:

2004թ. հոկտեմբերին ԼՂՀ Ազգային ժողովը ընդունել է ՏԱ օրենքի նախագիծը և 2004թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել սույն օրենքի բոլոր հոդվածները: Օրենքի նախապատմությունը հայտնի է, որ օրինագծի նախաձեռնության համար հիմք է հանդիսացել Մաքդու հիմնադրադատությունների համակարգից բխող դրույթը, ըստ որի յուրաքանչյուր որ ունի տեղեկություններ փնտրելու, տասնայուրե տարածելու իրավունք է, միաժամանակ այն հանգամանք, որ 2001թ. սկսած՝ ԼՂՀ Ազգային ժողովն աշխատում էր Եվրոպայի խորհրդի առջև ՀՀ ստանդարտ պարտավորությունների շրջանակներում: Այդ առնչությամբ ԼՂՀ գործող օրենսդրության համապատասխանեցումը համաեվրոպական յափանիչներին դարձել էր անհրաժեշտություն: Այդպիսի քաղաքական նպատակը մտնում էր նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման համատեքստ: Թվում է՝ օրենքի նախագիծը վաղուց պետք է շրջանառության մեջ դրվեր, սակայն գուտ տեխնիկական բնույթի հանգամանքները խոչընդոտել են այդ հարցի քննարկմանը:

Օրինագծի համար հիմք է ծառայել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված համապատասխան օրենքը, որը գործում է ՀՀ-ում 2003թ.: Նշենք, որ ՀՀ-ում ԼՂՀ պարագայում նմանությունը կայանում էր նրանում, որ երկու պետություններում օրենքի ընդունման պայմանավորված էր երրորդն սահմանվում էր իրական ժողովրդավարական կառավարության ստեղծելու անկախությամբ: Հավաստի էր այն, որ ԼՂՀ օրենքում մտքորոշում հիմնարկապատկանությունները սահմանափակող որևէ փոփոխություն չի նախատեսվել: ԼՂՀ Ազգային ժողովի լրատվության հանձնաժողովը ըմբռնումով է վերաբերվել այդ խնդրին, մասնավորապես աշխատանքներ էին ընթանում հիմնական օրենքի մշակման ուղղությամբ:

«Հասարակությունը իրավունք ունի իմանալ՝ ինչ է անում իր կառավարությունը, ինչպես են գործում պաշտոնյաները, և ինչպես են ծախսվում հարկերից ստացված գումարները: Ընդունված ազատ հասարակության քաղաքացիներ՝ մենք պարտավոր ենք հարցեր տալ կառավարությանը»:

ԼՂՀ քաղաքացին համաձայն ՏԱ օրենքի իրավունք ունի իրեն հետաքրքրող տեղեկատվության համար (բացի օրենքով նախատեսվածներից) դիմել ցանկացած մարման Ավելին, տեղեկատվության տիրապետողները, յայսինքն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջեից ֆինանսավորվող կառույցները, ինչպես նաև հասարակական նշանակության կազմակերպությունները պարտավոր են տարեկան մեկ անգամ ՏԱԼԲ-ում տեղեկատվության հրապարակել իրենց աշխատանքի, բյուջեի, հաստիքագրության հասարակական միջոցառումների, քաղաքացիների ընդունելության ժամերի և անունների տեղեկատվությունների ցանկը, որոնց տնօրինում է տվյալ հիմնարկը, ինչպես նաև: դրանք քաղաքացիներին տրամադրելու կարգը, զանգված վճարի չափերը և մեթոդները:

Հարցադադում ուղարկող քաղաքացին պարտավոր չէ հիմնավորել իր հարցերը, բացառապես ե և ստորագրի հարցադադման տակ՝ բոլոր կանոնների համաձայն: Ի դեպ, մինչև այս օրենքի ընդունումը, Լեռնային Ղարաբաղում դիմումը ներկայացնելու պայմանները սահմանվում էին «Քաղաքացիների առաջարկություններ, դիմումներ, զանգատներ քննարկելու կարգի մասին» ԼՂՀ օրենքով: Վերջինիս համաձայն, քաղաքացու դիմումին ներկայացվող պահանջները բացառապես դեպքում են, երբ ստացված մարմինը կարող է ընդհանուրապես չպատասխանել նույնիսկ ոչնչացնել: Կամ, նույն օրենքի 9-րդ հոդվածը անհիմն ներկայաժամանակյա պահանջները և առաջարկում, անենք 15 օրվա ընթացքում պատասխանել դիմումին, իսկ եթե անհրաժեշտ է կատարել ստուգումներ՝ ապա մեկ ամիս ժամանակ է անհրաժեշտ: Եվ չնայած այս թվերը մեծությամբ, քաղաքացիների դիմումները մնում էին անպատասխան: Կամ միանգամայն անսպասելի է, երբ մերժելու դեպքում պաշտոնյայի պարտավորությունն է հիմնավորել մերժումը: Սա սեմանասամբ անիրական երևույթ էր Արցախում: Եվ առհասարակ, այս օրենքում յուրաքանչյուր ձեռնկերպում, ցանկացած դրույթ աննկատ էր մնում:

ՏԱ օրենքը վկայում է, որ պաշտոնյան կարող է հրաժարվել տեղեկատվություն տրամադրելուց, եթե մատնանշի այն իրական վնասը, որ կծագի զբաղմունքի տեղեկատվության

հրապարակման արդյունքներում: Կարևորը հետևյալն է՝ ի՞նչ կլինի, եթե տրամադրվի, քացախայտվի տեղեկությունը: Ի՞նչ վնաս կլինի: Կարծում ենք՝ սա է կարևորը:

Եւս մեկ կարեւոր հանգամանք: ՏԱ օրենքով ԼՂՀ քաղաքացիները իրավունք են ստանում պահանջել փաստաթղթերի պատճենները, եւ ոչ թէ միայն դրանցում պարունակվող տեղեկատվությունը: Իսկ եթե պաշտոնյան հրաժարվում է տեղեկություններ տալ, ապա օրենսդրությունը պետական պատժամիջոցներ է նախատեսում այդ պահանջները խախտելու համար:

Այսպիսով, օրենքի հիմնական առավելություններն են.

Առաջին հերթին, Արցախում քաղաքացիների տեղեկատվական իրավունքը ապահովում է այդ օրենքը, որը կարգավորում է տեղեկության տնօրինողից տեղեկատվություն ստանալու մատչելիությունը: Սույն օրենքը համապատասխանում է միջազգային չափանիշներին, այդ թվում՝ մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրին: Բացի դրանից հստակ որոշված են այն կառույցները, որոնք այս օրենքի կոնտենստում հանդիսանում են տեղեկատվության իշխողներ, որոնք մեծ պարտավորություններ են ստանձնել: Դրանք են՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող պաշտպանություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք»: Ուշադրության արժանի է նաեւ այն փաստը, որ առաջին անգամ հայկական օրենսդրության մեջ մտցվել է «հանրային նշանակության կազմակերպություն» հասկացությունը: Սույն հոդվածում վկայակոչվում են այն ոչ պետական կազմակերպությունները, որոնք հանդիսանալով շուկայում գերիշխող՝ ներկայացնում են հասարակական ծառայություններ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալ ապահովագրության, տրանսպորտի, կապի եւ կոմունալ ոլորտներում: Փորձագետների կարծիքով այս որոշումը բավականին արդարացի է եւ ներառում է այն ոլորտները, որոնք պարտավոր են մուտք ապահովել դեպի հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն:

Զնայած նրան, որ ՏԱ օրենքի ընդունումը մեծ առաջընթաց է, սակայն թերությունները եւս առկա են նույն օրենքում: Դրանց մեջ ոչ արդարացիված սահմանափակում է բանավոր հարցումի պատասխանը տրվելու ժամանակը: Այսինքն, պատասխանը տրվում է միայն այն դեպքում, եթե պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարեբրին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին սպառնացող վտանգը: Կամ շատ զգուշացնում են հաջորդ կետերը այն մասին, թե «անհրաժեշտ է, ճշտել տեղեկատվության տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը», կամ թե «անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների կարգը»: Սրանով եւ սահմանափակված է բանավոր հարցումի շրջանակը: Սակայն ընդգծենք, որ գործնականում, օրինակ, հաճախ է պատահում շտապ ստուգել կամ ստանալ որեւէ փաստ, թիվ կամ այլ տվյալներ: Պարզվում է, որ նման դեպքերում պետք է դիմել գրավոր ձևով եւ միայն 5 օր սպասելուց հետո ակնկալել ինչ-որ բան: Արդյունքում խոչընդոտներ են ստեղծվում լրագրողների օպերատիվ աշխատանքների համար: Կարծում ենք արդարացիված չէ այդ ժամկետը: Ավելացնենք, նույն հոդվածը սահմանում է. «Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում 5-օրյա ժամկետում»: Մի՞թե տեղեկատվություն տնօրինողին սահմանափակված է 5 օր՝ միայն ճշտելու հրապարակված լրատվամիջոցի տեղը կամ հրապարակման ժամկետը: Մտածելու տեղիք է տալիս այն, որ տեղեկատվության տրամադրման ժամկետը կարելի է տեղափոխել ծանրագույն դեպքում մեկ օրվա ինտերվալում:

Օրենքը նաեւ տեղեկատվության տրամադրման դեպքում նախատեսում է վճարների գանձում: Ըճար չի գանձվում միայն օրենքով սահմանված մի քանի դեպքերում:

Ուսումնասիրման ենթակա են նաեւ օրենքում առկա տեղեկատվության ազատության սահմանափակումները: Սովորաբար իշխանությունները սահմանափակում են այնպիսի տեղեկատվություն, որն իրենց կարծիքով է կարեւոր, որ հասարակությունը չիմանա: Որոշակի տեղեկատվություն սահմանափակելու կառավարության պարտականությունը չպետք է շփոթել հասարակության կամ լրատվամիջոցների ներկայացուցիչներին առանց օրինական հիմքի տեղեկատվությունը չտրամադրելու կառավարության ծնական պայմանականությունների հետ, մի երեւույթ, որ շատ հաճախ է պատահում լրագրողաշխան պրակտիկայում:

Հարկ ենք համարում փաստել, որ Լեռնային Ղարաբաղում տեղեկատվության մատչելիությունը սահմանափակվող այն գաղտնիքները, որոնք տեղ են գտել ՏԱ օրենքում, դրանց

կարգավորման շուրջ միայն ու միայն օրենքի սահմաններում պիտի լուծվի «կարելի-ի եւ «փ կարելի»-ի խնդիրը: Այսինքն, ԼՂՀ-ում պետք է ստեղծել պատասխանատու մարմիններ ու պատասխանատու մարդիկ, որոնց պիտի իրավունք վերապահվի՝ քննարկումներից հետո որոշել, թե՞ որ տեղեկատվություն է պարունակում պետական գաղտնիք, պետք է, հստակ սահմանել պետական գաղտնիքների գրանցը: Դա նորմալ պրակտիկա է, բոլոր երկրներում: ՀՀ պարագայում ՀՀ օրենսդրությամբ սահմանված են պետական գաղտնիքի հասկացությունը, նրա պահպանման պահանջները եւ պատասխանատվության հիմքերը: Անհրաժեշտ է ոչ թե ՀՀ պետական գաղտնիքների գրանցը կրկնօրինակել, այլ պետք է, ԼՂՀ պայմաններին համապատասխանեցնել, որպեսզի գերծ մնան չարաշահիլող բնագավառների մասին տեղեկությունների գաղտնիք պահելուց: Կան ներքաղաքական խնդիրներ, որոնց մասին Ղարաբաղի իշխանությունները պիտի խոսեն, տեղեկացնեն, ու դա չի վնասելու երկրի ընդհանուր եւ տնտեսական քաղաքականությանը: Այլ կան հարցեր, որոնց քարծրացումը իսկապես վնասում է պետական շինարարությանը: Այլ խնդիր է, որ սահմանափակումներում հաշվեկշիռը պետք է փորձել պահել: Այսինքն՝ Արցախի ժողովուրդը պետք է իմանա, թե ինչ է անում եւ ինչպես է աշխատում երկրի ղեկավարությունը տարբեր ոլորտներում, եւ միեւնոյն ժամանակ, չպիտի վտանգվի պետական շինարարության գաղափարը: Այսպիսով, անհրաժեշտ է միջազգային օրենքների հիման վրա եւ ինֆորմացիոն դոկտրինայի վրա խնդիրը տեղայնացնելով եւ ԼՂՀ ռեալ իրավիճակը հաշվի առնելով՝ ստեղծել եւ մշակել համապատասխան մարտավարություն:

2002-2005թթ. ԼՂՀ-ում օրենսդրորեն դրվել է իրավունքի սահմանագիծը, ասել է. թե՞ «կարող ես» ու «պարտավոր եմ» հասկացությունների սահմանագիծը: Եթե ԼՂՀ-ի ներսում ստեղծվում են նորմալ պայմաններ, հաղթահարել ներքին սպառնալիքները՝ ավելի հեշտ կլինի արտաքին տեղեկատվական պայքարում: Բաղաբացիական հասարակության ստեղծումը հնարավոր է միայն քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի գոյությունը:

Տև ԼՂՀ օրենքի ընդունումը կմա լոկ թղթերի վաթթեթ, եթե համարությունը տեղ չկանգնի տեղեկություն ստանալու իր իրավունքին, յոկունք չկանգնի լրագրողներին եւ լրատվամիջոցներին: Ղարաբաղի հասարակությունը պետք է չթողնի, որ իր միջոցով, իր թե՞ իս իսկ համար սահմանափակվեն այդ իրավունքը, յոթոնի, որ լրագրողների իրավունքները եւս սահմանափակվեն: Եթե հանրությունը զիջեց այս հարցում, ապա զիջելու է, մյուս բոլոր հարցերում, կորուսվելու է նորմալ երկրում նորմալ պայմաններով ապրելու իր երազանքը (վկա՝ շատ երկրների փորձը): Որովհետեւ անտեղյակ մարդուն հեշտ է խաբել, հեշտ է կառավարել: Մարդը իրավունք ունի իմանալ, թե ինչ է կատարվում իր երկրում, իմանալ ամբողջ ճշմարտությունը: Միայն այսպես կարող է զարաբազդին, անհատը վերածել քաղաքացու, իր երկրի տիրոջ: Այլ այս հարցում լրագրողն ու լրագրողական կազմակերպությունները նրա հավատարիս բարեկամներն են, այդ պահանջարկների ծնավորման գործում, անշուշտ, անմեղ ունեն:

Գրականություն

1. Պաշտոնական տեղեկագիր, ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երեւան, 2006:
2. Պաշտոնական տեղեկագիր, ԼՂՀ Սահմանադրություն, 2006:
3. Ը. Դոդդոյան, Սահմանադրությունը մամուլի ազատության նրաշխավոր, Երեւան, 2001:
4. Լ. Անդրեասյան, Տեղեկացնելու իրավունք, Տեղեկատվական իրավունք, Երեւան, 2003-2004:
5. «Բեմո», «Ազատ Արցախ», «Մտեփանակներ» թերթեր (2002-2006):
6. Իրավական ուղեցույց հեռարձակողների համար, Խոնդրոս, Երեւան, 2002-2004:
7. Տեղեկատվություն. մարդ, իրավունք, «Թիմ» ուսումնասիրությունների կենտրոն, Երեւան, 2005:
8. Ջանգվածային տեղեկատվության բնագավառը Նորոգայի խորհրդի փաստաթղթերում, ԵԱՀԿ, 2003:
9. Гармонизация законодательств стран южного Кавказа в области СМИ с европейскими стандартами, 2004.
10. Տեղեկատվություն, մարդ, իրավունք, Երեւան, 2005:

Երեւանի Պետական Համալսարանի Ժողովախոսակցի ֆակուլտետի Մամուլի տեսության եւ պատմության ամբիոն

Ն.ԶԱՐՅԱՆԻ ՀԱԿԱՆԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԵՆՍՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԺԵԶ՝*

Ա.վ. Բալասանյան

1941թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ուխտադրուժ կերպով ներխուժեց Արևմտական Միության: Խորհրդային երկրի կազմի մեջ մտնող ազգերը ոտքի ելան ապստամբելու իրենց ընդհանուր երկիրը: Եղբայրական ժողովուրդների ընտանիքում գնեքի դիմաց նաև հայ ժողովուրդը՝ ռազմաճակատ ուղարկելով իր 600 հազար քաջարի զավակներին, որոնցից 300 հազարը չկերպարձան տուն: Հայ քաջազունների հիշողության մեջ դեռևս թաքմ էին 1915թ-ի արյունոտ ցեղասպանությունը, որ իրականացրել էին երիտթուրքերը՝ Գերմանիայի կանցլեր Վիլհելմ Նրեյդոդի ինսցուրթամբ և թողութությամբ:

Պատերազմի հենց առաջին օրը հնչեց «Ամեն ինչ՝ ռազմաճակատի համար, ամեն ինչ՝ հաղթանակի համար» կոչը: Զինվորագրվեցին ոչ միայն մարդիկ, այլ գրականությունն ու արվեստը: Իր խոսքը պիտի ասեր նաև թատրոնը, և ասաց: Հայ մտավորականների հետ միասին դերասաններ լարեցին իրենց ուժերը, երիտասարդները մեկնեցին ռազմաճակատ, իսկ տարիքն առած արվեստագետները հատուկ բրիգադներ կազմած մեկնում էին ռազմաճակատ՝ զորամասեր, հոսպիտալներ, զինվորական հաճախատեղիներ՝ ասում իրենց ոգևորելու խոսքը և ապա ձեռնամուխ լինում հայրենասիրական պիեսների բեմադրությանը:

Ծանր էր կյանքը, դժվարություններն էլ՝ անթիվ: Ամեն դեպքում չէր մոռացվում թատրոնը, բեմարվեստի զարգացման պահանջը չէր շրջանցվում: Սակայն գոյություն ունեւր մի մեծ դժվարություն, որ կապված էր հակաֆաշիստական դրամատուրգիայի բազմակայության հետ: Հայտնի է, որ վտանգի հենց առաջին թուպներին բանաստեղծները կարող են անմիջապես սուել իրենց մարտական չափածո խոսքը: Սակայն արձակագիրների և դրամատուրգների համար ժամանակ է պետք: Այս անգամ էլ հայ գրողները գտան ելքը: Մտերմվեցին մեկ գործողությամբ պիեսներ, որոնցում ներկայացվում էին ռազմաճակատում մարտնչող ռազմիկների քայազործությունները՝ ֆաշիստական դեղին ժամառիտի դեմ: Իսկ 1941թ. վերջերին բեմադրության ներկայացվեցին առաջին հայրենասիրական դրամատիկական գործերը: Հիշտ է, գեղարվեստական առումով դրանք զերծ չէին թերություններից, սակայն անհրաժեշտ արձագանքն էին պատերազմական ժամանակաշրջանի: Այս առումով հաջողված փորձեր հանդիսացան Գեղամ Սարյանի «Անտառի խորքում», Ալեքսանդր Արաքսմանյանի «Անտառները շարժվում են», «Հրաբուխի վրա», Ա. Գուլպանի «Յառում», Տ. Հախումյանի «Հայրենիքի զավակը», Գ. Յաղչյանի «Պոյա» և այլ պիեսներ: Հիշտ է, Գ.Սունդուկյանի և Ա. Մռավյանի անվան թատրոններում դրանց բեմադրությունները ցանկալի հաջողություն չունեցան, սակայն հարթեցին այն ճանապարհը, որ արդյունաբեր եղավ այդ ժամանակահատվածի դրամատուրգիայի համար:

Ինչպես գրականության մյուս բնագավառներում, դրամատուրգիայի ապագան եղավ ևս հնչեց Ն.Զարյանի խոսքը: 1941թ. նոյեմբերի 7-ին կայացավ նրա «Լրեժ» չափածո դրամայի առաջին ներկայացումը: Բեմադրիչը տաղանդավոր ռեժիսոր Վարդան Աճեմյանն էր: Թատերադերձ Բ. Հարությունյանը գրում է. «Բեմադրիչ Վ.Աճեմյանը ուժեղացրել էր այդ ստեղծագործության հայրենասիրական հնչողությունը»:[1]

Բեմադրող ռեժիսորի մոտեցումը հասկանալի է: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, որ գրականության և արվեստի բոլոր տեսակներով և ձևերով պետք էր քաղաքացիների վրա ներգործել զաղափարապես: Ն.Զարյանի պոեզիան հազցված էր քաղաքացիական պայթույթով,

* Աստղանիշով նշված բոլոր տշխատանքները գեղուցվել են «Երիտասարդ գիտնականների II գիտնաժողովում»: Մոնիթինգներ, ապրիլ, 2007թ.:

գաղափարական նպատակասլացությամբ, այդպիսին էր նաև «վրեժ» դրաման: Անհրաժեշտ է նշել, որ այդ շրջանում Սոնդուկյանի անվան թատրոնը խաղացանկի մեջ մտցրել է Սիմոնովի «Ռուս մարդիկ», Լ. Լենոմի «Արշավանք», Ա. Կորնելյուկի «Բազմամասն ալիսաները»: Ռուս հեղինակներին հաջողվել էր նշված դրամաներում ստեղծել ինքնուրույն կերպարներ՝ օժտված գաղափարական ներգործության ազդեցիկ ուժով: Վերոնշյալ ալիսան գաղափարական հազնեցվածության և գեղարվեստական առանձնահատկությունների հիմք վրա գրականագետը ընդգծել է. «Բնութագրականն այն է, որ իրենց նախահիմքում պահպանելով ժանրային խիստ որոշակիությունը, պատերազմական տարիներ դրամատուրգիան դրա հետ մեկտեղ իր վրա կրել է գեղարվեստական տարբեր ազդեցությունը՝ հարստանալով գրական տարբեր տարրերով: Դրամատիկական լավագույնները կրթոտ հրապարակախոսությունը միախառնվել է ոգևորող քնարականությանը: Էպիկական լայն անդրադարձերը՝ խոր և նորը հոգեբանությամբ, առօրեական կենցաղային պատկերներով, բարձր ողբերգությամբ: Բայց նրանցում գլխավոր անփոփոխ հանդես է եկել հերոսական նախադրյալը, որի մեջ բացահայտվել է սովետական մարդու հոգեբանական վեժությունը, նրա անկոտրում քաջությունը սոցիալիստական հայրենիքի համար սրբապաշտարարում և միաժամանակ հասնելով համաժողովրդական խիզախության աննախադեպ չափերի: [2] Նշված առանձնահատկությունների հիման վրա էլ պետք է վերաարժեքավորել Ջալյանի «վրեժ» դրաման: Պիեսն առաջին անգամ տպագրվել է «Մովսեսյան գրականություն և արվեստ» ամսագրի 1941 թ. 9-12-րդ համարներում: Այն անմիջապես արժանացել է ակնաւոր մտավորականների ուշադրությանը: Վարպետը գրել է. «Այդ ալիսա պատերազմի յուրատեսակ խտացումն է, սինթեզը, մի կողմից ֆաշիստների գազանալի կերպարը, բռնությունների և կոդոպուտի, նրանց դաժան քաղաքականության, մյուս կողմից մեր զինվորների խիզախության, գաղափարական կայունության և համզված հայրենասիրության»: [3]

Ն. Ջալյանը պիեսում նկարագրում է սովետական ռազմագեղիների՝ լեյտենանտ Վառլո Գերասիմովի, սերժանտ Մուշեղ Արամյանի, բոլորույր Լարիսա Լիֆշիցի անձնուրույն հայրենասիրությունը: Հիտլերականների թիկունքում նրանք հանդես են գալիս որպես ժողովրդական վրիժառուներ, որի հետևանքով գերի են վերցվում և հարցաքննվում ֆաշիստական զինվորների կողմից: Եվ այնքանով, որքանով սովետական քաջազունները բնավորության գծերը բացահայտվում են հարցաքննության ժամանակ, գերելիքում է հրապարակախոսությունը, որի արդյունքում զգացվում է սխեմատիզմը:

Կառուցվածքով «վրեժ» հերոսական դրամա է: Խորհրդային տարիներին նման գործեր քիչ չեն ստեղծվել: Բաղադրացիական պատերազմի մասին գրված գործերից հայտնի են Ն. Պոզդոնիի «Հրացանավոր մարդը», Վ. Իվանովի «Ջրահագնաց «14-69», Լ. Սալինի «Ինտերվենցիա», Կ. Տրենիի «Լուրջով Յարովայա», Բ. Լավրենսի «Բակում» և այլ դրամաներ: Հերոսական դրամայի կարիքն զգացվեց նաև հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից: Հենց այդ հրամայականի ծնունդ հանդիսացավ Ն. Ջալյանի «վրեժ»-ը, որի մեջ ակադեմ է էպիկականի և լիրիկականի տարրերը: Դրամայի հիմքում կոնֆլիկտը 2 հալադիր ուժերի սովետական ռազմիկների և ֆաշիստական հրոսակների միջև: Ջալյանը ձգտել է ցույց տալ հերոսների թե՛ չափաքայացրին հարապատ մնալը, թե՛ անսասան բնավորությունը: Այստեղից էլ պիեսի մեջ ընդգծված պատմողական հրապարակախոսական տարրերը, որ, անշուշտ հեռու են դրամային ներկայացվող գեղարվեստական առանձնահատկություններից: Այդ մասին անվանի գրականագետ Ս. Աղաբաբյանը գրել է. «վրեժ» պիեսում երկու սկզբունքների բախումը ցույց տալու համար Ջալյանը հենց սկզբից իրեն դրել է անհարմար դրության մեջ՝ տեսարանների մեծ մասը կառուցելով գերիների հարցաքննության փաստի վրա, դրանով իսկ հերոսներին զրկելով գործելու, իրենց անհատականությունը բացահայտելու հնարավորությունից: Եվ ահա մարդկային կենդանի բնավորությունների փոխարեն մեջտեղ են բաշխվել «որոշ» տենդենցի արտահայտիչներ, անհատների փոխարեն բախման մեջ են մտնում սկզբունքները»: [4]

Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ թեկուզ պիեսում կերպարները գործողությունների ընթացքում չեն դրսևորում իրենց, այնուամենայնիվ նրանք իրականում հերթափոխության կրողներ են:

Հետաքրքիր ժամանակակա՛ն գունավորումներ ունեն Լարիսան և Մուշեղը, որոնք սահման աչքերին նայում են անվախ և արտահայտվում են իրենց անքիժ սիրո մասին: Գերասիմովը ցուցադրում է իր հնարամտությունը՝ թշնամու՛ն ծուղակի մեջ գցելու նպատակով, հաջող է պատկերված ֆաշիստ գնդապետ Շրեդերի կերպարը իր մարդասպանությամբ, խորամանկությամբ: Իհարկե, դրամայում կան անհաջող կերպարներ, ֆաշիստ կապիտան Ջրանց Կոլսը:

Իր թերություններով հանդերձ, «Վրեժ»-ը ուշագրավ երևույթ էր: Դա առաջին հերոսական, հակաֆաշիստական պիեսն էր, հայ ժողովրդի հերոսական պայքարի առաջին լուրջ առձագանքը:

Պիեսի բեմադրությունը ունեցել է հաջողություն և ներկայացվել է հայկական մի շարք պետական թատրոններում: Երևանում հրատարակվող «Կոմունիստ» թերթը գրել է, որ խանդիսատեսները մեծ խանդավառությամբ են ընդունել «Վրեժ»-ի բեմադրությունը: [5] Իսկ ներկայացման մեջ լեյտենանտ Գերասիմովի դերակատար Գուրգեն Ջանիբեկյանը, որ հանդես է եկել նաև Արթիկի շրջանային թատրոնում, պատմում է, որ գյուղերում և շրջանային կենտրոններում հանդիսատեսները ևս խանդավառությամբ էին ընդունում բեմադրությունը: [6] Ներկայացման հաջողությունը մեծապես կախված էր Վ. Աճեմյանի հմտությունից: Ինչպես հաստատում է գրականագետը. «Վ. Աճեմյանը «Վրեժ» դրամայի բեմադրությունը կառուցել էր որպես բացահայտ հրապարակախոսական հանդիսախաղ, դրամատիկական պոեմի յուրաքանչյուր գործողությունից առաջ բեմ էին դուրս գալիս գիմնաստյորկաներ հագած զինարկմետական ասմունքի վարպետները (նրանց թվում էր հայ նշանավոր դերասանուհի Արուս Ոսկանյանը) և «դաիլիճին» էին ուղղում պատերազմի թմայով գրված հեղինակի բանաստեղծությունները: Պիեսի բնաբանն ու սերժանտ Մուշեղ Արամյանի եզրափակիչ խոսքն էր «Գերմանիա» բանաստեղծության հետևյալ տողը. «Գերմանիա, ու՛ր ես գլորվում այդպես»: Ներկայացումն անցնում էր որպես Ն. Ջարյանի հակաֆաշիստական պոեզիայի յուրատեսակ թատերականացված երեկո»: [7]

«Վրեժ»պիեսի վերնագրով Ն. Ջարյանը 1942թ. տպագրել է ժողովածու. այդ առումով մեծանուն Մ. Մարյանը գրել է. «Ն. Ջարյանի պոեզիան կրթու է և կոչող»: «Վրեժ» խորագրով բանաստեղծությունների նոր գիրքը նվիրված է Հայրենական մեծ պատերազմին, որտեղ Ն.Ջարյանի ծայրը հնչում է որպես մեր Հայրենիքի քաղաքացու և բուցաշունչ հայրենասների ծայր»: [8]

«Վրեժ» դրամայի բեմադրության առթիվ քննադատական դիտողություններով հանդերձ իր դրական խոսքն է ասել նաև հայտնի գրականագետ Հ. Գյուլի-Քնյայանը: [9]

Գրականագետ Վ. Թերզիբաշյանը ընդգծել է. «Աճեմյանը կարողացել է հմտությամբ բեմականացնել այն, ստեղծելով դրամատիկական կոնֆլիկտը և աշխատելով հնարավոր լիահնչյունությամբ ընդգծել դրամատիկական պոեմի իդեական հաճեցվածությունը»:

«Վրեժ»-ի ներկայացման հաջողությանը մեծապես նպաստել են Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասանները: Մուշեղի դերում հանդես է եկել Գ. Խաժակյանը, Լարիսայի դերը մարմնավորել է Ա. Արազյանը, կապիտան Կոլսինը՝ Դ. Մալյանը, գնդապետ Շրեդերինը՝ Ա. Ավետիսյանը: Գ. Գաբրիելյանը կատարել է Վիլի Բոշի դերը, իսկ Գ. Աֆրիկյանը՝ Շուլցի:

«Վրեժ»-ից հետո Ջարյանը գրել է «Այրող դիմակ» պիեսը, որտեղ նկարագրված է ֆաշիստական հրոսակների թիկունքում սովետական պարտիզանների պայքարը: Պիեսը կառուցվածքային առումով զիջեց «Վրեժ»-ին, ուստի այդ բեմական կյանք չստացավ:

Իսկ «Ամենագազան» սատիրական պամֆլետը բեմադրվել է Երևանի տիկնիկային թատրոնում:

«Ամենագազան»-ի գործող անձերը կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են՝ առյուծը, վագրը, Նեֆոսի արքա Կոկորդիոսը, Կապիկը, Բորենին և այլն: Կենդանիների

երկխոսության միջոցով պարզվում է, որ Հիտլերը գազանների մեջ ամենազազանն է, որ
կրկնում ոչ մեկը չի ուզում նրան իր վանդակում տեղ տալ:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո անցել են
տասնամյակներ: Դժվար է գերազնահատել այդ պատերազմում խորհրդային ժողովուրդների
այդ թվում նաև հայ ժողովրդի նվաճած հաղթանակի նշանակությունը մարդկության
գոյատևման ճանապարհին: Ահա հենց այս առումով էլ պետք է անդրադառնա
գրականության և արվեստի կատարած դերի վերազնահատմանը: Այս առարկայում
Ն.Զարյանը առաջինն էր, որին պարտավորում ենք հիշել և միաժամանակ նրախտիրի մեջ
զգացումը փոխանցել գալիք սերունդներին:

Ծանոթագրություն

1. Բ. Հայրությունյան, Հայ սով. թատրոնը 1917-1977, Եր., 1986, էջ 188:
2. История русской сов. литературы, 40-80-е годы, подр. А.И. Метченко, М., 1983г., стр. 44.
3. Ավ. Իսահակյան, Ն. Զարյանի գրական, հասարակական գործունեության մասին, 1942, 26 հունվարի (Ն. Զարյանի արխիվից):
4. Ս. Աղաբաբյան, «Ն. Զարյան», Հայպետհրատ, 1954, էջ 167:
5. Տես «Коммунист» թերթի 1941, նոյեմբերի 16-ի համարը:
6. Տես «Սովետական Հայաստան», 1942, մարտի 6-ի համարը:
7. Ս. Դարոնյան, «Ն. Զարյան», Եր., 1982թ. էջ 222:
8. Զարյանի արխիվ:
9. Տես «Բնադատական հատվածներ», Եր., 1955, էջ 279:

Գրականություն

1. Զարյան Ն. «Մարտակոչ», Եր., 1941:
2. Զարյան Ն. «Վրեժ» (բանաստեղծություններ և պիեսներ), Եր., 1942:
3. Զարյան Ն. «Ձայն հայրենական» Եր., 1943:
4. Զարյան Ն. «Ծիկացած հոգով», Եր., 1943:
5. Զարյան Ն. «Հիտլերը գոռաբարկում», Եր., 1944:
6. Զարյան Ն. «Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 2», Եր., 1962:
7. Աղաբաբյան Ս. «Նաիրի Զարյան», Եր., 1954:
8. Ասատրյան Աս., «Հայրենիքի պաշտպանություն թեման շրանշանակի պոետ Ն. Զարյանի պոեզիայում», «Խորհրդային գրականություն» ամսագիր, 1938, N 8, 09:
9. Գյուլի-Քեվիսյան Հ., «Սովետական դրամատուրգիան Հայրենական պատերազմի օրերին», «Սովետական գրականություն և արվեստ», 1943, N1:
10. Թերզիբաշյան Վ. «Ն. Զարյանի «Վրեժ» դրամատուրգիական պոեմը», «Գրական թերթ», 1941, N 33:

ԱրՊՀ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

ՈԱԶՄԻՆԻԿ ԴԱՍԿՈՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԵԶԿՈՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *

Մ. Ս. Սահակյան, Զ. Վ. Բոչարյան

Յուրաքանչյուր սերունդ պարտավոր է իր որոնած ու նախասիրած կենսական, գեղագիտական կամուրջը հատել յուրովի, իր տպավորություններն ընթերցողին մատուցել նոր ինտրենսիտով ու թարմ պատկերներով: Այդ ուղիով մերթ համաշափ, մերթ վայրիվերումներով ձգվեց Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական որոնումների աշխարհը: Գույների ինքնատիպ թանաստեղծը /19-րդ դարում Արթուր Ռեմբոն հանգամանորեն անդրադարձավ գույներին և տոներեց գույների բանաստեղծական տեսությունը/ հաճախ է դիմում համեմատությունների և ավանայից արդեն համեմատվողն ավելի պատկերավոր է դառնում, ավելի խորն ու ռոմանտիկական է ըմբռնվում նրա սովորական հատկանիշը:

Ձյուններ սպիտակ շրթունքների պես
Խառն ինձ վրա.

Ծածկեցին մարմնիս վերքերը բոլոր
Եվ ինձ պատմեցին աստղերի մասին
Եվ կրկնում էին, թե աստղեր չկան,
Իսկ ես սովորված հիանում էի

Մուլթի մեջ հանգչող

Նյութն ց սպիտակ թրթռումներով: [1:16]

Այստեղ համեմատությունը կրկնակի բանաստեղծական է. Դավոյանը ձյուններ չի համեմատում սպիտակ գույն արտահայտող ինչ-որ սովորական առարկայի հետ, այլ շրթունքների միանմանակ ստեղծելով անհարկի բառակապակցություն, որն էլ ձյուններին հաղորդում է բազմիմաստություն. կարելի է ընկալել և՛ գեղեցիկ ձյուն, և փափուկ, և պատրանքային, և՛ անցողիկ:

Համեմատությունը չնայած շատ սովորական ու տարածված ոճական միջոց է, բայց Դավոյանի գրչի տակ դառնում է պատկերավոր, թալան ու վառ:

Եվ անցնում է այսպես պահը, ժամանակը:

Մարում է յուսինը:

Ձեռքերս դողում են քո թույլ հպումի գործությունից

Մշուշոտ տեղից մեջ վառվում են աչքերը

Ինչպես իր ծխով թողարկված կրակը: [2:22]

Առաջին հայացքից թվում է քառատողի երկտողների մեջ անջրպետ կա: Ակզբի երկու տողերում խոսվում է հաճելի, ժամանակի երևույթներից, իսկ հաջորդներում՝ ցավի /աչքերը վառվում են կրակի նման/, սակայն համեմատությունն այնպես է կառուցված, որ անգամ այդ ցավը զայրթալդիչ է. իր ծխով թողարկված կրակը միանգամից չի վառվում, այլ դանդաղ, հեղափառ նաև յուսավորելու նպատակով: Գեղեցիկի հակադրություն է մարմնավորում նաև հետևյալ քառատողը:

Հավատազրի դառնության միջով

Ես մարդուս անհուն ցավին եմ նայում,

Մայրամուտի պես հրահալ եմ ես

Եվ մայրամուտի նման անկայուն:

Նայում եմ. -սիրտս կծկվում է ափից,

Ապա ցրվում է արահետներում,

Եվ նա, որ ծեռքս թռնել էր ամուր,

* Առողանի, լավ մարդու ուղիատանքները գեղուցվել են «Արիստատրոս գիտականների II գիտաժողովում»: Մանիլանակներ, ամսիկ, 2007թ.:

Ինձ իր տրտմության ծաղիկն է բերում... [3:33]

Հավայությունը Ռ. Դավոյանի ստեղծագործություններում ինքնաբացահայտման բանը
Լ. որով հնարավոր է դառնում բացորոշել ապրումի ու գեղարվեստի խորությունը, չափը:

Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական պատկերներում կարևորվում է անձնավորումը և
պատկերների այն տարածքն է, որտեղ գրողի գրիչն այլևս խոչընդոտ հաղթահարելու խնդիր
Այս արտահայտչամիջոցով գրված բանաստեղծություններն ավելի շատ վերլիբր են.

Նորայրը ասում էր, որ դատարկ են դու, աշխարհ,

Եվ քո փորի մեջ են խրված քո հոտերը,

Իսկ քույրը կրկնում էր, թե գիժ է եղբայրը,

Ինչպես բոլոր-բոլոր պոետները: [4:42]

Բանաստեղծական իր ըմբռնումները Մ. Մեծարենցը բանաձևում է այսպես. «Բանաստեղծ
բնության ցուցացումը պետք է ըլլա, քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևների թրթռում
թռչունին դալայալը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանուն գոյությունը: Բանաստեղծի
ծայրը տիեզերական հարաբերության մի պարը պետք է ըլլա, բոլոր գոյներուն համադրական
թրթռումովը տրոփուն»: Մեծարենցյան բանաձևումը՝ տարբերվում է դավոյանականից, բայց
նույնն են բանաստեղծական ընկալումները.

Փողոցը նրա համար է,

Որ անցնեն տրամվայները՝

Իրենց կմախքացած կոնքերն օրորելով.

Եվ մերենաներն անցնեն, յիարկեն,

Նրբենն էլ մարդկանց տրորելով

կամ՝

Ձեր կուրծքը գալիս է, մայրեն,

Ձեր խեղճ կողերը փշրված են ու կարկատված նորից

Եվ ձեր սիրտը, որ խորն է, թաքնված

Հառաչում է, միշտ այդ անհայտ խորից

Եվ ձեր կուրծքը շատ գալիս է, մայրեն,

Ես այդ գգում եմ... [5:8]

Ինքնատիպ ու նորը են Ռազմիկ Դավոյանի մակդիրները: Նրանք բխում են
բանաստեղծության ընդհանուր ոգուց, հարստացնում տրամադրությունը, կատարյալ
մարմնավորում մտահղացումը. լայվարդ-լայգուր լեռներ, առապելապատ երկիր, գոյնգոյն
շշուկներ, ջրասույզ երկինք, անզուգական հույներ, անպաճույճ լուսին, թավշե շրթունքներ, մեթ
լույություն և այլն:

Ճերմակ գիշերներ, բարի գիշերներ

Գիշերներ վշտի, կարոտի, լացի

Իսկապես մի քիչ անկ ու անգո

Իսկապես լրիվ, լրիվ կանացի: [6:20]

Ռազմիկ Դավոյանը շարունակեց հայ պոեզիայի մեջ հազարամյա պատմություն ունեցող
նմանաձայնության ավանդը: Դավոյանի պոեզիայում ալիտերացիան ինքնաբերական չէ, և
համապատասխանում է նկարագրվող երևույթի բնույթին: Օրինակ՝ վահան Տեղյանը աշուն կամ
տներապոյի նկարագրելիս կուտակում է ս.ջ.շ հնչյունները, որոնք օգնում են լսելու թավառ
տերևների ու աշնան մեղմ հոսքի ձայնը: Իսկ Դավոյանի ջ, շ, ժ հնչյունները ավելի շատ տիպական
կոլորիտ են ստեղծում, որտեղ ավելի պարզ ու բանաստեղծական են կապե կծերն ու դավկացած
շրթունքները.

Գիշերվա մեջ կծերն իրար

Ծնչում են կապե խոսքեր,

Եվ կենդանի շշուկներից

Կապե շուրթերն են դավկանում: [7:37]

Լեզվառձեական առանձնահատկություններով ու գեղարվեստական հնարքներով
հարստության յուրատիպ են նաև Ռ. Դավոյանի պոեմները, որոնց հեղինակը դիմել է
ստեղծագործական նախընթաց կյանքի գրեթե բոլոր փուլերում: Պոեմներում, լինի այն
«Ռեքվիեմ», «Լպոս պատանության», թե «Հեքիաթ մղձավանջներով», «Թորոս Ռոսլին» կամ
«Մաչեղի ջարդը», Դավոյանն ակնհայտորեն պահանջում է խոսքի բարձր
գեղարվեստականություն՝ հիմնականում ապավինելով փոխաբերություններին,
գույզահեռականությանը, բառային կրկնություններին, երաժշտականությանն ու ժխտականությանը:

Դրանց գուգահեռելով տասնյակ այլ արտահայտամիջոցներ՝ աստիճանավորում. առճայնույթ. նորաբանություն, հոնտորական հարցում: Իբրև բանաստեղծության տեսակ, պոեմը Ռ. Դավոյանը զարկելով է նոր ժամանակների գեղագիտությանը համահունչ՝ դարձնելով այն պոետական. անկաշկանդ. խորագահին ու զգացմունքային արտահայտություն: Այդ ամենը տեսանելի եղավ դեռ նրա առաջին ծավալուն առեղծագործության՝ «Ռեքվիեմի» մեջ: Բովանդակային առումով այստեղ կարծես թե նորություն չկա: Դասական պոեմների պես «Ռեքվիեմը» նույնպես արձագանքում է ժողովրդի՝ տվյալ դեպքում հայության ճակատագրական իրադարձություններին՝ բնականաբար չորանցելով նաև մեծ եղեռնի թեման: Պոեմը սկզբից մինչև վերջ գրված է եղբորական շնչով. թեև ուրաբանչյուր հատվածում զգալի է լավատեսական հայացքի ներկայությունը: Գեղարվեստական պատումի տոնայնությունը, ժիթմը, բառապաշարը և ոճական այլ տարրեր լիովին համահունչ են արձարժվող թեմային և որպես այդպիսին «Ռեքվիեմը» թախճոտ է ու տվյալի:

Ցավերն ամեն՝ առած ուսին

Գլխի վերև մեռած լուսին,

Ոտքերի տակ աշխարհը սին,

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով

Անցնում էր լուռ այս աշխարհով [8;248]

Այդպիսի հակիրճ ու դիպուկ մատնանշումից հետո հեղինակը խտացնում է խոսքի յղեղրգական տոնը.

Աչքերից կախ՝ սարսուռ երգեր

Ուներից կախ՝ թմրած ձեռքեր

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով

Հողաձնունդ իմ գավերով

Մեխվեց երկրի ամեն անկյուն

Խնդդեց բոլոր ցավերն անբուն

Ո՛վ է, Արարիչը,

Որ խնդդվելով մթից

գոռաց՝

«Նդիցի լույս...»

Եվ «լույս եղև»

Գոռաց՝

«Համակարգվիր քաոս»... [9;248]

Սակայն դաժան ժամանակների քաոսն անգամ չի կարող կասեցնել իրական երգը, որրան էլ այն եղերական շնչով տեղորոշված լինի. գրկել գեղարվեստականության հաստատող այնպիսի տարրերից՝ ինչպիսիք են երաժշտականությունն ու ժիթմը, որոնք առանձին հատվածներում միանգամից են ընկալելի ու տպավորիչ:

Ի տարբերություն «Ռեքվիեմ» պոեմի՝ «Լպոս պառտանությունում» առկա է պոեմտային գիծ. կան կոնկրետ հերոսներ՝ անուններով ու ոգորումների պատմությամբ: Լպոսայնության ձգտող այդ ստեղծագործությունը զավի ու սիրո ներդաշնակ պատում է. որի գրեթե բոլոր գլուխները խոստովանության պես են հնչում՝ լինի վերջինս Հեղինակի, թե հերոսի կողմից: Խոսքի մեղմություն և խորը քնարականություն. սիա թե լեզվաոճական տեսակետից ինչպիսիք է առանձնահատուկ պոեմը:

Գեղարվեստական խոսքի ներգործությունը ուժգնանում է ոչ միայն առարկայական առանձին երևույթների մատնանշմամբ, այլև դրանց շեշտվող հանգավորմամբ /լուսին-լուսին-սին, երգեր-ձեռքեր-մեղքեր, անկյուն-անբուն/: Ծարունակելով ոճավորման այդ հնարքը՝ հեղինակը ավելի է սրում պատումի բովանդակային ու ձևային կողմերը.

Աշնան տառուկ երկինքներով

Տարավ մեռած աչքերը մեր

Մեր քրքրված, լուռ աչքերում

Կուլան ճերմակ ու պաղ ծյուներ,

Կուլան տխուր, կուլան ճերմակ

Թարթիչներին մեր ծյունակեր

Եվ մեր մեռնող սրտերի մեջ

Լիլիսն հանդարտ ծյունե ձեռքեր: [10;249-250]

Դավոյանն այստեղ ստեղծում է բառային կրկնություններ՝ նախ «կուլան» բառով, ապա «ծուն» գոյականով: Հաջորդ բառատողում «ծունը» ստանում է նոր ու հետաքրքիր նշանակություն:

Ձյունն մարսին, ծյունն շապիկ:

Ձյունն նժույց, ծյունն թամբիկ:

Ձեր մոլեռանդ իմայրնեղով... [11:250]

Բայց ողբն ու ցավը հնարավոր չէ, և հոգեբանորեն ճշգրիտ չէ շարունակ տեղավորել կանոնի չափ ու ձևի մեջ: Ուստի դասական կառույցների անմիջական հաջորդում են քանաստեղծական ավելի ազատ, վերլիբրի հասնող պատո:մները:

Այն հերարծակ գիշեր,

Երբ այլևս գիշեր չկար,

Երբ գիշերը վերջացել էր կեսգիշերից առաջ

Երբ ուղիղ կեսգիշերին

Արշալույսն էր մի սև

Ժայթրում հողի կրծքից

Դեղին աստղերն էլ վեր,

Երբ դու փողակրե անոթ էիր

Էզված դատարկություն

(/Այ՛ ծովս էր/ ես ծուխ էի)

Լուծված փղոսկրով [12:253-254]

Ռեքվիեմ պոեմում Բ. Դավոյանը հաճախ է կիրառում հարց-դիմումը, որը, կարծես, հասկանալի է ընթերցողի համար: Կյոպես հեղինակը փորձում է երկխոսության մեջ մտնել, աչքերը ինչ-որ ձևով պնդել, պատասխան տան գործված մեղքի ու ոճի համար: Բայց հեղինակային դիմումները վերածվում են անպատասխան մեղադրանքների /ընդհանրապես «Ռեքվիեմ» երկար մեղադրանքություն է՝ բազում ելև, քննելով ու անխնայ գնումներով/:

Եթե մարմինդ լցված է հանգով

Եվ երակներդ ներդաշնակության ցավով են տներում,

Ուրեմն՝ ինքդ՝ Արարիչն էլ, թո

Հակառակ դեպքում վերևից հսկում: [13:30]

Պոեմում գերիշխողը գեղարվեստական մտածումի նման որակն է: Սակայն ստեղծագործությունը ստանում է սաստկական շերտեր:

Եվ կատարյալին ձգտելով անվերջ

Իր կատարյալը հենց ինքը խեղճում

Մարդը դառնում է մոլուգթի գերին

Որ այլանդակներ ծնվեցին գեղում: [14:121]

Հատկապես խոսքի աստիճանավորման բազում օրինակներ կարելի է գտնել արձարձող պոեմում, որոնք տեքստին հաղորդում են շեշտվածություն, հուզականություն ու արտահայտչականություն:

Այն տանջանքը, որ նա է կրում

Այն սարսափները, գերաշխարհային,

Որ մարմնի վրա

Մտքի թանձրաթույն մելանն է գրում

Այդ նյութը մարդու ու աստվածային

Մտքի սանդղների վրա քրքրում

.....
Լրկնում շղթան

Նյութն են քրքրում: [15:121]

Խոսքը սկսվում է մարդկային տանջանքներից և աստիճանաբար հասցվում համաշխարհային նյութի քրքրման կետին:

Ինչպես բնորոշ է խեղճի լիստիայական երկին, ինչպիսին «Ընդուն պատանությունն» է, այստեղ ևս իրեն բնորոշ բնականություններ ու ոճով Դավոյանը կատարում է իմաստային ընդհանրացումներ, որոնք հաճախ իրենց չորությամբ ասես հակասության մեջ են մտնում քնարական հյութեղ տնքստի հետ..

Դեղեցկությունը նշաններ չունի

Միակ նշանը հենց ինքն է, որ կա

կամ

խմենք, հավատանք, որ մի հարվածով

Չի ոչնչանում կյանքը հիմնովին: [16; 132]

Ռեզգմիկ Դավոյանի պոեզիայում հաճախ առանձին բառ-երևույթներ ընկալվում են որպես լիդգրկուն հասկացություններ, որպես բազմիմաստ սիմվոլներ: Նման բառ-երևույթներից են «լույսը», «խավարը», «մույթը», «արցունքը», «անկումը», «անդունդը», «թախիծը» և այլն:

Հանելուկ է հավերժական

կամ առեղծված անթերի

Մարդը խավար մի զանգված է,

բայց նման է կանթերի

Տրորվում է իր մույթի մեջ

սակայն լույս է ճառագում.

Խռանում է մույթն անընդհատ

լույսը-ավադ բարակում: [17; 161]

Մեջքերված տողերում կարելի է նկատել բանաստեղծի նուրբ բառագագացությունը «խավարի» ու «մյթի» գործածության օրինակով: Նշված բառերը այլևս միանշանակ համանիշներ չեն խիստ մոտ լինելով հանդերձ՝ հեղինակային մտքի դիպուկ ու թեթև շարժումներով ձեռք են բերում լրացուցիչ երանգներ. «մույթը» բնական նյութեղեն շոշափելի տարածքի է նման. նյութական մնացյալ աշխարհին հավասար՝ առանց բացասական շեշտով:

Մեկ այլ մեջքերում բառ-խորհրդանիշներով.

Տիեզերքի բոլոր անկյուններում

կա մի առգունք

Եվ անպայման անդունդների

վրա կախված: [18; 241]

Արտադրուստ իրարից անչափ հեռու են «արցունքն» ու «անդունդը». բայց նրանց միջև գոյություն ունի ներքին բովանդակային կապ: Սա այն դեպքն է, երբ ստեղծագործական հաստատվությունը կոմպենսացվում է գեղարվեստական նոր արդյունքով:

Ռ. Դավոյանը ինքնատիպ բանարվեստ ունեցող հեղինակ է, քնարական տեքստեր հորինող տարրերով, որ դեպքից դեպք դիմում է նաև նորարարություն ապահովող արտահայտամիջոցների: Նրա բանաստեղծությունները առավել աչքի են ընկնում հետաքրքիր ու տալավորիչ թիթմիկայով ու նրաժշտականությամբ, դասական տաղաչափական ձևերի լայն կիրառությամբ, որտեղ ժանկաշնչողական ոտանավորը հանգային իր կառուցով ամենագործածականն է: Ռ. Դավոյանի նախասիրած արտահայտամիջոցներն են փոխաբերությունն ու համեմատությունը, որոնք կապես վճռում են նրա բան արվեստի տիպն ու որակը:

Գրականություն

1. Ռեզգմիկ Դավոյան, ՌՆՍԻ-ի երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 1987:
2. Ռեզգմիկ Դավոյան, «Պոեմներ», «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 1980:
3. Էդ.Ջրբաշյան, «Գրականության տեսություն», Երևանի համալսարանի հրատարակչություն 1980:
4. Էդ.Ջրբաշյան, Հ. Մախչանյան «Գրականագիտական բառարան», «Լույս» հրատարակչություն, Երևան 1980:

«Մերոզ Մաշտոց» համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոն

ՀՈՍԱՆԻԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԱՃ *

Լ.Գ. Մարգարյան

Բարբառի, բանահյուսության լեզվի բառապաշարային որոշ իրողություններ իմաստարանական մի շարք առանձնահատկությունների վերհանման համար կարևորում հաճախական կիրառություն ունեցող փոխառյալ-մայրենի միավոր հակադրությամբ հոմանշակ գոյգների քննությունը, որոնց վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտելու հոմանշակ փոխառյալ միավորի լեզվական արժեքը, պարզելու նրա նախընտրելիության աստիճանը մայրենի միավորի համեմատությամբ, որնման և ներկայացնելու բանահյուսության լեզվում տվյալ բառաշնչոթի լեզվական արժեքը:

Դեռեր շարունակ հարակից ապրելով, գտնվելով մերթ արարական, մերթ պարսկական, մերթ թուրք-թաթարական, մերթ ռուսական, մերթ ադրբեջանական տնտեսական-բաղադրական ազդեցության տակ՝ քնականաբար, մեր թարբամն Լլ (բանահյուսության լեզուն) իր բառապաշարում մեջ ներառել է այդ հարաբերություններն արտացոլող մեծաթիվ փոխառյալ բառեր, որոնք հակադրել ու տարբերակել ենք զրաբարյան շրջանի փոխառություններից, վերջիններք հոմանշային ներկայացվող խմբերում հանդես են գալիս որպես հարազատ կամ մայրենի սիմվոլներ:

Արևելյան լեզուներից կատարված փոխառությունները բավական մեծ թիվ են կազմում բանահյուսության բառապաշարում: Դրանց ներիտը ենթադրվում է ոչ միայն մայրենի համարվելը չունենալու պայմանով, այլև լեզվի բառապաշարի հոմանշային շարքը լրացնող ու հարստացնող սիմվոլների ներմուծմամբ:

Նման կարգի փոխառությունների հնարավորությունը պայմանավորվում ու բացատրվում է նրանով, որ փոխառյալ միավորի ծավալը ոչ միշտ է ներառնում մայրենի լեզվում գործառնող միավորի տիրույթը և կամ ընդգրկվում նրա տիրույթում, այսինքն՝ դրանք իմաստային ընդգրկվածությամբ չեն նույնանում: Փոխառյալ միավորը մայրենի համապատասխան միավոր ազդեցությամբ կամ նոր գործածությամբ հոմանշային որոշ նրբերանգներ է ձեռք բերում, ծավալվում իմաստային այս կամ այն հատկանիշով՝ երբեմն Լլ գործածության հաճախականությամբ գերազանցելով մայրենի միավորին: Չի բացառվում նաև փոխառյալ միավորի մայրենիի հետ իմաստային լրիվ համընկնման փաստը:

Ըստ մայրենի և փոխառյալ միավորի իմաստային հարաբերակցության ու գործառնակա հաճախականության՝ կարելի է առանձնացնել հոմանշային խմբերի իմաստային որոշ կարգեր:

ա) Մայրենի լեզվում գործածվող միավորն իմաստային ծավալով չի ընդգրկում փոխառյալ միավորը, վերջինս էլ նոր միջավայրում ձեռք է բերում նոր իմաստներ ու իմաստային նրբերանգներ եւ գործածության հաճախականությամբ գերազանցում մայրենի միավորին՝ նախընտրվելով նրա համեմատությամբ:

Այսպես՝ *խաթը* կամ *խաթիր* եւ *հաթը* կամ *պատիվ*: մայրենի լեզվում գործածվող *պատն* եզրը նվազ հաճախական է, եւ հոմանշային այդ խմբից փոխառյալ միավորը նախընտրվում է եւ ունի հաճախական գործածություն: Բառակազմական հնարավորություններով էլ այն գերազանցում է մայրենի միավորին՝ *խաթիր անել*, *խաթիրը պահել* եւ այլն:

Օրինակ՝ *Տերտեր, տու նի մուտ, առչք րու խնայքըտ կրպստի, մին տեղան փոխի, վրեններտ տուրուր կըտաս, վրեններիգըտ կրփոնիքի օրի տանք հաններք*: [1]

Դադար-դինք: *Դինք-ը անհամեմատ հաճախական գործածություն ունի: Մեծ են նաեւ քառավազմական հնարավորությունները դինջօթուն, դինջանայ, դինջումը եւ այլն: Դադար-ը նվազ հաճախական է, գործածական է բաղադրյալ կազմությամբ՝ թիրթիրի:*

Օրինակ՝ *Մին դոնում քազի տննում ա, վար ուրան քաշկերը դինջոթուն չըն տամ*: [2]

Թամբայն էլ տամ ա, քրնայ ընգընը, վերը դինջանն: [1]

Բափից՝ քրած թիրթիրում չի, լօխ տըկտըլէր ա անում: [3]

Նվեր (նիվեր) - **խալաթ** - **փեշքեշ-բադարկա**. Բառանդամ հոմանշային այս խմբից ուղարկանյութը միեւնույն հասկացությունն արտահայտում է տարբեր նրբիմաստներով: *Նախաթ-ը ունի գործածության մեծ հաճախականություն առավելագույն վաղ շրջանում գրառված բանալիութական նմուշներում: Մայրենի միավորը՝ նվեր-ը, գրեթե անգործածական է: Փեշքեշ-ը հաճախական գործածություն ունի, բայց այն իմաստային ծավալով չի համընկնում խալաթ-ին: Փեշքեշ-ն համարվում է բախշայիշ անէլ-ին: Նվազ հաճախական գործածություն ունի պադարկա-ն, որի հաճախականության կայունություն նկատվում է վերջին շրջանում:*

Օրինակ՝ *Հու հնչու օծը պատազ, եր կալալ, եկու թարապներն նվեր պերալ, մինը՝ զաբա, փնը՝ կումաշ, օի, կոպ, վնխճար, վնսկե, մին խոսրալ, ամեն հինք*: [4]

Շատ դաշնազյ ծնկներն ըն ինում, ուրանը էլ հալա սաղ, ասում ա, «Տըննական ըմ թարապներն խալաթ տամ»: [5]:

Նույնանուն հեքիաթից՝ ուրիշ բանահավաքի փոխադրությամբ.

Էս ծնկնան շատ օրուտ կկյա, տանիմ մերն թարուտուն բադարկա տամ: [6]

Կամ՝ *Օգերին թարապներ վերն էտ յարմ ա, հրամմայրմ ա Օկի Փիրումին պիրին ուրմն պղտը, վեր բադարկեր տա օզագայ ա լնվօթուն անն, վնչ յա փիսօթուն*:

Վերն մեր թարապները քլեզ փեշքեշ տա, օգի մին պեն բախշի տու ասի «Թարապները ապրած կընա, րեն վնչ մին պեն օգըմ չըմ»: [7]

Հոմանշային նման կարգի խմբեր են՝

Պատճառ (պաճճառ)-մահնա կամ **միանա, մանի**. վերջինս միավորում է *պատճառ* եւ *առիթ* քառերի նրբիմաստները: *Պատճառ-ը* նվազ հաճախական է, իսկ *մահնա-ն* կամ *միանա-ն* կայուն ու հաճախական գործածություն ունի:

Օրինակ՝ *Էս վրդյաբեղը ամեն դոնում մին միանա փրեան ըլնթա կըթնահունգ, յըրյաբեղը թլեան, խոլրիքը լցած, մին էշու յրա քրցած քլինամ ա սիրածն կոշտը*: [1]

Էտ աղվեսը քլնները արնես, քլնները, յա էտ մըսեն պատաղը հունց ճանգըր քրցն, վերը մանին ճըրեն ա: [6]

Ախառ (ախաուզ) - **մրդափուն**. դարձյալ մայրենի միավորը գործածության հաճախականությամբ գիշում է օտար միավորին, բայց և գործածական է:

Օրինակ՝ *Մրդափուն էս խոխա, վերն ումբուրը կարծ ա, էս խոխան ըպրելու չի, մրոնելու ա*:

Էյամ ըն ախմախ թարապներն կոշտը, հրկըցնում, վեր մնիղը յոր ունելիս տեղեն թարապնութենն աղաթին ինյուր պիտի տղա կլմ սաղ չամահաթեն ըռաչին ուրան բարոզը ասն, օտ խոսն, թարիփ անն, ափաուզն, վեր իտի մարթը մնալ ա: [1]

Ձեռվարելով շարքը՝ բավարարվենք այդ կարգին պատկերառող հոմանշային եւս մի քանի օրվերի ներկայացմամբ:

Այսպես՝	ողջ-առողջ (փօխ-առօխ) - սաղ-սղմաթ
հայրենիք-վնթան	բայց-ամմա
գանձ (կանձ)-խազնա	թշնամի-դուշման
միջնորդ-սնթաթ	գոմբ (կօմբ)-թարիփ
վկա-չրիմդ	

Հոմանշային վերոնշյալ խմբերի մայրենի միավորի ոչ հաճախական կիրառությունը պետք է լացատրել նրա հետ իմաստային ընդհանրություն ունեցող փոխառյալ միավորի իմաստային լայն տիրույթով չբացատրվող մամանակային գործոնը:

բ) Արևոտ սիւսավորներն էլ կատարեցին գործածություն ունեն բանահյուսության լեզվում եւ գործածություններում ունենալով իմաստային ընդհանրություններ՝ նրանց միջեւ առկա է առնչություններ, որոնք հանգում են տարբերակվածության: Տվյալ դեպքում փոխառյալ սիւսավորն արտահայտում է նույն հասկացությունը իմաստային այլ երանգով:

Աղափսի հոմանշային խմբեր են՝

Անծ (մը՛ծ) - զո՛ւ. երկուսն էլ հավասարապես գործածվում են: *Դրանց միջեւ առկա է իմաստների նորոգման նպատակով տարբերակվածություն: Զո՛ւ-ը ունի չափի մեծությունն ընդգծող սաստկական երանգ, անձի առնամբ գործածվելու դեպքում՝ նաև վիրավորական: Ան՛ծ-ը, Զո՛ւ-ը իմաստով:*

Օրինակ՝ Հոննի բիւնայիս վարար թռ ա կլամ նդարաչին նի յա մննում մին զրանաճառաբարեն իրա նստում, մխըն կննում, տըննում տոնը պեզ իլապ, մին զընտ աղջ նի մտապ: [1]

Իմ հէր դիբէտ յլէլց... հի ն: տը մսար, վար յալ իննար...մին մը՛ծ օզ: [8]

Անկյուն (ան՛գ ուն) - պօճայն (թոր)-թուրք-թոնջ (արսկ.) - ուղլո(թուս.) հնգադամ այս խմբերում սիւսավորներն էլ հավասարապես գործածվում են՝ բազառությամբ ուղլո-ի ուղ համեմատաբար նվազ հաճախական է: Արանցից յուրաքանչյուրն ունի նորոգման նպատակով: Ան՛գ ուն-ը սովորաբար գործածվում է տան, շինության եւ այլնի կողմ ընդհանրական ու չեզոք իմաստով, թունջ-ի արտահայտում իմաստը մասնավոր է՝ ծաղիկ, թուրք-ը կամ պոճայն-ի հոմանշային սերտ աղերս ունի թունջ եւ անգլուն բառերի հետ եւ միավորում է նրանց իմաստային եզրերը: Ունի ավելի մասնավորված նորոգման ինչ-որ մեկ անկյուն: Լրբեմն էլ այն թոնջ՝ բառի հետ հանդես է գալիս բարդության մեջ՝ թոնջ-պոճայն արտահայտելով ամեն տեղ, ամենուր փոխաբերական իմաստը: Թուրք-ը ավելի անորոշ ու նախադասում ունի՝ մի կողմ, մի տեղ, երբեմն նույնիսկ՝ ոչ անկյունում: Իմաստով մոտ է զորարդին: Ուղլո-ի հաճախականության ակտիվություն նկատելի է վերջին շրջանում:

Օրինակ՝ 1. Չորս ընգլուսավը պեզիր հասար քաշած, մաշկուս ծառեր, ծղգնե, ախալլոր: [9]

2. Ըտրանց մինը հենգլ պեճնած Լշերն ա քջըմ, Լն չորս հոդին էլ Լտ յըմբային կըրպեճում յա պարանց քջած կըրպեճեն ընկերան փոքրն, յըմբային յեր օնըմ տանըմ: [1]

3. Լտ երկու ըխճըկանը կոտը ընդրանց էլ յոր օնըմ, ընդրանց ստոլին գառ ըսլլոլունին էլ յոր օնըմ ուրանց վրեսկե ղափաղալը, ընգնըմ ընկերապոճայն, յոս հոլալըմ, կլամ Լտ վրեդին մըլը: [7]

4. Մա դմ ծծորավը հինչ ար կլամ, վըր հինչ անե, պեճնավը տանը մին թուրջումը վը ա ածում, թողում ինդի, նի յեյ չի կլամ: [10]

5. Լս ուղլան Լն ուղլուն ա թինքմ, Լն ուղլուն Լս ուղլը, հանգ ա պինակալ կուրգըած հալ ինի: [3]

Մին Վերպ - մին թահրավ - գօռավ հոմանշային այս խմբի II եւ III եզրերն այնու թե զիտակցվում որպես փոխառյալ սիւսավորներ, այլ փոխառյալ ու հայերեն բառերով բաղադրված կազմություններ՝ բարբառային սիւսավորներ, որոնք գործածության հաճախականության գերազանցում են մայրենի սիւսավորին: Իմաստային առումով նրանք համարվել են: Այդ երկուսն էլ նույնիսկ միեւնույն նախադասության մեջ:

Օրինակ՝ Ծննի մարդ կնեզ, խոխա-քոխա քոտընեքնն պըսըքըմ ըն, հաւազոն ծառն, ժըխնըքըմ տիւնըմ, վըր մին կլեւա կոլ ըն տամ, ծուր տալիս չորը թոլըմ ըն, պիրըննըքըմ միզիւս, վըր մին թահրավ կաթ-կաթ կոլ ըն տամ, վըր սովածությունան կըտորվին վե: [1]

Վերջը, շատ ընելան, կեռ ընելան, հրկըչնելան ետը մին թահրավ ըսրանց անա միջ գոռավ-կլիճավ խոսկըքը կըսըս-կնատ թա ասըմ ա. «Դ-ն-վ-ը-ն-ը շ-ա-տ ը-ը օգըմ ինձ տ-ա-դ-եր»: [1]

Նույն կարգի հոմանշային գույք են՝ մին պերան-մին թալման (թալման խոսք) վերջինիս գործածության շրջանակներն ավելի լայն են՝ պայմանավորված նոր միջավայրում ծնող բերած բազմիմաստությամբ ունի նաև մի թիվ իմաստը:

Օրինակ՝ Տըրընըն Էլ տըմբըհան չըն ինիլ վըն, ըլկըրնն պեզ կանին, վըն: մին ըյալմա կըխոսին: [1]

Մին թալման ըսալաւ յաղ ըս անում յղա տամ: [3]

Անճամաններ (մրժամբժնոր) - ակսասկական, իմաստային առումով համարվեր են. ֆոխառայալ միավորն ունի նրբերանգային տարբերակվածություն. այն ավելի մասնավոր է, քան անճամանը և ոչ թե անճ, տարբեր քնդհանրացված, այլ հասարակական հարգանքն ու սերը վայելող, նորոգատու, իմաստուն: Նոր սերնդի խոսվածքում այն հազվադեպ է գործածվում:

Օրինակ՝ Ըննին ակսասկականն մի օր հիարված մտածում ըն. վրեր ակնոր ուրանց շենին աստիվ: ի պերքմ ամեն մի դարիք մարտ կյանավ շենը, տրեսնըմ ա սրբանց ըրարսունքը, ուրան էլ համուս ա կլամ: [7]

Հրվարվում ըն էտ երգիչին ակսասկականն, փորգված, գլիզգող, աշխար տրեսած յարթիք, մին-մին կլամ և տ թարգվորեն կոչտը, վրեր հրակրցնին, բրնմպ ինին ուրան, կարն զրգվոր կատավարն: [1]

գ) Հոմանշային խմբերի եզրերի միջև իմաստային տարբերակվածություն գոյություն չունի. ե փոխառյալ միավորի ակտիվ գործածությունը պայմանավորված չէ իմաստային ավելի լայն քնդգրկումով: Տվյալ դեպքում փոխառյալ միավորի հաճախական գործածության փաստը կարելի է բացատրել միայն ժամանակային գործոնով. էին սերնդի խոսվածքում, որն անմիջական եզր էր փոխառյալ լեզվի, դրանք անհամեմատ հաճախական էին, քան այլոք են:

Այդ լսմբից էլ երկու կարգ կարելի է առանձնացնել.

1. Հոմանշային խմբեր, որոնց փոխառյալ եզր-միավորը գործառական հաճախականությանը համարվելով է մայրենի միավորին՝ ինչ-որ տեղ էլ գնորդանցելով:

Այսպես՝ Մարտը - թանմուզ՝

Օրինակ՝ 1. Թամուզ կործոր պրոյանդի նման ա: [6]

2. Ըստղեր տղան մարտը շորերն ա կլենում, ծին նրատում: [1]

Լույսած-տուզնը՝

Օրինակ՝ 1. Հոգին նորարը խի սուվրանում ա:

2. Ա տնաքանդ, խոլսերը տնգնը կտորվեցեն մարդս, ախըր ինսանուն չինս ըս, եր կաց մին պնու կաց, խոխոցտ հենտ թուզի ճարն: [11]

Ճար-թանդը-յու-իլաց. վերջինս չունի հաճախական գործածություն:

1. Այ ճար ծն, վի իլաց: [3]

2. Հավեն պինուկային սուվր շունը թանդը չի ինի: [5]

3. Ախը էտ խրնո շիննցերը տնսան վրեր էլ ճար չիկա, էշերը պնեսած ա, յա բիդի թողին ծրսակրնը, յա բիդի մին թանդով տանին: [1]

4. Ա բըղտտար ինձ նընետ ըստի-բստի պնն ա պրտտալ, էս հինչ տեղը մին խրնո ըմ քոյալ, կերալ, ետեծտ պարզկալ ա, վեր ծերն ա էտ խնճորը, դանչանք ըմ անըմ, թա յուն կա, էտ խնճորը ինձ հալալ ըրա, թա չէ, բոնս տննական չի: [4]

Առաջին (առաջին) - սուվրա, պատառ - թիքա

Օրինակ՝ Սուվրա պատառ անուշ կինի:

Առաջին թիքան րադոր կինի: [5]

Կամաց-կամաց - յավաշ-յավաշ

Օրինակ՝ Աշտաբեղն էլ էտ ա օգրոմ, յավաշ-յավաշ տուք ա տամ դիպալ սիրածն տեղերը: [1]

Յրվը-յավաշ շոռ ա կ'ան,

Անն շլլակ փոշ մաշկեն: [12]

Ինքն էլ կրմնց-կամանց բ'ուհում ա, տրտանը ծակալի լեշում: [3]

Վերջ-նոքաթ-օշերնը, մայրենի միավորին հավասարաթմբ գործածվում է փոխառյալ եզրը. նվագ հաճախականություն ունի երրորդ եզրը, որի գործառական ակտիվությունը գզալի է վերջին շրջանում:

Օրինակ՝ 1. Վերջը հըսնում ա Դերունց Բեքը լին: [3]

2. Ասլան-Բալասին, մին էլ էս իրնը մարոշ շատ-խրնը քրեցալ ըն մին տեղ մին տուն շիննալ հու էս յորս հոլորին ընդեր կացալ հու նոքաթ-նոքաթան մինը տանը կննում ա իլալ... [1]

3. Նուրթա ուրուլունը մընձ տղեն օշերդն ա ինում: [10]

Բոժ (օժ)-ղվաթ:

Օրինակ՝ Թարավերին տղան տենակը ցուբան հանքմ ա, Ռւրան բուղան կտորմ յավոտ դուշին ուտըգնքմ, ըտրանակ նա ղվաթ ա առնում:

Բօրփն տըղավը յկամ ինձ նըհըտ օժ ա փօրգըմ: [3]

2. Հոմանշային խմբեր, որոնց փոխառյալ եզրերը աստիճանաբար արտասովոր և արտասովոր են բարբառից ու բանահյուսության . վերջին շրջանում դրանց գործածությունը զգալիորեն նվազել է :

Այդպիսիք են՝ *չեղ (չրպէրք) -- տխտուզ (սօնքսըզ)-սըբ:*

Էտ թարավերը տխտուզ ա ինձմ տղա չի ինձմ, ախճիզ չի ինձմ: [13]

Կամ՝ Տախանք սոնկտուզ ըն ինիս, միշտ էլ դիվսդ: [10]

3-րդ եզրը իմաստային ու գործառական տարբերակվածություն ունի. անպատու անատունների վերաբերմամբ է գործածվում:

Օրինակ՝ *Էն ա բանէ տարէ յա ծընում չի, սըբ! յա տողէս յկայ, տանում ում բազար ծախիմ:* [3]

Ներկայությանը - դաշարում:

Վեյ մին պեն չօնիմ քեզ մին շղարշ խնճիդ տամ, իմ դաշարումս եր կալ կեր: [13]

Արդուգարդ-գինյաթ:

Օրինակ՝ *Ուրան գինյաթը կարմիր լըլլենիում կապում ա, տինում մին քօյու տակն, շորնը հանում նի մըտնում կընտը:* [13]

Օգոտ (օքոթ)-թմք. 1. Բյար չի ըրայ, հու էն մարթը տեն ու տեն մտեզ ա ըրայ ասայ: [1]

Լէխարթ-Օլթա-դունյա.

Օրինակ՝ *Որավայ ըմ ծիւր չիկա,*

Արաններում ախպիւր չիկա,

Կըմնինիմ դարիք ծլքյում,

Բըշտիս մնր նան քուր չիկա: [6]

Էլընխարին մընը խաշինըյ

Լյինի-արնդավ փարշինըյ

Էն դունյումը կործ չօնինըյ

Էս դունյումը զանք բաշինըյ: [6]

Ժողովուրդ - խալխ

Օրինակ՝ *Արտ ըմ վարսայ կյարի յա,*

Կաղթական տարի յա,

Նամուս-դեյրայթավ խալխ ընք,

Էլիա ախպերըս վարի յա: [6]

Խալխ-ը գործածվում է նաև ուրիշ, ուրիշները մասնավորված իմաստով:

Խալխը հուվ ա գ'ուգում հինչէր ըն կ'էնում, տու հի նչ ըս ըրայ էտ: [3]

Խիդ (խը'դճ) - ինսմփ

Օրինակ՝ *Կըծէ, օյո՛ւ ախպեր, կըծէ, սմքմքը էն ա վեր էրկու վըննանուն լիվոթուն ընելի չի, տեղավը մին ըտրանք անխնսփ ըն, խնդճ, մեխկ չօնին:* [1]

Զույց (զրիւց) - գիլիջ մ

Օրինակ՝ *Ամին տարի գըրտուքիս յա ըրտուքիս չինըմաշումը համիշա էտ Ռուգուն-Թըյըն գիլիջան ըն անում:* [11]

Գավազան (կրվազան) - յօմախ. Մարթը մին փնտ, չումաղ ըն եր կայալ, ասմա մինն էլ մին յոյճ ա եր կայալ: [1]

դ) Բանահյուսության բառապաշարում կան փոխառյալ միավորներ, որոնք չունեն իրենց մայրենի համարժեքը: Հոմանշային խմբում ընտրվող մայրենի միավորը չի ընդգրկվում փոխառյալ միավորի իմաստային տիրույթում:

Այսպես՝ *Մըսլըհաթ.* եթե հոմանշային մյուս եզրն ընտրենք *գրույց-ը*, այն չի ընդգրկվում *մըսլըհաթ-ի* արտահայտած իմաստը: *Մըսլըհաթ-ը* գրույց է, բայց *գրույց-ը մըսլըհաթ չէ:* Խօսքորոշ

անկ, խորորդը նրա տեղի հարադրությունները իմաստային ծավալով ավելի են մերձեցնում, քայքայ չեն առանձնում:

Օրինակ՝ 1. Մաղ ժողովուրդը հրվարված, էս տղան յարապնդեն յոխ պատմում ա, վերը քու որոտանում են կաղաքայ շքմ, իս հար պահայ ըս, մրտաճալ, վերը փորցված մարդ ա. մին պեն պաղտահեն, կրքինամ մրսլիաթ իղրցրնիմ. մըհենգլ հունց վերը տեսնենր. փորգանքը պրտահայ ա, առ էլ քյեցայ ըմ իմ հոր կոշտը մըսլիաթու, սաղ շրիարը ըզաղայ ա: [1]

2. Լյամ ըն մրսլիաթա անըմ, տանըմ սրանց շենան մին դըրաղ տան վերը քջըմ, ուրանը Լլ իս մին թափրալ, նուբայթալ ըտրանց ուտուցնում, խմբցնում: [1]

3. Վերչապեն մարդը և կնեզը մասլախաթ ըն կլալիս ու խոխան տամ թաջիրին: [10]

Եփգարան.

Յըն նիգլարան կմեռնիմ, վեր գլիդամ վեչ, թա էտ խոխան հի ճչ, անազ ա տընսալ, վեր ոտան էտրան ստիրիս ա, ինքն էլ ըսն չի: [7]

Լյամ՝ Էն ըմ նիգլարան, մին խաբար կանիս, տընսնամ տա կօրծերը հինչ տղժալ: [3]

Պընգլըլիտա.

Հունց կրաղտահեն, ըտրանց տոնը նի կըկենա, ըսկըսն Լրիլը. ըտրանց անա մինը կրակը վերը տեսնում ա, գոտալ-կլիծալ, շատ գլընգլըլիտա պիրանեն մին դոլալ ծեն կըտա: [1]

Ե) Հոմանշային խմբեր, որոնց եզրերը տարբեր լեզուներից փոխառություններ են: Մայրենի համարվող միավորը գործածական չէ:

Ինչպես՝ Եղապկա - փափաղ.

Օրինակ՝ Եղիս թանգլը բոզ ա,

Սիրածըս ալազյոզ ա,

Եղապկալտ կըլխատ եր կալ.

Թափ տամ քյանրիւլըտ բոզ ա: [6]

Մարյոն առում ա.

Ա՝ փափաղ կլխաա պնգլիր տեղ օնիմ, վեր քեզ տնիմ յրա, քեզ ամենալալ տեղն ըմ տրալ, խե՝ վեր ըս ըղնում: [9]

Զազար - յարմուրկա.

Օրինակ՝ Մին օր մընմ տղան հորըն ասըմ ա.

Ա հար, թող յըն քլինիմ յարմուրկա տընսնամ հինչ կա, հինչ չի կա: [7]

Իրլի ըմսլ կան խոխա՝

Բլբլըբազար: [12]

Տուրմա - դուսաղխանա.

Օրինակ՝ Էտ գլաղան մըհենգլ էն ա դուսաղխանըմ, ընդդան թողըմ ըմ ծընը դաղաստանին, հինչ պաղտիծ ապիր, ինդի յըմ անեյ տալու: [7]

Շատ փիս մարդ ա, տրա տընդը տոնումն ա: [10]

Նորագլիր բանահյուսական նմուշներում գործածվում է նաև բանտ մայրենի համարվելը:

Օրինակ՝ Էս պալատը ինձեռն բանտ ա, ինձ էս բանտան ազալտ ըրա: [9]

Լյամ՝ Տափարը անտեր հանդումն ա,

Մալդաթը մոտե բանդումն ա

Բիշերը բոմն հունց տանե՝

Ախալերս Եուշվա բանտումն ա: [14]

Այդ կարգի հոմանշային խմբեր են՝

Աշազա - պոփուր, ժամանակի ընթացքում թուներենն ավելի է արմատաւորվել:

Օրինակ՝ Եննան յոխ սրտաները եկալ ըն ճոխտ ծնեքենն տիրալ էն պառտառ ճղած տեղը, մինալ աշազան ա մնացալ: [1]

Իտի մին քանն ինֆինէրնլի, ջափիլ-ջըհույնլի կընէլլան յետը. Սառա բաջին պոլըին կանչում ա: [3]

Մալդաթ յէշվար.

Օրինակ՝ Սարգսյանը հրվարում ըն,
Իմ սրերտըս կըրակըմ ըն,
Ես հի ն, անիմ մին-մինակ,
Շուշվա մընձ քաղապրմը: [6]

Ընգանք կէտն Էն անգյունը, տեհալ հին, ... անա, մին լէշկար կա ըստեդ, փք
կըլիսավը ընգընելի թահոր չկա: [8]

Չէշմակ-աշկինոր սերնդի խոսվածքում առաջինը գրեթե չի գործածվում:
Օրինակ՝ Միկա կմկմամ ա և և անում, չէշմակը դուզքնում, էշում ճիլի-ճելլի բոլ
շամը փռնած դերիզըն, յիրա կզնվում, թա՛շամը մոտե՛ պահն, կիլիոր ըրվամ չի [4]

Առանց աշկի աշկըս պլն չի նըհաշ տամ, հանց ա թուխալըկաված: [3]

Ա փփարիմ - մայադեց

Յ ըղօլի - վիկա

փլ՝ նթամնթ - բընժվա

թամթալ - լօղըր

մարօզ - այազ

Այսպիսով, հոմանշային խմբերի քննությունից երևում է, որ փոխառյալ միավորներն իրենց
խնամատային-կիրառական առանձնահատկություններով ընդգրկել են գործածության լայն
շրջանակներ: Բայց և այնպես, պատմական դիտանկյունով րննելով՝ ակնհեր է, որ
բառիմաստային այդ խմբերը միտում չունեն լեզվական համակարգում կայունանալու որպես
հոմանշային մանրահամակարգեր: Բարբառի և բանահյուսության բառապաշարի
բառակազմական համակարգի զարգացման ու կատարելագործման գործընթացում
գերակայողը գրականացման միտումն է, որն արտահղելով օտարաբանությունները առ
փոխարինում է մայրենի գրականով: Դա պատմականորեն արդարացված լեզվի
պաշտպանունակության օրենքն է, նրա զարգացման տրամաբանությունը:

Դրականություն

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ VI, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1973:
2. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ 15, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1983:
3. Մարգարյան Ար., Արցախյան ավանդույթներ (ծնագիր):
4. Ղախրամանյան Ռ., Բան ասնմ լսիր, Սոնա հրատ., Ստեփանակերտ, 2002:
5. Նմուշներ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունից, Հայաստան հրատ., Նրևան, 1978:
6. Գրիգորյան Մ., Լեռնային Ղարաբաղի բանահյուսություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1971:
7. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ V, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1966:
8. Դավթյան Լ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1966:
9. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Նրկորդ գիրք, Ստեփանակերտ, 2004:
10. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ VII, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Նրևան, 1979:
11. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Իսրայելյան Ս., FF II, Լմաս, 8815,01-8816,00:
12. Մարգարյան Ար., Արցախյան հանելուկներ, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս հրատ., 2002:
13. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ղազիյան Բ., FF V, 6769,01-6960,00:
14. Հայրապետյան Ռ., Ղարաբաղյան խաղիկներ, Ստեփանակերտ, 2000:

«Մեքոպ Մաշտոց» համալսարանի հայոց լեզվի,
գրականության և լրագրության ամբիոն

ԱՐՅԱՆԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՐԶԱՆԻ ՄԱՆՐԱՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ՝ *

Լ.Ս. Մինասյան

Մանրատեղանուններն իբրև լեզվի բառապաշարի սիմվոլներ ստեղծվում են լեզվական գործընթացով: Այստեղ եւ գործում են բառակազմական, շարահյուսական սինտաքս օրենքները, որոնք հստակ են տվյալ տեղանունն ստեղծած ժողովրդի լեզվին: Սակայն տեղանունների յուրահաստակ բնույթը պայմանավորում է այդ օրենքների գործառնական որոշ սահմանափակումներ: Տեղանուններում կարող են հանդես գալ ոչ բոլոր արմատներն ու ածանցները, շարահյուսական ոչ բոլոր եղանակները:

Ըստ իմաստային դասակարգման առանձնանում են մանրատեղանունների հետևյալ խմբերը՝ ջրանուններ, սրբավայր -մանրատեղանուններ, դաշտանուններ, լեռնանուններ:

Մանրատեղանունների իմաստային յուրաքանչյուր խումբ առանձնանում է իր բառակազմական կաղապարներով, տվյալ իմաստային դաշտին պատկանող սիմվոլներով:

Մարտունու շրջանի ջրանուններում հանդիպում են շարահյուսական հետևյալ եղանակներ՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ: Այս ջրանուններում որոշյալի կամ հատկացյալի պաշտոնում հանդես են գալիս *կ/ւտ, գ/օ, այսպուր, ճուր, բույսը* բառերը:

Որոշիչ-որոշյալ կառուցվածքի բաղադրյալ ջրանուններում որոշչի պաշտոնում հանդես են գալիս:

- ա) ածականներ (ինչպես՝ Մ'օտլ ճուր, Շվմա այսպուր, Պիծի ճուր, Ջրափուր այսպուր),
բ) աղբյուր հոլովով գոյական որոշիչներ՝ Յվուշ այսպուր, Ծօր այսպուր, Դագ այսպուր, Տաճապուր, Թըղբա այսպուր, Մ'օշ այսպուր, Ծըլթօր այսպուր, Ջարգ՝ ընկալիօտ [1]:
գ) անձական հոլովով գոյական որոշիչներ՝ Ծօրին այսպուր, Նույթին ճուր, Նաչին ճուր, Շնին ճուր:

զ) քվականներ՝ Ելդու ըլնանե, ղին այսպուրն այլն:

դ) հազվագեղև անձ հարակատար դերբայը ժժժում ճուր, Վըժում այսպուր ե այլն:

Հատկացուցիչ-հատկացյալ կառուցվածքի բաղադրյալ ջրանուններում հատկացուցիչ պաշտոնում հանդես են գալիս:

ա) աճանանուններ, տոհմանուններ Բախշուն ճուր, Յըթաքանց ճուր, Ակուփանց քահիրիզ, Մաքունց գ'օ, Թիմիրին ճուր, Աշխենին այսպուր, Ընուշն այսպուր, Հոռումն այսպուր, Մըկիչանց այսպուր:

դ) անձանիշ հասարակ անուններ՝ Պօպն այսպուր, Թօրքն այսպուր, Ռոսն այսպուր, Լըվլուն այսպուր, Նառնատն այսպուր:

ե) այլ մանրատեղանուններ՝ Թըղուն տակլ ճուր, Ծըլլն ճուր, Նույրվանդին այսպուր, Դըքարա բաղն այսպուր, Ծըծրաքն ծօլ, Բուլլաքն այսպուր, Վընկլ խաչն այսպուր, Դուլուն բաղն այսպուր ե այլն:

Ջրանուն կարող են դառնալ «ջուր» իմաստային դաշտին պատկանող բառերը:

Մարտունու շրջանի ջրանուն-մանրատեղանուններում այս իմաստային դաշտին պատկանող բառերից ավել են *ճուր, այսպուր, քահիրիզ, գ'օ, հօփուր, բույսը, տու, կ/ւտ, ծօլ* բառերը:

Իմաստային դասակարգմամբ առանձնանում են ջրանուն մանրատեղանունների հետևյալ խմբերը՝

ա) ջրային օբյեկտը կառուցողի անվան կամ տոհմական հիման վրա ծագած ջրանուններ՝ Բախշուն ճուր, Ավաքն ճուր, Անլիտին այսպուր, Սաղքթըզնին այսպուր, Բաղուն գ'օ, Մէլուն այսպուր, Աքունց քահիրիզ, Մաքունց գ'օ, Կանունց այսպուր ե այլն:

բ) Ավանդությանների հիման վրա առաջացած ջրանուններ՝ Դավաչիչազ՝, Թըղուն այսպուր, Անահական այսպուր, Պըլկակը՛լ, Փըթուշ այսպուր, Ջըղալ այսպուր:

* Առաջադիշով նշված բոլոր աշխատանքները գեղագիտ. են «Երիտասարդ գիտնականների II գիտաժողովում»: Մանիրանյաններ, ապրիլ, 2007թ.:

Անմահական այսպիսի Պատմում են, որ մի մարդ,որի ոտքերը գալվում էին, այս գյուղով լինելով անցնելիս ոտքերը լվանում է այս աղբյուրի ջրով,գալի անցնում է:

Թշուն այսպիսի - կապվում է Աղյկաբերդի լեռների հետ: Ըստ այս լեռների գնդապետի աղյկաբերդում մի աղյիկ էր ապրում, որը սիրում էր իր հայրենի երկրի աշունատնիկները կտրիճները մենք մայց ենք յոչնամին արշավում է այս վայրերը,մահ ու ավեր սփռում,գողում է նաև այս աղյկա փոռ պատահին: Աղյիկը սգում է ու երգվում սուրբ պահել իր սիրածի անքիժ հիշատակը (կտրիճները,գողում հաճախվելով ծավալվում է երկրներէկր,գալապատում բազում իշխանները կտրիճներէկ,լուրը հասնում է նաև ռախիներին: Աղյիկը պաշտպանվելու համար բերդի գագաթն ողյակ է կառուցում,պարսպում այն: Բայց զգալով փտանգը և զերադատելով մահը, քան ոտի տարվածուն դառնալը,աղյիկը գատկում է վար անդունդ:Ասում են,թե գատկելուց հետո աղյկա յոչնամին չբացվեց,սուր բազում է, օդի ծանրությունից,և աղյիկը սավառնում է օդում,խակ ժողովուրդը հավատն ու անգոր ծիգ էր թափում փրկելու աղյկան,բայց մարդկային արարածն անգոր էր մահի դնւմ:

Ասում են նաև, թե այնտեղ, ուր հավաքվել էր ժողովուրդը և աղաղակում էր թուրան, թուրան (բանեցեր), ի հավերժացումն այդ եղերական տեսարանի՝բազում է մի աղբյուր,որը հենց այդտեղն էր կոչվում է Թշուն այսպիսի:

Պրկակըր - Ասում են, թե մի քանի ճանապարհորդներ այս աղբյուրից ջուր են խմում,բայց ն զգում, նստում են հաց ուտելու և իրենց պարկում եղած պանիրը ուտում, պարկը գատարկւմ են:Ջարմանքից ատում են:

Պրկակըր ա էս այսպիսի:

Եվ դրանից հետո էլ աղբյուրն անվանվում է Պրկակըր:

Քարիատ -Ավանդությունը պատմում է, որ Քերը և Քարահունց գյուղերի միջև Պրկակըր աղբյուրի պատճառով այս գյուղերի բնակիչներն անընդհատ վիճում էին որոշելու համար, թե ով գյուղին է պատկանում այդ աղբյուրը:Լուրը հասնում է իշխանավորներին, որոնք էլ գալիս են ստուգելու: արդյոք Քարահունցում ուրիշ աղբյուր չկա: Քարահունցում կար եւ մեկ աղբյուր և որպես իրենց ասածը հաստատեն, թե ուրիշ աղբյուր չունեն, քարով փակում են աղբյուրի ակը՝ ջուր կտրելու համար:Հետագայում՝նորից աղբյուրը բազում է:Այդ պատճառով էլ անվանվում է Քարիատ:

Դամշավ յոչնամ այսպիսի - ավանդությունը պատմում է,որ արաբների դնմ մարտերում իրենք հայ զորքը այստեղ (Նորշեն) ջուր է պահանջում զորաստեղծից: Ձորաստեղը (դամշավ) հարվածում է ժայռին, որտեղից ջուր է բխում: Այս տարածքում այժմ էլ պահպանվում են դամշի և ձիու հետքերը:

Փրկյուշ այսպիսի - Ըստ ավանդության մի անգամ կինը նախարապան ամուսնու համար իսկ նաև մածուն է դնում պալատակում, բայց ամսն չի դնում բրդոշի համար: Ամուսինը ամառա փոխում է աղբյուրի ջրի հունը և աղբյուրի ակում՝ բրդոշ անում, ուտում, նորից նախկին տեսքի բերում:

Չղալ այսպիսի - Ժողովուրդը պատմում է, որ երբ այս աղբյուրը գամարում է զարնանը, ուրեմն տարին երաշտ է լինելու:

Գձարային օլջեկտի որև, հատկանիշի հետ առնչվող անվանումներ՝ Օխն այսպիսի, Ծօր այսպիսի, Դուրուսու, Մօսն, ճուր, Պուրտուդանուր, Վր՛տած այսպիսի, Փաղի նավ, Էրկու քլնանե, Հօխտ ճուր, Ելշմա այսպիսի, Կարմուր ճուր, Մըժ գ՛ղ, Կամչըբուլայն, Պրլանուր, Կարախայուր, որավուր ամառա: Յէր, ճուր, Բար, նօվ, այսպիսի, Դում այսպիսի:

դ) Թուրաններից և կենդանիներից ծագած ջրանուն-մանրատնդանուններ՝ Դալ այսպիսի, Դօնգուլ թուլաղ, Մուդուկնու ծով, Լուրթուլաղ, Չախկալաղաղ, Կուլին ծավ, Կըրըվախաղաղ, Չրնայսպիսի:

Ե)Այլ մանրատնդանուններից առաջացած ջրանուններ՝ Մըվն ճուր,Խույրվանդին այսպիսի, Դըզարա բաղէն այսպիսի, Մըծարլն ծով, Բուրսարլն այսպիսի,Վը՛սկէ խաչին այսպիսի,Լուգըն բաղէն այսպիսի, Բըրըլսամալ այսպիսի:

Գձարանուններից հատուկ է նաև տվյալ շրջանում գերիշխող հիմնական զբաղմունքից, մասնագիտություններից, նրանց մակամուններին անմացված անուններ ստանալը՝ Խառնատն այսպիսի, Դըլ՛է,Յուն այսպիսի, Կըլլոն և այսպիսի, Պօպեն այսպիսի, Էրին այսպիսի:

Տեղանունների մեջ որոշակի քանակ են կազմում սրբավայր-մանրատնդանունները՝ Սրբավայրերը՝ եկեղեցիներ,վարքեր,ուխտատեղիներ,մատուռներ, Մարտունու շրջանում շատ են:

Ըստ առաջացման աղբյուրի՝ սրբավայրերի անվանումները կարելի է բաժանել մի քանի խմբի 1.Կրոնական տեմքիններից առաջացած՝Ըստունուն, Սուրբ Աստվածածին, Յէլածե, Խաչե, Կաղնէն խաչ, Հընթըրըն խաչ, Վըրթօսուն խաչ, Ըխաղիհաղի խաչ, Թազա սուրի, Վաքըր, Ժամն և այլն:

2. Որևե տեղանունից առաջացած՝Ամարաւախանք, Սօսա սուրի, Յէր, Ճիրին տինչիքի [2] :

3.Ավանդության հետ կապված կամ արտաքին որևե տարբերակիչ հատկանիշով պայմանավորված, Օր՝ Պըրըվածառ, Ջարգ՛ա մարաք՛, Հօխտ կէմ, Ույըղատըղ, Տընչըր, Կալախ խաչ, Կարսիք ամլետարան, Հօխտ կաղնէ, Մըժ Նըխատան, Բառիաղ խաչ, Ըխաղը ծառ, Պիծի սուրբ, Հօխտ պըրըվածառ :

4. Անձնատնտեսներից առաջացած Չարունց օջախ, Մաթևոսյան օջախ, Սահակ Բոխանց օջախ, Հրաժանց սօրի, Լուսավորչի, Բիդուն սօրի, Նըրսանդանց սօրի, Մարտիրոսյան օջախ, Փայտունց խաչ, Դեղունց յեխձ, Մայունց սօրի:

Մանրատնտեսների այս խումբն առանձնանում և յուրահատուկ դիրք է գրավում: Կրոնական և աշխարհական մանրատնտեսները կարելի է դասակարգել մի քանի սկզբունքների համաձայն՝ հաստային, կատարվածքային և այլն: Մասնատնտեսները դասակարգումը վեր է հանում լեզվի և նրա լեզվների սոցիալ-հոգեբանական ու մտածողական գործունեության ոլորտների միջև առկա կապերը:

Ինստուային դասակարգմամբ առանձնանում են սրբավայր-մանրատնտեսների հետևյալ խմբերը:

ա) Եկեղեցիների, ավանդությունների հիմքի վրա առաջացած մանրատնտեսներ՝ Պրոքլաձառ, Սրժնի Նրիստակ և այլն:

բ) Կրոնական ծեսերի և հավատքի այլ առարկաների հետ կապված մանրատնտեսներ՝ Մարգարիտայի խաչ, Միքայելական օջախ, Բուլվանց ճղազ, Ռոտարան, Յեր, Գիրին տինչիլի, Ճոխտ խաչ, Խաչք, Տրչք, Մրտաղա խաչ և այլն:

գ) Սրբերի անուններով ծագած մանրատնտեսներ՝ Լուսավորչի, Չորաղու, Մարտիրոսյան, Գր. Լուսավորչի, Սուրբ Վարդան, Ըստուծուն:

դ) Կրոնական շինություններ և հաստատություններ նշանակող մանրատնտեսներ՝ Լուսավորչի, Յեր, Վանք, Վանքի, Վանքի, Վանքի:

Եկեղեցիների ու ավանդությունների հիմքի վրա առաջացած մանրատնտեսներն առանձնանում են իրենց պատկերավորությամբ: Ժողովուրդն իր անապատ նրեակալության շնորհիվ յուրովի է գեղեցիկ ավանդություններ: Այսպես՝

Պրոքլաձառ — Մի ժամանակ այդտեղ ապրում էր մի խառնակազ ճախկոպոս և նրա նա նրկար խառնակոպոսից ու ճգնությունից հետո պատարագ է մատուցում շրջակայքի ծառերը պատկերվում են՝ 3 անգամ կապնելով միմյանց իրենց գլուխները: Մի անգամ մի ջերմեանող հայ այդ խաչքը տեսնելու համար գալիս է և խոստանում վանքին նվիրել իր հետ բերած մի ջորքեմ ոսկին: Խաչքից դուրս պատարագի ժամանակ սկսում է նրկմունել յետ արդյոք ոսկու հետ ջորին էլ պետք է նվիրի. թե ոչ, և այդ նրկմունությունից ողջունի ժամանակ ծառերը չեն խոնարհում իրենց սաղարթախիտ ճառարները: Երբ ուխտավորը հայտնում է, թե ջորին էլ է տալիս, նաև այլ նվերներ, ճախկոպոսը խաչք է պատարագ մատուցում և իրաշքը կատարվում է:

Ինչպե՞ս ծառ — Ըստ ավանդության նրե այս ծառի տակով անցկացվում է հազող նրեխան, հազն անցնում է, և հիվանդը բուժվում է:

Տրչք: Այս ծառի փշակը բացվել է կաթակից, որի մեջ տնդավորվում են 100 մարդ: Ըստ առանձնության այստեղ այս ծառի մոտ, հանգստացել են Մ. Մաշտոցը և Սահակ Պարթևը, որի պատճառով էլ ծառը սուրբ է համարվել:

Միքայել-մանրատնտեսների ստեղծման հիմքում ընկած են անվանակոչման հետևյալ մեղմունքները:

ա) ըստ անձնատնտեսների. այս դեպքում ժողովրդի՝ իր համար թանկ դեմքերի անունները հաճախակի են ծագում և, ամենա, նաև տվյալ ուխտատեղին հիմնադրողի անունը Օր: Հրաժանց սօրի, Նըրսանդանց սօրի, Փայտունց խաչ, Մ. Վարդան յեխձ, Մաթևոսյան օջախ:

բ) ըստ անվանակոչվող օբյեկտների բնորոշ, անհատիչ առարկաների. եկեղեցին ըստ իր բարով է կառուցված անվանել են Լճաբնուր յեխձ, գյուղում եղած եկեղեցու կողքին (Սոհնա լիճ) կառուցվել է մի նոր սրբավայր, կոչել են Թագա սօրի, խաչքարը թվերի մեջ է Բոլեն խաչ և այլն:

Սրբավայր-մանրատնտեսները խմբավորվում են քառակազմական հետևյալ խմբերում:

ա) անապատ հողովով դրված — անք, ունք հոգնակերտ մասնիկներով գերդաստանի անուն օջախ՝ Միքայելական օջախ, Շրվիդունց օջախ, Տոգունց օջախ, Բրդեբանց օջախ:

բ) անապատ հողովով դրված — անք, ունք հոգնակերտ մասնիկով գերդաստանի անուն + սօրի, Պրոքլաձառ սօրի, Նըրսանդանց սօրի, Հրաժանց սօրի:

գ) անապատ հողովով դրված — անք մասնիկով գերդաստանի անուն + ճղազ՝ Ըստանց ճղազ, Աղանց ճղազ:

դ) անապատ հողովով նշող բառ + ինստուտային դիր կատարող բառ (կրոնական բովանդակության բառ) հիմք սօրի, Բանիստ խաչ, Գրեմ յեխձ, Թագա սօրի, Վրկալ խաչ, Կարմիր ալետարան:

ե) անապատ հողովով յեխձ՝ Մ. Վարդան յեխձ, Մ. Կոմանեն յեխձ, Մ. Գրիգորիս յեխձ, Մ. Միստ (լիճ):

Իմանատնտեսների այս խմբում որպես բաղադրիչ երբեմն հանդես են գալիս ինստուային այլ դաշտի պատկանող բառեր: Դրանք են

ա) ծառանուններ՝ Յեր, Գիրին տինչիլի, Ճոխտ կաղն, Կաղն և խաչ:

բ) խաչ բառը՝ Սօրի, Սոխ, Մրտաղա խաչ:

Մեծ տարածում ունեն այն մանրատեղանունները, որոնք առջև գում են քրիստոնեական ծիսակարգին: Այսպիսի մանրատեղանունները հիմնականում կազմված են խաչ, ամենաբարձր նահատակ, յիշեմ, ժամ, վանք, մատաղ, ուխտ և այլ բառերից: Օր. Կաթմիր ամենաբարձր, Յկաթմիր ամենաբարձր խաչ, Ուղտարան, Կաթմիր խաչ, Մրտաղա խոր, Պիծի նրիատակ:

Մանրատեղանունների մի առանձին խմատալին խումբ են ներկայացնում դաշտանունները: Ուտ խմատալին դասակարգման առանձնանում են դաշտանունների հետևյալ խմբերը՝ այսովայ օբյեկտի որևէ հատկանիշի հետ անջվող անվանումներ՝ Գունել, բաղ, Լեն պատեմ, խնամած արտ, Էրկան թաղա, Հաչա սորան, Դավալու խոր, Կրնդակ ճուղգոր, Էրկան դարա, Միջ տափ և այլն:

բ) տվյալ օբյեկտի սեփականատիրոջ անվան հետ կապված մանրատեղանուններ՝ Ղազուն, դոքի, Մարդուն կալ, Էթամեն բաղ, Դշտանանց տափ, խաչուն արտ, Բթանց չափար, վարդուն տղի, Դղարանց խելվան, Ղազուն հարթ, Բուղաղա վրդ և այլն:

գ) տվյալ օբյեկտի սեփականատիրոջ մասնագիտությունից, զբաղմունքից, անվանումից ածանցված մանրատեղանուններ. Տրվրաձեն տափ, Բուրուն կալ, Չարչու խրմատ, խրատուն կալ, վրդթըրեյին տափ, Չարանչուն տափ, Լրդեյին չափար, Չիլեգանց խրմատ, Բուխանց տան Թուփալին դուգ, Կլալանց տոթեր և այլն:

դ) ընդ մանրատեղանունից ածանցված մանրատեղանուններ՝ Կրթնալալուրին տոշ, Կուկուն տոշ, Լուդուն տակ, Իմիթմանա վրդ, Կոհակլեն յալ, Ագի կաղուն յալ, Կոհակլեն գունել, Դիլիխան հրդ, Դարաղըշաղա կալեր և այլն:

Դաշտանուններում մեծ թիվ են կազմում բաղադրյալ մանրատեղանունները: Բաղադրյալ դաշտանուններում հանդիպում են բառակապակցության հետևյալ եղանակները՝ որոշիչ - որոշյալ, հատկացուցիչ - հատկացյալ, Այսպիսի կապակցություններում որպես գերադասում անդամ հանդես են գալիս բաղ, արտ, տափ, հրդ, դաղա, հարթ, ծոր, Թահիթ, կալ, պատակ, տղի, դուգ, խելվան, ճիղալ, կում, Կիլիմա, լաղ, բանդ, բաղ, ծոր, վրդ, Դ ալ, խոր, լալա, դոքի, խրմատ, տոշ, ծրմակ, քոչ, ափար, գահման, գամի, ծալ, բառերը:

Որոշիչ-որոշյալ կառուցվածքի բաղադրյալ դաշտանուններում որպես ստորադաս անդամ հանդես են գալիս.

ա) ածականներ՝ Պղնձի կալ, Պուլոր պուրն, Էրկան դարա, Լեն պատակ, Պատակ արտ, գունել, բաղ, Յկր, բանդ, Կրն թաղ, Նրրի, թաղ:

բ) գոյական որոշիչներ՝ ախողական հովվով Դղզան ավալոր, Պոձկա ճղգոր, Կիոքի քոչ, Գնաղուկ գամի, Ղազ բաղ և այլն:

բ) ընտանական հովվով Էրկրեն հրդ, Ծորեն դարա, Կիլին արտ, Խոգին փիթմա, Բիլանա դալ, Մոշին բաղ, Հոտուն քոչ, Դումն բաղ, Սարեն վրդ, Մովեն հրդ, Խույին արտ, Մրտեն կալ, Կիտեն արտ, Խույին յալ և այլն:

գ) ղերբայներ՝ Խանձած արտ, Էրած բաղ, Խաղ ընլի արտ և այլն:

Այսպիսի մանրատեղանուններում բաղադրիչների կապը հիմնականում ստորադասական է: Որոշիչ - որոշյալ կառույցները տվյալ մանրատեղանվան նկարագրություններն են՝ հիմնական հատկանիշի շնչադասում:

Հատկացուցիչ - հատկացյալ կառուցվածքի բաղադրյալ դաշտանուններում որպես հատկացուցիչ հանդես են գալիս

ա) անձնանուններ՝ Կրկրքին կալ, Կարակիին բաղ, Բրթուն բաղ, Սուն դալ, Նիսիին տղի, Յիլիամեն յալ, Իտուն քոյտ, Բախուն բաղ, Ըրտեմեն չալա, Խուդուն բաղ, Անագիլին բաղ և այլն:

բ) տոնմանուններ՝ Մադուն դոքի, Ծիրանանց բաղ, Մատունց տափ, Ըղբարանց ծրմակ, Փարունց չափար, Լրդմանանց վրդ, Չարչունց տուն, Հարթմունց գունել, Դղբարանց խելվան և այլն:

գ) անձնանիշ հատարակ անուններ՝ Շկալ հարթ, վրդթըրեյին տափ, Չարանչուն տափ, Դղբալեն դարա, Թորքեն խրմատ, Բուխանց տափ, Չարչու խրմատ, Թորքեն դուգ, Խարունց բաղ, Կոմսոսյեն դարա, Խրատուն կալ և այլն:

դ) այլ մանրատեղանուններ՝ Կթնալալուրին տոշ, Կոհակլեն յալ, Բարահարթի գունել, Դիլիխան հրդ, Ագի կաղուն յալ, Կուկուն տոշ, Իմիթմանա վրդ, Դարաղըշաղա կալեր և այլն:

Հատկացուցիչ-հատկացյալ կառույցներում ընդգծված է տվյալ օբյեկտի վերաբերությունը կամ պատկանելությունը:

Դաշտանուններում հանդիպող դաշտ խմատալին խմբին պատկանող բառերն են՝ բաղ, արտ, տափ, դարա, կալ, պատակ, հարթ, տղի, դուգ, խելվան, ճիղալ, բանդ, վրդ, Դ ալ, թալա, դոքի, խրմատ, տոշ, ծրմակ, չափար, գահման, գամի, ծալ:

լեռնանուն կարող են դառնալ «վեռ» իմաստային դաշտին պատկանող բառերը: «Լեռ» բառային դաշտին պատկանող բառերից Մարտունու շրջանում ավելա են թումբ, խույթ, քար, բլրիք, փաթով, տոշ, սար բառերը: Տարբերվում են լեռնանունների հետևյալ իմաստային խմբերը՝
ա) անձնանուններից կազմված լեռնանուններ՝ Տուդունց բլր՝, Արիականց բլր՝, Սալաթունց բլր: Բաբուն տոշ, Բվանա քար և այլն:

բ) որևէ արտաքին հատկանիշ արտահայտող բառից կազմված լեռնանուններ՝ Պուլլուր թումբ, Բալալ խույթ, Կարսուր բլր՝, Ղաշա բլր՝, Դիբբզգվդ, Բրկաթ, թումբ, Ալի խույթ, Ձևքար, Տոն քար, Դոսոթ քար և այլն:

գ) թռչնանուններից կազմված լեռնանուններ՝ Աղավու քար, Ղուզդունա բլր՝ և այլն [3]:
դ) այլ մանրատեղանուններից կազմված լեռնանուններ՝ Յվսիծու խույթ, Մլ՞ժ պրաակա տոշ, Մարա ըխալիրին տոշ, Կյնալսպուրին տոշ, Կուկուլն տոշ և այլն:

ե) ավանդությունների հիմքի վրա առաջացած լեռնանուններ՝
Լուսավորչի սար - Ավանդության համանման սարը Լուսավորչի է կոչվել Լուսիկի կամ Լուսինեի անունով: Նա ունեցել է 3 եղբայր: Երբ եղբայրները մահանում են, մեկին թաղում են Ամարասում, մյուսին՝ Նաչնաչում, երրորդին՝ Ղշա սարում: Լուսիկն էլ խնդրում է հարազատներին, որ մահից հետո իրեն թաղեն մի այնպիսի տեղ, որտեղից նա կկարողանա հսկել եղբայրներին: Նրան թաղում են մի քաղանքում, որտեղից երևում են եղբայրների գերեզմանները:

Ծածարա - Ժայռը կնոջ տնք ունի երեխան գրկած և կրծքից ցուր է կալում: Ավանդությունն ասում է, թե մի անգամ մի հարս սկեսորից տանջված, երեխային գրկում, գնում է այդտեղ և խնդրում Բերսին, որ քար դարձնի իրեն ու երեխային: Այդ կնոջ խնդրանքը կատարվել է, կրծքից էլ ցուր է հոսել, ու ժայռը ուխտատեղի է դարձել ստնտու մայրերի համար:

Ռքակրհան - Այս ժայռի մասին պատմում են հետևյալը: Յոթ րույր ճանապարհ էին գնում և չպիտի հետ նայեին, որովհետև եթե մեկը շրջվեր, հետ նայեր, յոթն էլ քար պիտի դառնային: Փորը բույր չի համբերում, հետ է նայում, և յոթ րույրերը քար են դառնում, գոյանում է Ռքակրհան ժայռը:

Ըրկաթե թումբ - Ըստ պոլտացիների բլուրն այսպես է կոչվել, որովհետև հենաքանները այս բլրի ասեղնաքարձր կենտում ամրացրել են մի երկաթե եռանկյունի աշտարակ, որից էլ այն ստացել է այս անվանումը:

Ըստ կազմության լեռնանունները հիմնականում բաղադրյալ են, կազմում են բառակապակցություններ, որտեղ բաղադրիչներից մեկն անպայման տեսականիշ բառ է:

Բառակապակցական մանրատեղանուններում բաղադրիչների կապը սոսորդադասական է, և նրանց միջև առկա են որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերությունները: Որոշիչ-որոշյալ կառուցվածքի լեռնանուններում որպես որոշիչ հանդես են գալիս.

1. ածականը՝
ա) որակական ածականներ՝ Պուլլուր պուլանը, Բաչալ խույթ, Կապուտ բլր՝, Կարսուր քար, Ալի խույթ, Լ՞րկան քար, Ձևք քար, Պիծի թումբ, Պուզտի քար և այլն:
բ) հարաբերական ածականներ՝ Պղնձի կալ՞, Ըրկաթե թումբ և այլն:

2. գոյականը՝
ա) ուղղական հոլովով՝ Տոն քար
բ) տրական հոլովով՝ Յվսիծու խույթ՞, Օուխըվէրին տոշ, Կլլըլն խույթ՞, Բամուն խույթ՞ և այլն:
Հատկացուցիչ-հատկացյալ կառուցվածքի մանրատեղանուններում որպես հատկացուցիչ հանդես են գալիս.

ա) անձնանուններ՝ Աչաթեկին թումբ, Բվանա քար և այլն:
բ) տոհմանուններ՝ Արեականց բլր՝, Մըրադանց բլր՝, Սալաթունց տոշ, Տուդունց բլր՝, Պալունց դալա և այլն:

գ) անձնանիշ հասարակ գոյականներ՝ Փաշու պերթ, Բագին թումբ և այլն:
դ) թռչնանուններ՝ Աղավու քար, Ղուզդունա բլր՝ և այլն:

ե) այլ մանրատեղանուններ՝ Մլ՞ժ պրաակա տոշ, Ղուզուն տոշ, Ղարա ըխալիրին տոշ, Սորիկն խույթ, Կուկուլն տոշ և այլն:

Գրականություն

1. Ե. Լալայան, Երկեր, II, ՀՍՍՀԳԱ, 1988:
2. Մ. Բարխուդարյան, Արցախ, Եր., 1991:
3. А. Суперанская, Что такое топонимика, М.: Наука, 1985.

«Մերոց Մաշտոց» համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոն

2 (15), 2007

ՀՏԴ 809.198.1

Լեզվաբանություն

ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՁԸ ՀԱՅ
ԼՃԱԼԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԼՆՁ՝

Շ.Պ.Սաղաւն

Նորաբանությունն իբրև լեզվական իրողություն, բազմազան ու հաճախակի դրսևորումներով հանդես է գալիս բառային մակարդակում և առավելապես ուսումնասիրվող բառագիտության բանում: Լեզվաբանության մեջ *բառային նորաբանություն* արտահայտությունը երկխմաստ գործածություն ունի. մի դեպքում այն՝ իբրև բառագիտական միավոր, հակադրվում է լեզվի այլ մակարդակներին հատուկ նորաբանություններին, մի և՛ դեպքում էլ՝ նույն բառային մակարդակում՝ իբրև երկպայանքային արտահայտությամբ կազմություն հակադրվում բովանդակային կողմին առնչվող նորաբանություններին: Մենք հակված ենք նշան արտահայտությունն առաջին իմաստով գործածելուն, քանի որ բառը *ձև* և *բովանդակություն* միասնությամբ ստեղծված միավոր է և ինքնին չի կարող հակադրվել նշված տարրերից ու մեկին:

Նորաբանությունների հանգամանալից ըննությունը հայ լեզվաբանության մեջ դեռևս բացակայում է: Թե՛ տեսական, թե՛ գործնական ուսումնասիրություններում գերակշռում են ավանդական հայագրքները, զգալիում է նորաբանությունների միօրինակ դասավարդման կարիքը: Առայժմ առկա են հետևյալ խմբավորումները.

1. *բառային, իմաստային, հեղինակային* (1,204. 2,209), Բ. ընդհանրացող. մեկուսացած (3,170), ԻԻ. բուն // լեզվական, հեղինակային // անհատական (4,182. 5,135. 6,216):

Առաջինն ամենաընդունվածն է: Թվում է՝ այն հենված է ձևաիմաստային դասավարդման վրա. նորաբանությունները՝ իբրև բառային միավորներ, դիտվում են երկվայանքային արտահայտությամբ կազմություններ: Ձևի և բովանդակության միասնական կամ առանձնացող դրսևորումներով նրանք ի հայտ են բերում տեսական տարբերություններ՝ բառային իմաստային: Ընդ որում՝ ավանդաբար *բառային* են ընդունվում թե՛ բովանդակության ու արտահայտության դիտվածքում և թե՛ միայն արտահայտության դիտվածքում նոր բառերը: Կարծում ենք՝ նպատակահարմար է առանձնացնել նշված երկու տեսակի բառերը, քանի որ ձևաիմաստային հատկանիշով նրանք տարբեր միավորներ են (լեզվաբանները հենց այդ երկու խմբերն էլ առանձնացնում են՝ բառային նորաբանությունների ծագումը բնկելիս): Ըստ այդմ կունենանք երեք տիպի նորաբանություններ՝ *ձևաիմաստային, ձևային և իմաստային* (հեղինակները նոր են ընկալվում բովանդակության ու արտահայտության տեսակներով, որոնքով *համազանց, հնծուստատնքատ* և այլն, երկրորդները արտահայտության դիտվածքում նոր բառեր են, որինակ՝ *ինքնաձիգ* (ավտոմատ), *հիշատար* (պրոցեսոր), *տեղեկույթ* (ինֆորմացիա), իսկ երրորդները՝ բովանդակության դիտվածքում նոր բառերը՝ *Լջ* (տնքստի որոշակի րանակ, որը գոյացրվում է համակարգչի կրթանին), *կամուրջ* (երկու զանգերը կապող սարք)¹ և այլն:

Լեզվաբանները տվորաբար նշված խմբում իբրև առանձին ենթախումբ են ընդունում հեղինակների կերտած բառերը՝ քննարկելով դրանց գեղարվեստական արվերը համատեքստում: Եթե ուսումնասիրելու լինենք այդ բառերի ձևաիմաստային դրսևորումները, ապա կունենանք, որ դրանք ոչնչով չեն տարբերվում նշված նորաբանություններից: Հեղինակի կերտած բառը նույնպես կարող է նոր ընկալվել թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության դիտվածքներում և թե՛ միաժամանակ: Այսինքն՝ հեղինակի կերտած բառը կարող է նոր լինել ոչ միայն ձևով, այլև իմաստով: Այս տեսակետից *հեղինակային բառը* ոչնչով չի տարբերվում լեզվի համակարգում արդեն առկա *բառային նորաբանությունից* (իհարկե, այստեղ նկատի ունենք կոնկրետ որևէ

* Առաջանիշով նշված բոլոր աշխուտանքները զեկուցվել են «Էքիստատար գիտնականների II գիտնաժողովում»: Մոնեխանկերտ, օտոբի, 2007թ.:

առանկա հատվածի համար նոր դիտարկվող հեղինակային կազմությունները: Նրանց միջև բաժանակցական տարբերությունը ձևախմբատային դասակարգման համար էական չէ. բառային-գաղափարային-հեղինակային (նորաբանություններ) անմիջական հակադրություն գոյություն չունի կարող: Անհատական նորաբանությունները ոչ անհատական նորաբանություններից բաղկացած են այլ հատկանիշով (հեղինակի անվան կարևորություն), որն ուրիշ դասակարգման հետ է ասելու: Մյուս հիման վրա էլ Մ. Աբեղյանը ընդունում է *հանրական և անհատական բառակազմություններ անվանումներ* (7, 159):

Այսպիսով կարծում ենք՝ նպատակահարմար կլինի *բառային նորաբանություններն* ըստ նպատակային արտահայտության բաժանել երեք խմբի՝ *ձևախմբատային, ձևային, խմբատային*՝ յուրաքանչյուրն քննարկելով լեզվի գործառական բոլոր շերտերին հատուկ նոր համարվող բառերը:

Երկրորդ դասակարգմամբ հաշվի է առնվում նոր ստեղծված լեզվական միավորի արժանավելի չափը հասարակական հաղորդակցման ոլորտում: *Հնդհանրագոյ նորաբանությունները* ենթադրաբար վաղ յոթ ու չորս ամիս է անցնում բառապաշարի գործուն շերտ՝ ի հակադրություն *մեկուսացած նորաբանությունների*, որոնք տարածվելու միտում չունեն՝ անմիջական հաղորդակցմանը չմասնակցելու պատճառով: Կարծում ենք՝ այս դասակարգումը հատկանշային բնույթ ունի. նախանշում է նոր ստեղծված բառի հետագա ճակատագիրը և կարող է վերաբերել միայն նրա գործածումից որոշ ժամանակ անց: Մակայն այս դեպքում նման բառի *նորաբանություն* դիտարկվելն արդեն իսկ իարարելական կլինի: Ինչպես Լ. Լեզայանն է նկատում «Հնդհանրագոյ նորաբանություններ են այն բոլոր նոր բառերը, որոնք՝ կարճատև թե՛ երկար ժամանակակիցություն, անընդհատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում են բառապաշարի գործուն շերտին և հենց դրանով էլ դադարում *նորաբանություն* լինելուց» (3, 170):

Երրորդ դասակարգման հիմքը նոր համարվող բառերի հակադրությունն է՝ ըստ ստեղծման նպատակայնության: *Ընդհանուր // լեզվական նորաբանությունների* գործածության անվանողական է., երանք ստեղծվում են հասարակական հաղորդակցմանը ծառայելու նպատակով և կայունանում են լեզվական համակարգում: Ժամանակի ընթացքում նրանք բառապաշարային տեղաշարժեր են ունենում, անցնում գործուն շերտ, այնտեղից էլ՝ հնաբանությունների շարքը, կամ իբրև նորաբանություն գործածվում համապատասխան գիտության ոլորտում: Լեզվական այս միավորներն անմիջապես կապված են արտալեզվական գործոնների հետ և բառաշերտային ակտիվ անցումայնությամբ են օժտված: *Խոսքային/անհատական նորաբանությունները*, ի հակադրություն նշվածի, կապված են որևէ անհատի հետ, արտագոյում են նրա ստեղծագործական մտածելակերպը և գործում են խոսքային մակարդակում: Այս միավորները բառապաշարային տեղաշարժեր համարյա չեն ունենում և որևէ անհատի ստեղծագործության արգելափակ են: Ասանագիտական գրականության մեջ նման բառերը քննվում են համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի ոչ հստակ սահմանազատմամբ: Իբրև *նորաբանության* ենթատեսակ՝ նրանց ուսումնասիրությունը ևս պետք է կատարվի որոշակի ժամանակահատվածի հաշվառմամբ: Նրանք այսօր լեզվաբանական գրականության մեջ արդեն իսկ *նորաբանություն* չեն համարվում անցած դարի 60-70-ականներից գործածվող բազմաթիվ բառեր (հեռուստացույց, տիկերազնաց և այլն), ապա համաբանորեն իբրև *հեղինակային նորաբանություններ* չպետք է քննարկվեն նաև Գր. Նարեկացու, Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Պ. Լևակի և այլոց կերտած բառերը (սրանք պետք է ուսումնասիրվեն այլ ենթավերնագրի տակ): *Հեղինակային բառերի* համակարգից նորակազմ են դիտարկվում միայն տվյալ ժամանակաշրջանի հետ առնչվողները: Իհարկե, սա ձևական տարանջատում է և ընդհանրապես կապ չունի *հեղինակային բառերի* էության, ուսումնասիրության և առավելագույն բառապաշարում նրանց գրաված դիրքի հետ: Այս վերջին հանգամանքը ևս հայ լեզվաբանության արդիական խնդիրներից է: Ինչպես հայտնի է, լեզվաբանների մեծ մասը *բառապաշարի ոչ գործուն շերտի* ենթատեսակներ է ընդունում *նորաբանություններն* ու *հնաբանությունները*: Ավանդաբար *նորաբանությունների* բաժնում էլ քննարկվում են *հեղինակային բառերն* ընդհանրապես¹, նույնիսկ այն դեպքում, երբ չի կարևորվում նրանց նոր լինելը: Նրան համեմատելու լինենք *նորաբանություններն* ու *հեղինակային բառերը*, կտեսնենք մի շարք տարբերություններ:

1. *Նորաբանությունները* (ինչպես և *հնաբանությունները*) իրականության գաղազգումներից անմիջական կախում ունեն. ժամանակի գործոնը նրանց Լույսան, բնորոշման համար գլխավոր է:

Մինչդեռ *հեղինակային բառի* համար սա առաջնային արժեք չունի, քանի որ նրա լազի հատկանիշն անհատական գործուն է: Համաժամանակյա և տարածամասնակա հայեցակետերով ընկճվելիս՝ *հեղինակային բառերը* բառապաշարային տեղաշարժերի չենթարկվում, նրանք մեկնորմիշտ կապված են կոնկրետ անհատի և իրենց հարապահասման հետ: Նույնիսկ այն փաստը, որ Լ. Ղ. Աղայանը Նո. Չարենցի կերտած *ողորմաբար, թելիկատատանում, գլխավորաբար* և այլ բառերը համարում է հնացած՝ դրանք աշխարհաբար անցած շրջանի արդյունք լինելու պատճառով (3,138), առաջին հայացքից էլ թվում անհավանական: Ընդհակառակ է՝ նշված բառերը համեմատենք նույն խմբի *տանտունը, ցգը, դիվանատուն* և այլ բառերի հետ, և ակնհայտորեն պարզ կլինի, որ դրանք հնագույն լինելու հնդհանրապես կապ չունեն. դրանք Չարենցի կերտած բառերն են և ուսումնասիրվում են միայն որպես այդպիսիք:

2. Հեղինակային բառը բազմագործառնող է. հնացած բաղադրիչ պարունակելով անտեքստում կարող է կատարել *հնարաբանության* դեր կամ հակառակը՝ կառուցվածքում ունենալ *նորաբանություն*՝ հեղինակային բառը հանդես կգա իբրև այդպիսին: Օրինակ՝ Մ. Խաչատրյանը կերտած *մելիքազու* բառը, կամ Հ. Խաչատրյանի կերտած *ուղտազորք*. Հովհ. Գուկասյանը ստեղծած *հռոմանայ* և այլ բառեր: Ակնհայտորեն, նման բառերը չենք կարող ուսումնասիրել իբրև *նորաբանություններ*:

Այսպիսով, *հեղինակային բառերն* առանձին խումբ են և բառապաշարի ոչ գործուն շերտու հաբխանում են *նորաբանություններին* ու *հնարաբանություններին*: Կարծում ենք՝ այս տեսակետը գերազանցելի է Հ. Պետրոսյանի դասակարգումը, ըստ որի՝ բառապաշարի ոչ գործուն շերտի խմբերն են՝ *հազվադեպ գործածվող բառեր, հնարաբանություններ, նորաբանություններ, մասնագիտական բառեր, անհատական բառաստեղծություններ, դիպվածային բառեր* (8,115):¹

Ընդաբանները տարակարծիք են նաև *նորաբանություն* և *նորակազմություն* տերմինների վերաբերյալ: Ոմանք դրանք ընդունում են իբրև համարժեք անվանումներ: Միտում կա նաև *նորաբանություն* անունը նոր առարկա, նրևույթ արտահայտող բառերին վերագրելու, իսկ հեղինակային բառերն անվանել *նորակազմություններ*: Մ. Մկրտչյանը նախընտրում է *նորակազմություն* տերմինը: Կարծում ենք՝ նշված բառն իմաստային նեղ ընդգրկում ունի, այն չի տարածվի *իմաստային նորաբանությունների* վրա, քանի որ վերջիններս նոր կազմության հետ առնչություն չունեն:

Ոճագիտությունը, օգտվելով բառագիտության սահմանումներից ու դասակարգումներից, առավելապես զբաղվում է հեղինակային նորաբանություններով: Ռուս լեզվաբանության մեջ վարյուց է արժարժում այն հարցը, որ հեղինակային բառերը *նորաբանություններ* կոչվեն այնքան էլ հարմար չէ: Գերադասելի է *օկազիոնայիզմ* (լատ occasio - դիպված) անվանումը, որն արտացոլում է հենց նման բառերի լուրջությունը՝ դիպվածով ստեղծվելը, մեկանգամյա գործածվելը (9,63): Այս տերմինն ընդունվեց լեզվաբաններից շատերի կողմից: Հայ լեզվաբանության մեջ նման միտումը դեռևս ամրակայված չէ, առանձնապես ռճագետների կողմից, որոնց առավելապես հետադարձում են այդ բառերի ոչ թե նոր լինելը, այլ բառակազմական ու ռճական առանձնահատկությունները: Հիշտ է՝ յուրացվեց *օկազիոնայիզմ* տերմինը՝ հայերեն համարժեքով *դիպվածական բառ*, սակայն վերջինս միանշանակ դիտվում է միայն որպես *անհատական նորակազմության* տեսակ:

Ոճագիտության մեջ անհատական նորակազմության ենթատեսակներ են ընդունվում հետևյալ խմբերը՝ *պոտենցիալ, դիպվածական, հեղինակային* (4,184) // *դիպվածական, հեղինակային* (10,6. 5,140), *դիպվածական, պոտենցիալ* (11,213): *Պոտենցիալ-դիպվածական-հեղինակային* (թառեր) հակադրությունը հիմնված չէ միահատկանիշ դասակարգման վրա: Նշված անվանումները ստեղծված բառը բնութագրում են տարբեր կողմերից: Եթե *պոտենցիալ բառերը* համարվում են «լեզվի կենսունակ բառակազմական կադապարներով» (4,184) կազմված միավորներ, ապա *դիպվածականները* հանպատրաստից ստեղծված, արտառոց կազմությանը բառեր են, իսկ *հեղինակայիններն* ունեն «հեղինակային ընդգծված դրոշմ», «նրբատիպություն, անսովորություն և լեզվի բառակազմական օրինաչափություններից շեղումներ» (4,207): Ինչպես ներում է սահմանումներից՝ *պոտենցիալ* և *դիպվածական, հեղինակային* բառերը հակադրվում են բառակազմական տեսակներից՝ իբրև բառակազմական օրինաչափությամբ և անսովոր

կազմությանը միավորները: Այսինքն նրանք ներկայացնում են միևնույն հատկանիշի տարբեր կտրվածք: Այստեղ կարծես չի արդարացվում նորոգող *հեղինակային* անվանումը, որովհետև *ատոմնեցիայ* և *դիպլոմատական* բառերն էլ ինքնին հեղինակային են: Իզոլը չէ, որ հենց Ս. Էլոյանն էլ խոստովանում, որ *դիպլոմատական* և *հեղինակային* բառերի «տարբերակումը խիստ օտարաբերական բնույթ ունի և ինչ-որ չափով նաև պայմանական է. քանի որ նրկուսն էլ միևնույն նրկույթի դրսևորումներն են», «Նրկուսն էլ վերջին հաշվով հեղինակային են և նրկուսն էլ լրացությունների շնկում են լեզվի բառակազմական ավանդական օրինաչափություններից ու լեզվական նորմայից...» (4, 196): Այս է պատճառը, որ լեզվաբանի կողմից նույն բառը միավանանակ ընդունվել է. որպես և *դիպլոմատական*, և հեղինակային (4,200):

Դիպլոմատական բառերի նաև հանապառաստից ստեղծված լինելու փաստը տարբերակիչ հատկանիշ չէ, քանի որ *պոտենցիալ բառը* նույնպես կարող է ստեղծվել անմիջականորեն որևէ առիթի, առանձնապես, որ այն կերտվում է լեզվում արդեն առկա կենսունակ կաղապարով: Այսպիսով մեր կարծիքով հեղինակին ստեղծած բառը որոշակի հիմունքներով (առաքելապես՝ բառակազմական) կարող է ունենալ *պոտենցիալ* կամ *դիպլոմատական* հատկանիշ: Արանք ստորակարգվում են *հեղինակային* հատկանիշին: Եթե որևէ մեկը ստեղծի չեզոք նրանգավորմամբ, կենսունակ կաղապարով բառ, պալա այն կանվանվի *պոտենցիալ նրանգով հեղինակային բառ*, իսկ անստոր կազմությանը բառ՝ *դիպլոմատական նրանգով հեղինակային բառ*: Ս. Էլոյանը *պոտենցիալ* և *հեղինակային* բառերի տարբերություններից է համարում նաև առաջիններում հեղինակային դրոշմի բացակայությունը: Կարծում ենք՝ այս դժարում խոսքն այն պոտենցիալ բառերի մասին է, որոնք չեզոք նրանգավորմամբ և անվանողական արվելով են հանդես գալիս:

Չնայած վերը նշված դիտարկմանը՝ լեզվաբանը հետագայում էլ անհատական-ոճական նորաբանություններում տարանջատում է *դիպլոմատական* և *հեղինակային* տեսակները՝ հիմնավորելով. «Անհատական-ոճական նորաբանությունների մեջ մենք տարբերակել ենք՝ ա) *դիպլոմատական* և բ) *հեղինակային* տեսակները: Այս նրկու տիպերն էլ անհատական ստեղծագործության արդյունք են, բայց *դիպլոմատական* բառերում առավել շեշտվում է առիթի, պատի, դիպլոմադի և ընդհանրապես իրադրության պատհանգով ստեղծված լինելու հանգամանքը, իսկ *հեղինակային* տեսակի դժարում՝ պատկերավորության, բանաստեղծական ներշնչանքի գործոնը» (10,6): Կարծում ենք՝ նշված տարբերակիչ հատկանիշների իրականում հեղինակային բառերի ստեղծման պատճառն ու նպատակն են ներկայացնում: Իրադրությունը հեղինակային բառի ծագման պատճառ կարող է լինել (առաքելապես՝ առօրյա խոսքում), իսկ թե ինչ նպատակներով է այն կերտվել, դա արդեն անհատական գործոն է: Եվ որպես պատկերավորման միջոց կարող է ծառայել նաև *դիպլոմատական բառը*, օրինակ՝ հենց Ս. Էլոյանի գիտարկումով միավանանակ և *հեղինակային*, և *դիպլոմատական* համարվող *մասիսակերտ, կակաշվել* (ՏՇ) բառերը: Այսպիսով՝ կարծում ենք՝ Ս. Էլոյանի կողմից *հեղինակային* և *դիպլոմատական բառերի* տարանջատումը հարաբերական դիտարկելու պատճառներից մեկն էլ այն է, որ նույնացվել են տեսակն ու հատկանիշը, բառի ստեղծման նպատակն ու պատճառը:

Հեղինակային և *դիպլոմատական* բառերի տարբերակում է կատարում նաև Լ. Ազեկյանը: Նշված նրկու միավորների միջև՝ իբրև էական տարբերություն, նա ընդունում է գրական լեզվի բառապաշարը հարստացնելու գործոնը: Բառակազմական անսովոր կազմությանը միավորներն անվանելով *դիպլոմատական* նա նշում է. «*Դիպլոմատային բառերը* հեղինակային այն նորակազմություններն են, որոնք գործ են ածվում բանավոր-խոսակցական լեզվում, հրատարակամասության մեջ, գեղարվեստական ոճում և հատկապես մամուլում, խոսքային տվյալ իրավիճակում նույնի թեղադրանքով կամ հեղինակի ոճական որոշակի նպատակադրումով՝ խոսքն ավելի համոզիչ, պատկերավոր դարձնելու համար» (5,140): Կարծում ենք՝ այս քննադատության մեջ չկա այնպիսի տարբերակիչ հատկանիշ, որով *դիպլոմատական* բառը հեղինակային բառից առանձնանար իբրև ինքնուրույն միավոր:

Անհատական բառաստեղծությունների նրկու ենթատեսակ է ընդունում նաև Թ. Ղարազյույանը: Հետևելով ռուս լեզվաբանության ավանդույթներին՝ նա դրանք անվանում է *դիպլոմատական* և *պոտենցիալ* (11,213): Առաջինի ենթատեսակներն լեզվաբանն առանձնացնում է ըստ նրանց՝ գործառական ոլորտներում կիրառվելու՝ գեղարվեստական գրականության մեջ ստեղծված *դիպլոմատական* բառերն անվանելով *ստեղծագործական* կամ *հեղինակային*

նորաբանություններ: Այս դեպքում ԹՎարագլույսները *հեղինակ* բառը նեղ իմաստով է գործածում նրան վերագրելով *միայն գեղարվեստում ստեղծագործող անձ* իմաստը: Մինչդեռ *հեղինակային* կարող են լինել նաև գիտական ասպարեզում, մամուլում կերտված բառերը:

Այսպիսով՝ մեր կարծիքով նպատակահարմար է անհատների կողմից ստեղծված բառերին տրվող լեզվաբանական տերմիններից նախընտրել *հեղինակային բառ* անվանումը: Համաժամանակյա հայեցակետով քննվելիս դրանց համակարգում պետք է առանձնացվեն ժամանակային կոնկրետ հատվածի հետ կապվածները, որոնք կրնան նաև որպես նորաբանություններ: Ոճագիտական ուսումնասիրություններում *պոտենցիալ* և *դիպլոմատիկ* անվանումները հարմար է գործածել որպես հեղինակային բառերի հատկանիշներ՝ կապված բառակազմական առանձնահատկությունների հետ: Այսպես յուրաքանչյուր ուսումնասիրող զնոթ կամա դասակարգման այն հարաբերականությունից, որոնք կան քննարկված աշխատություններում:

Ուրեմն՝ ոճագիտության քննազավառում հեղինակային բառերին առնչվող արդիական խնդիրներից են նաև *անհատական նորաբանություն, հեղինակային, դիպլոմատիկ* բառ տերմինների հստակ բնութագրությունը, տարանջատումը և լեզվի գործառնական քույր ոլորտներում ստեղծված բառերի հանգամանալից ուսումնասիրությունը:

Ծանոթագրություն

1. Ոստ «Անգլերեն - հայերեն համակարգչային բառարան»-ի (Եր., 2004թ.):
2. Կարծում ենք՝ նպատակահարմար է նման դասակարգում ընդունել նաև հնաբանությունների համար:
3. Լեզվաբանության մեջ առաջադրվել են մի շարք գիտաբաներ՝ *անհատական նորակազմություններ, անհատական-հեղինակային նորաբանություններ, անհատական-ոճական նորաբանություններ, խոսքային կամ անհատական նորաբանություններ, հեղինակային նորաբանություններ, հեղինակային նորակազմություններ, նորակազմ բառեր, ստեղծագործական կամ հեղինակային նորաբանություններ* և այլն: Կարծում ենք անվանումների նման առատությունը խրախուսելի չէ:
4. Մեր կարծիքով այս վերջին երկուսը նույն երևույթի դրսևորումներն են:
5. Նշված տերմինի հայերեն *ներուժուկ* համարժեքը, որն առաջարկվել է Ալ. Մարգարյանի կողմից, դեռևս լեզվաբանական քննարկման չի ենթարկվել:

Գրականություն

1. Սուրիանյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982:
2. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993:
3. Աղայան Էդ., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Եր., 1984:
4. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989:
5. Ազեկյան Լ., *Ոճագիտություն*, Եր., 2003:
6. Մարտիկյան Ա., *Հայոց լեզվի ոճաբանություն*, Եր., 2000:
7. Մելքոնյան Ս., *Աղնակներ հայոց լեզվի ոճաբանության*, Եր., 1984:
8. Պետրոսյան Հ., *Հայերենագիտական բառարան*, Եր., 1987:
9. Лопатин В., Рождение слова, М., 1973:
10. Էլոյան Ս., *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Եր., 2002:
11. Դարագլույսներ Թ., Դիպլոմատիկ և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում, *Լեզվի և ոճի հարցեր*, VII հ., Եր., 1983:

ԱրՊՀ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ*

Ն.Գ. Խաչատրյան

Լեզվական-քերականական գիտելիքների յուրացումը զգալի չափով նպաստում է ուսանողի մտածողության զարգացմանը: Ընտրագրելով լեզվական որևէ իրողություն՝ սովորողը որոշակի վառանքով, կոնկրետ օրինակների հիման վրա կատարում է վերացարկում և ընդհանրացում՝ որանով իսկ զարգացնելով իր մտածողությունը: Մա կարևոր նշանակություն ունի ուսման մեջ առաջադիմելու գործում, որն էլ լեզվի ուսուցման կարևոր նպատակներից է:

Այստեղ մենք փորձում ենք ներկայացնել խոսքի մասերի փոխհարաբերությունների ամենարդիանուր օրինաչափությունները և ընձել այդ երևույթը նույն և այլ խոսքի մասերի զարակնող բառերի միջոցով: Խոսենք կապերի և այլ խոսքի մասերի հարաբերակցության և նրա ուսուցման մասին, որը կնպաստի ուսանողի ինքնուրույնության և տրամաբանական ու անողորմագործական մտածողության զարգացմանը:

Թեման ուսուցանելիս բացատրում ենք, որ չեքվող խոսքի մասերի բառապաշարի կազմավորման և հարստացման հիմնական ուղին բառերի փոխանցումն է, որը կատարվում է այլ խոսքի մասերից: Փոխանցումը այն երևույթն է, երբ բառ կամ բառաձևը առանց բառակազմական միջոցի փոխում է իր խոսքիմասային արժեքը: Փոխանցման լսողում կարևոր դեր են կատարում փոխանցվող բառերի բառային իմաստը, իմաստի այս կամ այն կողմը, ինչպես նաև շարահյուսական հատկանիշը:

Ինչպես գիտենք, ժամանակակից հայերենի բոլոր կապերն առաջացել են երբեմնի նյութական իմաստ ունեցող բառերից՝ վերջիններիս նյութական նշանակության լրիվ կամ մասնակի կապի հիման վրա: Կապերն արտահայտում են բառերի ստորադասական հարաբերություններ, կազմավորվել են համապատասխան բառերի որոշակի շարահյուսական կապական կիրառությունների հիման վրա:

Կապերին հարաբերակից են այնպիսի բառեր, որոնց մեջ կա հարաբերության որոշ իմաստ, որի շնորհիվ նրանք նախադասության մեջ գործածվում են կապական առումով: Հաճախակի գործածվելով բառերի ստորադասական հարաբերություն արտահայտելու դերով՝ տվյալ բառի նախկին կիրառությունները կարող են կամ վերանալ կամ գուցահեռաբար գոյություն ունենալ ձեռք բերած խոսքիմասային նոր արժեքի հետ:

Կապական բառերը ուսուցանելիս համեմատում ենք իսկական և անիսկական կապերի հետ: Նշում ենք, որ իսկական կապերը առաասարակ չունեն նյութական իմաստ և ինքնուրույն գործածություն, հող ստանալ ու հղվովել չեն կարող: Անիսկական կապերի մեջ գերակշռում է հարաբերության իմաստը, բայց հղվովելով ու հող ստանալով՝ հասկացվում են նյութական նշանակությամբ:

Եվ կան «բառեր, որոնք թեև այս կամ այն չափով գործածվում են կապի դերով, բայց նրանց իմաստի մեջ իշխողը, որոշիչը նյութական իմաստն է» [1]: Այսպիսի բառերը կոչվում են կապական բառեր: Ռաբաք մի կապակցության մեջ կիրառվում են նյութական, մի այլ կապակցության մեջ՝ հարաբերության իմաստով: Հարաբերակցություններ են նկատվում գոյականի, ածականի, բայի, մակբայի, շողկապի և կապերի միջև: Այսպես՝

ա) երեմից, ժամանակ, չափ, պատվին, հասցեին, ձեռքից, ձեռքով, միջոցին, միջոցով, անունով, անունից, կողմից, գծով, պատճառով, հետևանքով, նպատակով, ընթացքին, ընթացքում, գործում (գոյական են և կապ):

բ) անկախ, համաձայն, հավասար, համապատասխան, հակառակ (ածական են և կապ):

գ) նայած, չնայած, չնայելով, չանցած, սկսած, չսկսած, հաշված, չհաշված (բայ են և կապ):

դ) առաջ, ընդառաջ, հետո, վեր, հետո. վերև, ներքև, դիմաց, շուրջ, ներս, դուրս (մակբայ են և կապ):

* Անտյանիչով, Նշում բոլոր աշխատանքները զեկուզվել են «Երիտասարդ գիտնականների II գիտնողություն»: Մտնիտակներու, ասորի, 2007թ.:

ե) փոխանակ, մինչև, նախքան (շաղկապ են և կապ):

Նյութը համոզիչ դարձնելու համար գրել ենք տալիս նախադասություններ և սովորողներն ուժեղով պարզաբանում, թե տվյալ նախադասության մեջ եղած բառը ի՞նչ իմաստով է գործածված և նախադասության մեջ ի՞նչ անդամի դեր է կատարում:

Համեմատենք հետևյալ օրինակները:

Այսպես.

1. Նրա *երեսից* արյունը մարրեց:

2. Նրա *երեսից* տուժեց:

Առաջին նախադասության մեջ *երեսից* բառը նախադասության անդամ է (տոնի պարագայերով) երկրորդում *երեսից* նախադասության անդամ չէ, և չի նշանակում *երես, դեմք*: Նրա *երեսից* մեկ անդամ է:

Դասական բառերի կարող են վերածվել գոյականի և՛ ուղիղ, և թեք ձևերը: Այլ քանի որ խոսքիմասային փոխանցումները տոնի են ունենում բառերի տարբեր շարահյուսական կիրառությունների հիման վրա, բերում ենք այդ բառերի տարբեր խոսքիմասային իմաստները գործածությանը նախադասություններ:

Նյութի արդյունավետությունն ապահովելու նպատակով կազմում ենք շարքեր, որոնք կընդգրկեն այդ բառերի թեև ուղիղ, թե թեք ձևերը:

Այսպես.

Գոյական

1. Խոտհոնձի *ժամանակը* վաղուց անցել է:

2. Անպարկեշտ աղչիկների

անամոթությունը *չափ* չունի:

3. Դու կպար նրա *պատվին*:

4. Սիրահարը սրտի թոթոթով բռնեց
գեղեցկուհու *ձեռքից*:

5. Փորրիկը նկարեց մայրիկի *ձեռքով*:

6. Հիվանդը սափաված դիսնց նրա
առաջարկած *միջոցին*:

7. Բելիի առաջարկած *միջոցով*
բուժեցինք հիվանդին:

8. Նա հետևեց մերենայի *ընթացքին*:

9. Հարևանների փոխանցած *հասցեին*
կասկածեցինք:

10. Աս միշտ եպարտանում եմ այդ վեհ
ու գեղեցիկ *անունով*:

11. Նրանք զգվում են այդ *անունից*:

12. Փողոցի աչ *կողմից* երևում է տունը:

13. Մենք անցանք ճակատի առաջին *գծով*:

14. Հեռուանքն է որոշվում *պատճառով*
և ոչ թե պատճառը *հետևանքով*:

15. Հպարտանում եմ նրա վեհ *նպատակով*:

Կապ

խոտհոնձի *ժամանակ*

Գյուղացիները

աշխատում են:

Նրեկոյան իր *հավաքնի չափ* փորրիկ յանույթ
փակելուց հետո մեր տուն էր գալիս (Ասատուր:

Մենք նրա *պատվին* ճաշկերույթ
կազմակերպեցինք:

Նրա *ձեռքից* վառվեցին:

Նրա *ձեռքով* բոլորս փորձանքի մեջ ընկանք:
Այդ *միջոցին* ներս մտավ:

Խոտաբույսերն *արմատների միջոցով* հողի
շերտերից կխանում են մեծ քանակությամբ
սննդանյութեր:

Նայած *իրերի ընթացքին* մենք կորոշենք
ինչպես վարվել:

Նա սկսեց սարսափելի հայեյությաներ թափել
հետևից աղաղակող չարածճի *երեմյանների*
հասցեին:

Նրան ճանաչում են *նորոր անունով*:

Ազատամարտիկները միշտ խոսում են *նրա*
անունից:

Այդ առաջարկությունը մտցվել է *ուսուցիչների*
կողմից:

Այդ *մասնագիտության գծով* բավական
աշխատողներ եկան:

Հիվանդության սրտոնառու չմասնակցեց երեկոյին:
Թշնամու հարվածը *կասեցնելու հետևանքով*
մեր գորքը օր առաջ շարժվեց դեպի սահմանը:
Ընկերուհիս մեկնեց մայրաքաղաք *սովորելու*
նպատակով:

16. Մահն իր հավերժական *ընթացքում*

չի խնայում ոչ մեկին:

17. *Գործում*՝ անընդունակ է:

Հինգ օրվա ընթացքում վերջացրեց:

Հանցագործությունը կանխելու գործում մեծ է նրա դերը:

Բացատրում ենք, որ առաջին և երկրորդ շարքերի բառերն իմաստային տարբեր խորաբերություններ են արտահայտում, և յուրաքանչյուր կատարյալ նախադասության առանձին առդամ է. առաջին շարքի նախադասություններում ընդգծված բառերը պահպանում են իրենց լեզվական բովանդակությունը, երկրորդում ընդգծվածները զուրկ են նյութական լեզվակազմությունից և նախադասության անդամ են դառնում իրենց խնդրի հետ միասին: Երկրորդ բառերը հիմնականում գործածվում են հետադաս:

Նշում ենք, որ կապական դերով կարող են հանդես գալ նաև մի շարք ածականներ, խոնարհական, մակբայական, շարժականներ՝ և՛ նյութական, և՛ հարաբերության նշանակության լեզվաառարարի դրսևորմամբ, կամ դրանցից մեկի կամ մյուսի գերակշռությամբ:

Բերում ենք գուգահեռ օրինակներ.

Ածական

1. *Անկախ* պետություն հռչակվեց:
2. Բոլորին շարել էր իրարից *հավասար* ընտանիքության վրա:
3. *Համապատասխան* օրինակներ բերեց:
4. *Հակառակ* ուղղությամբ շարժվեցին:
5. Նրանք *համաձայն* էին ամառն անց-ացնելու գյուղում:

Բայ

1. *Նայած* թերթերը դրեց սեղանին:
2. *Չնայած* գրքերը պահեց դարակում:
3. *Չնայելով շուրջը* առաջ անցավ:
4. *Չնկատ* աշխատանքներին մասին մի՛ խոսիր:
5. *Սկսած* գործը կիսատ մի՛ թողիր:
6. Ճանապարհը *չանցած*՝ վրանքի ճանապարհ վեց:
7. Հաշված մատիտները հանձնեց վաճառողին:

Չհաշված տոպրակները փակի տակ առան:

Առաջ, ընդառաջ, հետո, վեր, հետո, ներքև, վերև, դեմ, շուրջ, ներս, դուրս գոյականներից առաջացել են համապատասխան մակբայները և կապերը:

ամենատուրմ ենք օրինակները.

Մակբայ
Հեծյալներն *առաջ* սլացան:
Ընդառաջ գնաց:

Նայեց դեպի գավիթը, *հետո* ափնի լվվելով թամբի վրա՝ նայեց լույս անող

Լրաց

Անկախ այդ ամենից կհամաձայնվի ու կգա:
Նա աշխատեց *մեզ հավասար*:

Համապատասխան գոյություն ունեցող օրենքների բոլոր գյուղացիներից հարկ են վերցնում:
Հակառակ խմբի յախանձանքին՝ Սմբատը մնաց ծովում մի ծանրություն սրտի վրա:
Իր տվորության համաձայն՝
Արտաշեսը նույնպես հենցապ իր սենյակից:

Կապ

Նայած տրամադրությանը՝ կկատարի այդ ամենը:
Չնայած այդ անախորժություններին՝ նրա տրամադրությունը բարձր էր:
Կնոջ աղաչանքներին չնայելով՝ շարունակեց այն:
Դեռ մրցույթը չսկսած՝ դուրս մնաց խաղից:

Մայիս ամսից սկսած՝ թաքմ մրգեր են հանվում շուկա:
Չանցած երեք ժամ՝ եկավ:

Ընդոր թերությունները հաշված՝ նա էլի մնում է լավը:

Չհաշված մի քանի թերություններ՝ աշխատանքն արժանի է բարձր գնահատման:

Լրաց

Համախառնաի *դրան առաջ* կանգնում եմ երկար:
Ձորքին ընդառաջ գնացին սպարապետն ու նախարարը:
Դրանից հետո՝ նա երկար ժամանակ լուռ մնաց:

վանականին:

4. Լլարմբախալոյ ձկնորդ Գիլիշանի գետից մտնում էին մեր գետակը ու նրանով գնում էին *վեր*:

5. Բոլորավոր ճառագայթները գմայլելի բոցելեն ծովից տարածվում են *հեռու* ու *հեռու*:

6. Լուսաբացին նա բարձրացավ *վերև*:

7. Իշան *ներքև* չոր խմելու:

8. Նա *դեմ* կանգնեց այդ ամենին:

9. Ծորչ բաւն տարի սպասել ենք:

10. Ես *դուրս* եմ գալիս նորից շրջելու նեղ փողոցները:

11. Խմբապետը մտավ *ներս* և խոժոռ հայացքով սկսեց գննել նրան:

Ամպերից վեր ճախրում էին:

Երկարուողոց հեռու այդ քաղաքում լուր է տարածվում:

Ընտնորից վերև բացվում էր հանդիսավոր երկինքը աստղերով լցվում:

Նախրից ներքև վեց պախրա նստած որոճում էին Նեղ հունի մեջ խնդրված գետը ծառս էր լինում *ժայռերի դեմ*:

Մեղանի շուրջ պարն արդեն հանդարտվել էր:

Նրանք իրենց *գլուխից դուրս* աշխարհ չեն ճանաչում:

Դռներից ներս էր խցկել:

Այնուհետև բացատրում ենք, որ մի շարք բառեր, եթե արտահայտում են բառեր հարաբերություններ, կապեր են, եթե արտահայտում են նախադասություններ հարաբերություններ, հանդես են գալիս որպես շաղկապ:

Այսպես՝

Շաղկապ

1. *Փոխանակ* ուրախանաս, դու ինչ-որ բանի մասին ես մտածում:

2. *Մինչև* Գարեգինը կգար, նա թողեց ու գնաց:

3. *Չնայած* չէր սովորել, բայց շատ լավ պատմեց:

4. *Նախքան* դու կգայիր, զբոսաշրջիկները գնացին:

Կապ

Փոխանակ ուրախանալու՝ դու ինչ-որ բանի մասին ես մտածում:

Մինչև Գարեգինի գալը՝ նա թողեց ու գնաց:

Չնայած չսովորելուն՝ լավ պատմեց:

Նախքան քո գալը՝ զբոսաշրջիկները գնացին:

Այսպիսով՝ սովորողը պետք է համադրելու և համեմատելու միջոցով կարողանա որոշել բառերի գործածության միջև եղած ընդհանուրը և, ճանաչելով այն, իմանա նրանց անհամարժեքությունը: Այս տարբերությունների պարզաբանումից էլ ուսանողները կիմանան, ինչպես բառերը դարձնել ընթացքում կարող են գրկվել նյութական իմաստից և վերած կառավարական բառերի:

Այս թեմայի յուրաքանչյուր և տեղին գործածությունը առնչվում է սովորողի տրամաբանական մտածողության խորացման հարցերին:

Գրականություն

1. Մ.Գ.Աբրահամյան, Զեքեփոլ խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
2. Մ.Գ.Աբրահամյան, Ն.Ա.Պատմաբան, Ն.Ա.Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1975, էջ 476:
3. Մ.Ե.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2002:
4. Մ.Վ.Գյուլբոստյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:

ԱրմՊՀ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

ЯЗЫКОВАЯ КАРТИНА МИРА И ДИАЛОГ КУЛЬТУР

Э.А. Айрапетян

Актуальность лингвокультурологического направления в методике преподавания иностранного языка мотивирована современными дидактическими воззрениями на структуру коммуникативно ориентированного обучения в поликультурном обществе. Являясь прикладным аспектом в процессе преподавания иностранного языка, ее сущность и направленность представляется более широким, и, наряду с охватом конкретно культурологических проблем, предполагает систематизацию таких основных понятий данной науки как языковая картина мира, диалог культур, интернационализация обучения и т.д.

Понятие картины мира относится к числу фундаментальных категорий, выражающих специфику человека и его бытия, взаимоотношения его с миром, представляя собой «исходный глобальный образ мира, лежащий в основе мировидения человека, репрезентирующий сущностные свойства мира в понимании ее носителей и являющийся результатом всей духовной активности человека». [1] Мысль о существовании особого языкового мировидения была сформулирована В. Гумбольдтом [2] как научно-философская проблема еще в начале XIX в.

Что касается термина «языковая картина мира», уверенно вошедший в научный арсенал лингвокультурологии и понимаемый исследователями как зафиксированная в языке схема восприятия, концептуализации и систематизации действительности, то он восходит к известной гипотезе лингвистической относительности, определившая рамки исследований языковой картины мира, языкового мировидения в XX в. Согласно этой гипотезе структура языка и языковая семантика коррелируют со способом познания у того или иного народа.

Однако, данная гипотеза в современных филологических исследованиях квалифицируется далеко неоднозначно: от полного или частичного принятия до совершенного отрицания или даже лишения ее статуса полноценной научной гипотезы. Большинство исследователей, занимающихся вопросами взаимоотношения языка и культуры, языка и мышления, обращаются к гипотезе лингвистической относительности во всех ее разновидностях.

В зависимости от принятия той или иной точки зрения на соотношение культуры и языка может решаться еще один принципиальный вопрос о национальном менталитете и в связи этим о национальной картине мира: научной (концептуальной), художественной, фольклорной, языковой. Большинство ученых до последнего времени склонялось к мысли об инварианте научного знания при возможности существования научной картины мира "в национальной языковой оболочке" и при четком различении национальных менталитетов, воплощенных и отраженных в языковых картинах мира. Как следствие отвергалась возможность взаимопроницаемости языков и культур (национальные языковые картина мира "непроницаемы для иноязычного сознания") [3] и признавалась лишь их взаимопостигаемость. Эта точка зрения восходит к "закону многообразия национальных культур", предложенному еще в начале 20-х годов XX в. Н.С.Трубецким, который писал, что благодаря этому закону "общение между представителями разных народов затрудняется, а при известной степени различия между культурами даже становится совсем невозможным". [4]

«При таком подходе, - отмечает В.М.Лейчик, - диалог культур оказывается весьма ущербным, сводится к ограниченному взаимопониманию народов и отдельных

представителей этих народов. Однако реальности конца тысячелетия свидетельствуют об ином».[5]

Действительно, интернационализация знания в различных сферах человеческой деятельности, глобализация проблем человечества, взаимный обмен ценностями культуры на разных уровнях, что особенно характерно для нашей эпохи, позволяют говорить о превращении национального достояния в общечеловеческое, о создании интернациональных продуктов. В литературе появилось даже понятие универсальных культурных ценностей.

С этой позиции можно утверждать, что диалог культур осуществляется в настоящее время по следующим направлениям: взаимообмен научными достижениями, взаимная торговля – обмен продуктами материального производства, совместная научная и производственная деятельность, межкультурная коммуникация, в первую очередь, межкультурная, в сфере информации, в том числе в сфере СМИ (одна из наиболее показательных и эффективных реализаций – Интернет), взаимный обмен ценностями духовной культуры. Иначе говоря, диалог культур реализуется не только в виде взаимопостижения, но и в виде взаимодействия этносов в различных областях культуры.

Вопрос о диалоге культур с точки зрения филологии и лингводидактики обсуждался, в частности, на VIII Международном конгрессе МАПРЯЛ (Регенсбург, август 1994г.). В докладе президента МАПРЯЛ В.Г.Костомарова и в его статье, представляющей расширенное изложение доклада, национальная культура рассматривалась с позиций, отвергающих национальную ограниченность: "Истинные отличия культуры нации в особом, только ей свойственном наборе общечеловеческих черт, в неповторимом их сочетании и в самобытности их реализации".[6]

Развитие данной области исследований основывается на базе научно-гуманитарных идей философии диалога культур. Особенности "диалога культур" исследовали и разработали М.М. Бахтин, В. С. Библер, М.С. Каган и другие.

По М.С.Кагану,[7] отношения между культурами могут быть различными:

- а) отношения одной культуры к другой, как к некоему объекту,
- б) отношения неприятия одной культуры другой,
- в) отношения взаимодействия и взаимообогащения, т. е. отношения культур к друг другу как к равноценным субъектам.

Прогрессивным, способствующим развитию человеческой цивилизации признается третий тип отношений, что и нашло отражение в международном документе ЮНЕСКО "Декларация Мехико по политике в области культуры":[8]

1. Любая культура представляет совокупность неповторимых и незаменимых ценностей, поскольку именно через свои традиции и формы выражения каждый народ заявляет о себе всему миру.

2. Утверждение культурной самобытности способствует освобождению народов и наоборот, любая форма господства является отрицанием этой самобытности и угрозой ее существованию.

3. Культурная самобытность представляет собой неоценимое богатство, которое расширяет возможности для всестороннего развития человека, мобилизуя каждый народ и каждую группу, заставляя их черпать силы в своем прошлом, усваивать элементы других культур, совместимые со своим характером, и тем самым продолжать процесс самосозидания.

4. Все культуры составляют единое целое в общем наследии человека.

Культурная самобытность народов обновляется и обогащается в результате контактов с традициями и ценностями других народов. При таком понимании культура – это диалог, обмен мнениями и опытом, постижение ценностей и традиций других; в изоляции она увядает и погибает.

5. Ни одна культура не может абстрактно претендовать на право быть универсальной, универсальность складывается из опыта всех народов мира, каждый из которых утверждает свою

самобытность. Культурная самобытность и культурное разнообразие неразрывно связаны друг с другом.

6. Культурные особенности не нарушают единства всеобщих ценностей, которые объединяют народы, более того, они делают их более плодотворными. Многообразие составляет основу культурной самобытности там, где бок о бок существуют разные традиции.

7. Международное сообщество считает своим долгом сохранять и защищать культурное наследие каждого народа.

8. Все это требует такой культурной политики, которая бы охраняла, развивала, обогащала самобытность и культурное наследие каждого народа, обеспечивала полное уважение культурных меньшинств и других культур мира. Незнание культуры той или иной группы или ее уничтожение обедняет человечество в целом.

9. Необходимо признать равенство в достоинстве всех культур и право каждого народа и каждого культурного сообщества утверждать, сохранять свою культурную самобытность и обеспечивать ее уважение.

Именно третий тип отношений, для которого характерно отношение культуры к культуре как к равноправной, равноценной при ее отличиях и интересной, нужной, желанной именно в ее непохожести, в ее уникальности, и определяется в философских исследованиях как диалог культур.

Диалог культур в обществе, между нациями, странами, регионами – это сознательно избираемая позиция, позволяющая противостоять высокомерному культурному изоляционизму и всем формам неравноправных отношений между культурами.

В результате диалога культур образуются разные продукты, и это зависит от сферы, в которой он происходит, от эпохи и от взаимоотношений партнеров (“собеседников”): “Существует, – отмечает В.М. Лейчик, – по крайней мере, четыре вида культурного обмена по его последствиям.» В первом случае культуры остаются в принципе неизменными и лишь обогащаются некоторым количеством отдельных ассимилированных элементов. Это, например, взаимное заимствование и калькирование лексических единиц контактирующих в культурном отношении языков. Во втором случае происходит образование смешанных, “креолизованных” культур, которые, как правило, даже ниже по уровню, чем те, которые вступили в контакт. Это некоторые виды массовой культуры (искусства), это креольские языки, в том числе языки типа pidgin English. В третьем случае могут формироваться пограничные типы культур, вобравшие наиболее ценные компоненты с обеих сторон; это обычно бывает, когда контактирующие культуры находятся на одинаковом или близком уровне. К ним можно отнести результаты совместных научных разработок, коллективные технические проекты; в сфере языка это диалекты, образующиеся на границе функционирования родственных языков. Наконец, иногда создается суперкультура, чаще всего интернационального характера, в образовании которой участвует несколько народов, несколько культур, подчас несколько сфер духовной жизни. Именно о такой культуре писал П.С. Гуревич,[9] подчеркивая: “Да, они (множество культур) уникальны, но это вовсе не означает, будто они отгорожены друг от друга. Возможно, образцом для них окажется какая-то культура, обладающая наиболее значительным совокупным опытом? А может быть, родиться некий культурный синтез”. В области религии это христианство, явившееся продуктом высокого духовного развития ряда древних народов и постоянно обогащающееся за счет вкладов со стороны сотен современных народов. К высшим продуктам диалога культур можно отнести и непрерывно обновляющуюся научную модель мира или по крайней мере ее фрагменты. Это также интернациональный языковой фонд, включающий, прежде всего, лексические интернационализмы и отображающий фрагменты интернациональной языковой картины мира.

В программной статье “Вызовы современной эпохи и приоритетные задачи педагогической науки” В.П. Борисенков[10] отмечает, что “нам выпало жить в эпоху, когда в мире происходят перемены цивилизационного значения, сочетающие в себе высочайший динамизм и

“глобальный характер”, среди первостепенных задач подчеркивая “поликультурное образование”.

Поликультурное образование способствует продвижению народов к прогрессу. Подготовить студентов, изучающих иностранные языки, к роли участников диалога культур, личностей, признающих равенство различных культур и народов – вот основные задачи вузовского и школьного языкового образования.

Ամփոփում

Հոդվածի ուսումնասիրության հիմքում ընկած է լեզվամշակութաբանության հիմնական կարգերից մեկը՝ աշխարհի լեզվակարագրությունը: Աշխարհայեցողականության բազմազանությունը ծագում է ազգային մշակույթի տարատեսակության օրենքի ժողովուրդների մշակույթների յուրահատկությունը վերափոխվում եւ հարստանում է այլ ժողովուրդների մշակութային արժեքների եւ ավանդների շփումների հետեւանքով: Այսպիսի հասկացության դեպքում մշակույթը դա երկխոսություն է, որը կանխում է մշակութային մեկուսացումը եւ մշակութային բոլոր անիրավահավասար հարաբերությունները:

Резюме

Актуальность лингвокультурологического направления в методике преподавания иностранного языка мотивирована современными дидактическими воззрениями на структуру коммуникативно ориентированного обучения в поликультурном обществе. Являясь прикладным аспектом в процессе преподавания иностранного языка, ее сущность и направленность представляется более широким, и, наряду с охватом конкретно культурологических проблем, предполагает систематизацию таких основных понятий данной науки как языковая картина мира, диалог культур, интернационализация обучения и т.д.

Литература

1. Роль человеческого фактора в языке: Язык и картина мира. М., 1988
2. Гумбольдт В. Язык и философия культуры. М., 1985.
3. Корнилов О.А. Языковые картины мира как производные национальных менталитетов. М., 1999 Политиздат, 1988.-319 с
4. Трубецкой Н.С. Вавилонская башня и смешение языков (1923). // Трубецкой Н.С. История. Культура. Язык. М., 19
5. Лейчик В.Н. Реальное и виртуальное в понятии “диалог культур”. // Вестник МГУ, Сер. 19. Лингвистика и межкультурная коммуникация, 2001, N3
6. Костомаров В.Г. Русский язык в современном диалоге культур. // Русский язык за рубежом, 1999, N 4
7. Каган М.С. Мир общения: Проблема межсубъектных отношений. -М.:
8. Декларация Мехико по политике в области культуры // Культуры: диалог народов мира. - 1984.- N 3.- с. 77-86.
9. Гуревич П.С. Культурология. М., 2001.
10. Борисенков В.П., Вызовы современной эпохи и приоритетные задачи педагогической науки, Педагогика, 2004,N 1.

АрГУ, кафедра английского языка

ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴԵՊԵՐ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն.Մ.Գրիգորյան

Բայն ունի դիմավոր (finite) և անդեմ(non-finite) ձևեր. վերջինս կոչվում է դերբայ, որը չունի դեմք, չի կարող նախադասության մեջ հանդես գալ որպես ստորոգյալ: Անգլերենում գոյություն ունեն երեք դերբայներ՝ անավարտ դերբայ(participle), գերունդիոյ(gerund) և անորոշ դերբայ(Infinitive): Հայերենի դերբայների հետ համեմատելով՝ participle-ը համապատասխանում է հայերենի հարակատար դերբային, gerund-ը համակատար դերբային:

Ըստ Էդվարդ Ադայանի, Գորգեն Սևակի, Մերգեն Աբրահամյանի հայերենի քերականության մեջ գոյություն ունի ութ դերբայ՝ անորոշ (ել, այլ), ենթակայական(ող, ագող), հարակատար (ածագած), համակատար (ելիս, այլիս), անկատար (ում), վաղակատար (ելացել), ապակատար (ելու, այլու), ժխտական (չ, ա), միայն ձև ՀՀ. հղղարյանը պնդում է, անորոշ, հարակատար, համակատար և ենթակայական դերբայների առկայությունը հայերենում, իսկ մնացածը համարում ձևաբայեր՝ անկատար ձևաբայ, վաղակատար ձևաբայ, ժխտական ձևաբայ և ապակատար ձևաբայ:

Անգլերենում անորոշ դերբայը (Infinitive) հիմնականում պայմանավորված է 10 մասնիկով: Ըստ Գորգենի և Լորիովայի ինֆինիտիվը պարզ բայ է, որը հաջորդում է չշեշտված մասնիկին՝ to-ին: Պարզ ձևի հետ ինֆինիտիվը ունի հետևյալ վերլուծական ձևերը՝

Continuous-to be taking

Perfect-to have taken

Perfect cont.-to have been taking

Simple passive-to be taken

Perfect passive-to have been taken

Հայերենում այն ունի ել, այ վերջավորությունները և պատասխանում է ի՞նչ անել, ի՞նչ լինել հարցերին: Անորոշ դերբայը օժանդակ բայի հետ դիմավոր ձևեր չի կազմում, այն ինքնակի չի չունի: Հայերենի անորոշ դերբայը նախադասության մեջ լինում է ենթակա, ստորոգյալ կազմող բառաբառ: Օրինակ՝ Մի անգամ տեսները (ենթակա) հազար անգամ լսեցի (ստորոգյալ) լավ է: Եթե նա այդքան տարվա մեջ ի՞նչ բան են գրել, պատճառը շատ կարողաւ է, (ստորոգյալ կազմող բառ):

Փունջ-փունջ աղյիկներ սարերը ելան՝

վիճակ հանելու աշխույժ երգերով (Հ.Թ.)

վիճակ հանելու-բայական անդամի լրացում:

Անգլերենում անորոշ դերբայը(Infinitive), ինչպես անավարտ դերբայը(participle) և գերունդիոյ(gerund) կարող է լինել անվանական և բայական:

Անվանական տեսակետից ինֆինիտիվը կարող է օգտագործվել որպես՝
անկախ(Subject) նախադասության մեջ.

Օրինակ՝ To go on like this was dangerous. (Galsworthy)

Այսպես շարունակելով փոստգավոր էր:

ստորոգելիական վերադիր (predicative)

Օրինակ՝ Her plan was now to drive to Bath during the night

Նրա ծրագիրը հիմա գիշերվա ընթացքում Բաթ մեկնելն է:

գործիքի (object)

Օրինակ՝ I have never learnt to read or write.

Ես երբեք գրել, կարդալ չեմ սովորել:

Բայական տեսակետից

ա. անգործական բայերի ինֆինիտիվը կարող է հանդես գալ որպես ուղիղ խնդիր(direct object).

Օրինակ՝ He... began to feel some curiosity...(Eliot)

Նա... սկսեց հետաքրքրություն գալ...

բ. անորոշ դերբայը կարող է լրացվել մակբայով (adverb).

Օրինակ՝ I cannot write so quickly.

Ես չեմ կարող այդպես արագ գրել:

գ ինֆինիտիվը ենթարկվում է ժամանակի և կերպի առանձնահատկություններին (tense and aspect distinction):

Ժամանակակից անգլերենում անորոշ դերբայը ունի հետևյալ ձևերը՝

	Active	Passive
Indefinite	To write	To be written
Continuous	To be writing	-----
Perfect	To have written	To have been writing
Perfect Continuous	To have been writing	-----

Ի տարբերություն մնացած դերբայների՝ անորոշ դերբայի ժամանակային առանձնահատկությունը հարաբերական է:

1. Ինֆինիտիվի անորոշ ձևը գույց է տալիս գործողություն, որը տեղի է ունեցել միաժամանակ դիմավոր քայի արտահայտած գործողության հետ, այնպես, որ այն կարող է առնչվել ներկայի, անցյալին կամ ապագային.

Օրինակ՝ I am glad to meet you. (Dreiser)

I was glad to see Mr. Paul. (Ch. Bronte)

Mr. Forsyte will be very glad to see you. (Galsworthy)

2. Ինֆինիտիվի շարունակական ձևը (continuous) նույնպես առնչվում է գործողությանը, որը տեղի է ունեցել դիմավոր քայի արտահայտած գործողության հետ միաժամանակ: Այս դեպքում այն ընթացքի մեջ եղող գործողություն է.

Օրինակ՝ They happened, at the moment, to be standing near a small conservatory at the end of the garden. (Collins)

3. Ինֆինիտիվի անցյալ կատարյալ (Perfect Infinitive) ձևը գույց է տալիս գործողություն, որը տեղի է ունեցել դիմավոր քայի արտահայտած գործողությունից առաջ.

Օրինակ՝ "I am glad to have seen you", he said.

«Ուրախ եմ, որ ձեզ տեսա», - ասաց նա:

An intimate friend is said to have dined with him that day.

Ասում են, որ այդ օրը նա մոտ ճաշեց իր մոտիկ ընկերը:

4. Ինֆինիտիվի անցյալ շարունակական (Perfect Continuous Infinitive) ձևը գույց է տալիս գործողություն, որը շարունակվել էր մի ժամանակում՝ նախորդելով դիմավոր քայի գույց տված գործողությանը:

Օրինակ՝ For about ten days we seemed to have been leaving on nothing but cold meat, cake and jam. (Jerome)

Ինձ թվում էր, որ տասը օր մենք ապրում էինք միայն սառը մսով, թխվածքաբլիթներով և մուրաբայով:

Անցողական բայերի անորոշ դերբայն ունի հատուկ ձևեր ներգործական (Active voice) և կրավորական (Passive voice) սեռերի համար.

Օրինակ՝ It is glorious to love and to be loved...

Այնպես հիանալի է սիրել և սիրվել...

Եթե նախադասության մեջ առկա է there is կառուցվածքը, ապա որոշ բայերի ինֆինիտիվ կայող է լինել ներգործական (Active) կամ կրավորական (Passive)՝ առանց իմաստը փոխելու.

Օրինակ՝ There is no time to lose. (Dreiser)

There is no time to be lost. (Eliot)

There is nothing to fear (to be feared).

Այս տեսակի նախադասությունները հայերենում ունեն թարգմանության միայն մեկ ձև՝

Ժամանակ չկա կորցնելու:

Ելախնայու ոչինչ չկա:

Ժամանակակից անգլերենում անորոշ դերբայը (Infinitive) հիմնականում գործածվում է տասնիկով: Շատ լավ կառուցակալայի հին անգլերենում տասնիկով էր նախորդ, որը ինֆինիտիվի հետ գործածության ժամանակ գույց էր տալիս նպատակ. այսինքն to write եղանակում էր «որպեսզի գրի» կամ «գրելու նպատակով»: Հետագայում այն դարձել է ինֆինիտիվի անբաժան մասնիկը: Մինչդեռ կան դեպքեր, երբ ինֆինիտիվը գործածվում է առանց տասնիկի, այն կոչվում են bare infinitive: Դա հնարավոր է լինում՝

1. օժանդակ բայերից հետո.

Օրինակ՝ I don't understand the meaning of this passage.

Ես այս հատվածը չեմ հասկանում:

2. Մոդալ բայերից (modal verbs) հետո, բացի ought բայից, քանի որ այն ունի պարտավորված լինելու իմաստը և միշտ հանդես է գալիս to մասնիկով (ought to):

Օրինակ՝ If one cannot have what one loves, one must love what one has. (Wilson)

Հիշե՛ չես կարող ունենալ ինչ սիրում ես, ապա պետք է սիրել այն ինչ ունես:

3. Այնպիսի բայերից հետո, որոնք ցույց են տալիս զգացմունք, ինչպես օրինակ to hear (լսել), to feel (զգալ) և այլն:

Օրինակ՝ In a few minutes they heard him ascend the ladder to his own room. (Hardy)

Մի քանի րոպեից նրանք լսեցին, թե ինչպես նա աստիճաններով բարձրացավ իր սենյակը:
Հայերենում այս նախադասության մեջ «բարձրացավ»-ը ոչ թե անորոշ դերբայ է, այլ՝ ածական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ:

I never saw you look so before. (Hardy)

Ես երբեք ընդ այդպես զննեցիկ չեմ տեսել:

I felt my heart jump. (Ilyum)

Ես զգացի, թե ինչպես թրթռաց իմ սիրտը:

Թրթռաց-առիմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակ:

4. To let (թողյլ տալ) բայից հետո:

Օրինակ՝ Let us walk along this sidewalk.

Արի քայլենք այս մայրով:

«Քայլենք»-ը այս նախադասության մեջ հանդես է գալիս ոչ թե որպես ինքիինտիվ, այլ որպես ածական եղանակ, ապառնի ժամանակ:

5. To make, to have բայերից հետո, միայն այն դեպքում, երբ դրանք ունեն սովորյալ, թույլ տալ, ստեղծել իմաստները:

Օրինակ՝ What makes you think so?

Ի՞նչն է, ընդ տիպում այդպես մտածել:

I... had them take my baggage.

Ես... կարգադրեցի նրանց վերցնել ճամպրուկներս:

6. To know (իմանալ) բայից հետո, միայն այն դեպքում, երբ նրա իմաստը նմանվում է տեսնել (to see), զննել (to observe) բայերի իմաստին:

Օրինակ՝ I have so often known a change of medicine work wonders.

Ես շատ հաճախ եմ նկատել, որ դեղերի փոփոխությունը հրաշքներ է գործում:

Այստեղ «գործում է» ածականական եղանակ, ներկա ժամանակ է:

Նման դեպքերում երբեմն to մասնիկը օգտագործվում է:

Օրինակ՝ I have never known her to weep before.

Ես նախկինում երբեք չեմ տեսել նրան լացելիս:

I begged her to bid me take a seat:

7. To bid (հրամայել) բայից հետո:

Օրինակ՝ I bowed and waited, thinking she would bid me take a seat. (F. Bronte)

Ես խոնարհվեցի և սպասեցի՝ մտածելով, որ նա կհրամայի ինձ նստել:

8. Had better, would rather, would sooner, cannot but, nothing but, cannot choose but արտահայտություններից հետո:

Օրինակ՝ You had better go to bed and leave the patient to me. (Show)

Ավելի լավ է, զնարք քնելու և թողնել հիվանդին իմ հսկողության տակ:

Հայերեն նախադասության մեջ «քնելու» ապակատար դերբայ է, իսկ «թողնել» լրծական ապառնի:

I would rather not speak upon the subject. (Hardy)

Ես կնախընտրեի չխոսել այդ մասին:

I would sooner die here, at your feet... than see you married to such a one as that. (Trollope)

Ես ավելի շուտ կմեռնեի այստեղ՝ քո ոտների առաջ... քան տեսնել ընդ ամուսնացած նման մեկի հետ:

Կմեռնեի- ենթադրական անցյալ:

I cannot but think so. (Trollope)

Ես չեմ կարող այդպես չմտածել:

9. Հատուկ ձևի նախադասություններում (infinitive sentences) սկսելով why (ինչու) բառով:

Օրինակ՝ Why not come and talk to her yourself?

Ինչու՞ չմտնել և չխոսել:

Հայերեն նման թարգմանության մեջ «չմտնել և չխոսել» բայերը անորոշ դերբայներ են, իսկ եթե ավելագուց «խոսքներ» բառը «խնայ» ինքնուրույն շմտներ և չխոսմք» ապա «չմտնել և չխոսմք» բայերը խոնարհված են:

To մասնիկը հաճախ օգտագործում են առանց ինֆինիտիվի, եթե այն կոնտեքստից հասկանալի.

Օրինակ՝ He and his three men could not defend Rollingen even if they wanted to. (Hegm)

Նա և նրա երեք ընկերները չէին կարող գրավել Ռոլինգենը, եթե նույնիսկ զանկանային:

To մասնիկը կարող է բաժանված լինել ինֆինիտիվից մակբայով, այն անվանում են *split infinitive* (բաժանվորեն օժտված կամ պատակտված ինֆինիտիվ).

Օրինակ՝ He was unable, however, to long keep silence.

Ամեն դեպքում նա ի վիճակի չէր երկար լռել:

Ինֆինիտիվի դերը նախադասության մեջ:

Նախադասության մեջ ինֆինիտիվը միայնակ հազվադեպ է, հաճախ գալիս: Շատ դեպքերում հանդիպում ենք անորոշ դերբայով կազմված արտահայտությունների, այսինքն՝ ինֆինիտիվը հանդես է գալիս մեկ կամ մի քանի օժանդակող բառերով՝

1. Ինֆինիտիվը որպես ենթակա.

Օրինակ՝ To doubt, under the circumstances, is almost to insult (Ch. Bronte)

Նման պայմաններում կաակածելը պարզապես վիրավորական է:

Even to think of it gave him insupportable torture. (Bennett)

Նույնիսկ դրա մասին մտածելը նրան անբազատելի տառապանք պատճառեց:

Անգլերենում կան նախադասություններ, որոնք սկսվում են *it* ցուցական դերանունով և հանդես են գալիս որպես ենթակա (subject).

Օրինակ՝ It is useless to discuss the question. (Eliot)

Անխափստ է քննարկել այդ հարցը:

Հայերեն նախադասության մեջ ենթական դառնում է «հարցը»:

It was pleasant to be driving a car again. (Braine)

Հաճելի էր կրկին մեքենա վարելը:

Հայերեն նախադասության մեջ ենթական «վարելը» է:

2. Ինֆինիտիվը որպես ստորոգելիական վերադիր (predicative).

Օրինակ՝ My intention is to get into parliament.

Իմ նպատակը պառլամենտ մտնելն է:

Ինֆինիտիվը կարող է օգտագործվել որպես ստորոգելիական վերադիր մաս.

Օրինակ՝ The abode of Mrs. Betty was not easy to find. (Dickens)

Տիկին Բեթիի կացարանը դժվար չէր գտնել:

3. Ինֆինիտիվը որպես բարդ բայական ստորոգյալի (compound verbal predicate) մաս՝ ա. Եղբայր բայերի, մոդալ արտահայտությունների և մոդալություն արտահայտող բայերի հետ ինֆինիտիվը կազմում է բարդ բայական ստորոգյալի մաս.

Օրինակ՝ We must not leave him by himself any longer. (Dickens)

Մենք այլևս նրան միայնակ չպիտի թողնենք:

The train was to leave at midnight. (Hemingway)

Գնացքը պետք է մեկնել գիշերը:

բ. Սկիզբ, ընթացք կամ գործողության վերջ գույց տվող բայերի հետ ինֆինիտիվը կազմում է բարդ բայական ասպեկտային ստորոգյալ (compound verbal aspect predicate) (նման ստորոգյալի տեսակը հատուկ է միայն անգլերենին).

Օրինակ՝ Imprisonment began to tell upon him. (Dickens)

Ձերբակալումը սկսեց անդրադառնալ նրա վրա:

Before daylight it started to drizzle. (Hemingway)

Լուսաբացից առաջ սկսեց անձրև մաղել:

4. Ինֆինիտիվը որպես խոդիր.

Օրինակ՝ Leila had learned to dance at boarding school. (Mansfield)

Լեյլան պարելը սովորեց գիշերօթիկ դպրոցում:

To allow (թույլ տալ), to order (հրամայել), to ask (խնդրել), to beg (խնդրել), to request (պահանջել), to teach (ուսուցանել), to instruct (կարգադրել) բայերից հետո կարող է, հայտնվել երկու խոդիր, որից մեկը արտահայտված է ինֆինիտիվով.

Օրինակ՝ He asked me to walk in. (Collins)

Նա ինձ հրավիրեց ներս մտնել:

այնքեր են, իսկ
ներ են չխոսնք»

հասկանալի է,
ային:
նրում են split

առ դնաքնրում
տիվը հանդես

առնց:
ով են հանդես

«այնքեր նախադասության մեջ «ինձ» հանգման անտղական խնդիր է, («ներ մտնեն») ուղիղ

ային:

5.Ինքնիշխանը որպես complex object-ի մաս.

(ընթան) I never saw you act this way before.

Ես երբեք չեմ տեսնիք ընդ այդպես վարվելիս: (վարվելիս՝ համակատար դերբայ):

6.Ինքնիշխանը որպես որոշիչ (attributive): Անգլերենում այն կարող է ցույց տալ արտերակա և
բացարձակաձև գոյականները (abstract and class nouns), անորոշ դերանունները (somebody, something,
everybody, anything), դասական թվականներ (ordinal numerals) և last անվան:

(ընթան) I have not had time to examine this room yet. (Conan Doyle)

Ես ժամանակ չունեի գննելու այս սենյակը:

Այստեղ «գննելու» դասնում է քայական անդամի լրացում:

I have nobody to say a kind word to me.

Ես ոչ մեկը չունեմ, որն ինձ մի բարի խոսք ասեր:

Լանդ-դոմեյնի նշանակի անցյալ ժամանակ, խոսք ասել-ստորոգյալ:

7.Ինքնիշխանը որպես սիջանկյալ քառ(parenthesis).

(ընթան) «Well, to cut a long story short, they thought it would be interesting to make a show.

Լարձ տասնձերսնց թվում էր, որ տնաարևի պահը այլևի հետաքրքիր կլիներ:

I was rude, to say the least of it.

Լարձ տասնձերսնց թվում էր:

Երկու նախադասություններում «ասած»-ը հարակատար դերբայ է:

Ս.Արքանախանը հայերենում նախադասության մեջ անորոշ դերբայի առկայությունը
աշխատավորում է անդամ նախադասությանը: (Ըստ նրա տնականի անդամ կոչվում է այն սիջակաձև
նախադասությունը, որը չունի բերանական կապ, սա՝ նշանակում է, որ նրա կազմությանը չեն
մտնում գոյականներ, այդ թվում նաև օժանդակ բայը կամ հանգույցը):

Անդամ նախադասությունները իրենց կազմությանը միատեսակ չեն, նայած թե անդամ
նախադասության գլխավոր անդամը ինչ խոսքի մասով է արտահայտվում, բայց այդպիսով այն կոչվում է
բացարձակ կամ անվանական:

Հայական նախադասություններն են՝ Հանգստացնել գլուխը («Ի.Դ.»: Հանգստացնել
աշխատանքային կարգադրություն: Այդպիսի նախադասությունների գերազանց անդամը
ստորադասեր արտահայտվում է անորոշ դերբայով: Հայական սիջակաձև նախադասությանը
արտահայտում է գործողության կատարված լինելը, կատարելու անհրաժեշտությունը,
հարցում, հրաման կատարելու մասին և այլն:

«Նմտ. Բորման բռնակա՞յ դառա՞յ: Փակե՛լ Մելախային տանը, գոռա՛, հայիդե՛, ծնե՛՛» (Շիր):
Տախարի գնդագլխերն (Բ.Հ.):

Անդամ նախադասություններն են սովորաբար լինում են պարզ, բայց որոշ՝ պարզ համառոտ և
պարզ ընդարձակ: Պարզ համառոտ անդամ նախադասությունները կազմված են լինում սիջակ սեղ
անդամից:

Օրինակ՝ Հաժմանվն (Շիր), Լեյն («Ի.Դ.»):

Պարզ ընդարձակ անդամ նախադասությունները բաղկացած են լինում մեկ գլխավոր անդամից
և լրացումից կամ լրացումներից:

Օրինակ՝ Ու՛ր գնա՛ (Շիր), Հայց ինչո՞ւ՝ հուզվե՛լ (Շիր):

Հայական անդամ սիջակաձև նախադասությունների գերազանց անդամը սովորաբար
արտահայտվում է անորոշ դերբայով: Հայական անդամ սիջակաձև նախադասությունները
արտահայտում են հրաման, կարգադրություն, գոյցում, որոնցով պահանջվում է կատարել որևէ
գործողություն կամ որով արգելվում է գործողության կատարումը:

Օրինակ՝ Պահե՛՛լ այս թագավարը, չշփոթե՛լ իր՝ (Արդարյան շարժումներից, Կոտորել
բարձր...): Դո՛ւ չընդունե՛՛ ոչ մեկին: Պահակներ դնե՛, որոշ փակե՛, և փախչե՛՛ ցանկացողին սատարել
անմիապաշտ:

Այդպիսի նախադասությունները իրենց բնույթով մտնում են հրամայական
նախադասությունների շարքը, բայց, ինչպես պնդում է Ս.Արքանախանը, չունեն այն լայն,
բազմապիսի կիրառություններ, ինչ որ դիմավոր բացով արտահայտված հրամայական
նախադասությունները:

Անդամ բայական նախադասությունները կարող են արտահայտել նաև պահանջ,
առաջարկություն, կոչ:

Օրինակ՝ Հրատարակե՛՛ մասնագիտական բառարաններ, այդ թվում՝ անտրանցանցի
աշխատողների համար:

առ դնաքնրում
տիվը հանդես

առնց:
ով են հանդես

այնքերի հեն

կազմում է
տողադասի

to request
վել նրկու

Բնարկվող տիպի նախադասությունները հարցական հնչերանգով գործածվելու արտահայտում են հարցում տարբեր նպատակներով:

Ավելի հաճախ նրանք հարցական երանգով գործածվում են այս կամ այն գործողությունը կատարելու վերաբերյալ երկմտություն, կասկածանք, երկընտրանք և նման այլ վերաբերմունք արտահայտելու համար:

Օրինակ՝ Որի՞ն մոտենայ, որի՞ հետ ձուլվել առմիշտ, ո՞րն է բարվորը-չգրկվել հարուստ տնից մնալ հավատարիմ տնեականին և անգե՞ն, թե՞ լինել հարուստ, գորավոր, ինքնիշխան (Շիրվ.):

ՍԱՐԴԻԱԿԱՆԱՅԻՆ այս միակազմ բայական նախադասությունները թեև արտահայտված են անորոշ դերբայով, բայց և այնպես վերաբերում են որևէ դեմքի, մեծ մասամբ դրանք վերաբերում են հենց իրեն՝ խոսողին, ինչպես երևում է բնագրից:

Սակայն միակազմ բայական նախադասությունները հաճախ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարումը հատկապես չի վերաբերում որևէ դեմքի, այլ վերաբերում է ընդհանուրին՝ ն՝ խոսողին, և՛ խոսակցին, և՛ ուրիշներին: Այժմ վերոհիշյալ դեպքերում և երկվազմ նախադասությունների միջև ռժական տարբերությունն է, կարևոր խոսքի սեղմության և կամ այլ պատճառով, ապա այստեղ միտքը անդամ նախադասությամբ արտահայտելու հարցում կա որոշակի անհրաժեշտություն, այն է՝ գործողությունը հատկապես որևէ դեմքին չվերաբերելու հանգամանքը արտահայտելու լեզվական միջոցներով, որի լավագույն միջոցը գործողության արտահայտումն է բայի անդամ ձևով:

Այսպես, Հր.Աճառյանը, նշելով Հասնի բարբառում եցն բառի հոգնակի անկանոնությունը հարգում է՝ «Ինչպե՞ս բացատրել այս անկանոնությունը»: Այստեղ բացատրելու գործողությունը արտահայտված է առանց վերագրելու որևէ դեմքի, ընդհանուր ձևով:

Միակազմ բայական անդամ նախադասությունները հաճախ արտահայտում են իր, ցանկություն, տենչանք:

Օրինակ Հայացքը հանել ձեռքունին՝ նա մի քաղցր արթնություն է ապրում... Զնե՞ղ, չնե՞ղ, միայն «նրան» տենեն արթուն աչքերով, գգալ նրա հմայիչ դեմքի, սպցիկ հասակի, խոր հայացքի վայելքը (Բ.Դ.):

Այսպիսով, հայերենի և անգլերենի անորոշ դերբայների միջև կա որոշակի նմանություն, մինչդեռ իրարից տարբերվում են նրանով, որ հայերենում անորոշ դերբայը չունի դեմք, թիվ, ժամանակ, սեռ, եղանակ, իսկ ինֆինիտիվը ենթարկվում է ժամանակի և սեռի խորշակնությունը և նախադասության մեջ կարող է հանդես գալ բազմաթիվ խոսքի մասերով, մինչդեռ հայերենի անորոշ դերբայը նախադասության մեջ հանդես է գալիս միայն որպես ենթակա, ստորոգյալ կազմող մաս և լրացում:

Ամփոփում

Դերբայների համեմատությունը անգլերենում և հայերենում: Նրանց նմանությունը և տարբերությունը որակական և քանակական առումով: Ինֆինիտիվի համեմատությունը հայերենի անորոշ դերբայի հետ, նրանց դերը նախադասության մեջ և գործածությունը, որպես տարբեր խոսքի մասեր:

Резюме

Общая характеристика непредикативных форм в армянском и английском языках. Сходство и различие в качественных и количественных понятиях. Сравнение инфинитива с армянским эквивалентом, его роль и употребление в предложениях как различные части речи.

Դրականություն

1. Ս.Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բերականություն, Երևան, 1975:
2. Գորգեն Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
3. Է.Բ. Աղայան, Հայոց լեզու, Երևան, 1994:
4. В.Л. Казманская, A Grammar of the English Language, Ленинград, 1973.
5. Т. Drozdova, English Grammar, Санкт-Петербург, 1997.
6. E. M Gordon, I. P. Krylova, A Grammar of Present-Day English.

ԱրՊՀ, անգլերեն լեզվի տնօրին

ՀՏԴ 802.

ՀԱՆԱՍ

Լեզուն
քննարկումն
օրյեկտիվ հա
լրում՝ անգլ
իզոխորություն
գալիսկապակ
այն սեղում է
արհեստակա

Անգլի
բաշխվում է
առաջացմա
են կոնկրետ
վանկային
պարունակո
վանկային
Հեշտային լե
վանկային
որակական
վանկային լե
Հավ
օրյեկտիվ հե
Հեռու
հավասարս
դրությունը
գերազանց
եզրակացն
անհատի ի

Բիբ
Հետագուտ
եզրակաց
Հավասար
կազմում է
Մե
ուսումնա
լեզունը

համեմ
անգլի

ՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԹՈՅԻՆԸ ՈՐՊԵՍ ԱՆԿԼԵՐՆԵՐԻ ՌԻԹՄԻ ԸՆՈՐՈՇՈՂ ՀԱՏԿԱՆԻՇ

Լ.Վ. Վանյան

Անգլերենի ժխմային դասավորվածության հիմք ծառայող հավասարատեսության տեսությունը թվով տարբերությունների առաջնություն է առաջարկում: Այն ներառվում է անգլերենի տակտերի հավասարատեսություն: Սակայն արդյունքում հավասարատեսությունը չի հաստատվել մի շարք վարձերով: Այնուամենայնիվ, հնչյունաբաններին, չի տրվում անգլերենում տակտերի հավասարատեսության գոյությունը, ինչը հիմք է ծառայում բնականորեն հասկանալի վերլուծության մշակման համար: Սակայն բնականաբան է ֆիզիկական մակարդակները սերտորեն համապատասխանեցված են, հետևաբար, եթե բնականաբան մակարդակում նշմարվում է հավասարատեսություն, ապա նաև մեծ է ֆիզիկական: Անգլերենի տակտերի մի մասի օբյեկտիվ հավասարատեսությունն է վեր հանում տեսական գիտելիքի առաջադրանքի իրական լուրջին համար գործողության արգասիք:

Անգլերեն խոսքում շեշտված վանկերը, դասական լեզվաբանների կարծիքի [1.2] համաձայն, առկա է հավասարաչափ հեռավորությամբ: Սա նպաստում է հավասարատեսության տակտերի համապատասխանության: Հավասարաչափության տեսության համաձայն՝ բազային ժխմը սահմանելիս ընդունվում է կոնկրետ միավորի՝ վանկի կամ տակտի իդիոսինուսիզմի, ըստ աղյուսի 1-ի առանձնացնում ենք այն և շեշտային ժխմ [3]: Շեշտային լեզուներում հավասարատես են տակտերը՝ անկախ բաղադրատարրի անշեշտ վանկերի քանակից, իսկ վանկերն օժտված են փոփոխական տևողությամբ: Վանկային լեզուներում հավասարատես են վանկերը, որոնք կազմում են անհավասարատես տակտեր: Շեշտային լեզուների նախատիպ է համարվում անգլերենը: Դրանք ենք և իտալերենը, իսկ անգլերենը դասվում են վանկային լեզուների շարքին: Շեշտային լեզուները բնութագրվում են ուժեղ քանակական և քանակական սղումով, երկար ու կարճ հնչյունների առկայությամբ, բարդ վանկատիպերով, մինչև վանկային լեզուներին հատուկ են համեմատաբար պարզ վանկատիպեր և թույլ քանակական սղում:

Հավասարաչափության այս տեսությունը քննադատվել է հնչյունաբանների կողմից, քանի որ արվելով հավասարաչափության առկայությունը լրիվորեն չի հաստատվել փորձերի արդյունքում:

Նետազոտություններից մեկը դիտարկեց շեշտային լեզուներում տակտերի հավասարատեսության և վանկային լեզուներում տակտերի անհավասարատեսության վերաբերյալ տարբերություն: Արդյունքում շեշտային համարվող լեզուների ժխմիկ տակտերի իդիոսինուսիզմը չէր վերաբերվում վանկային լեզուներին: Հերբերտը դիտարկեց դասակարգումը՝ հեղինակը լեզվաբաններին, որ վանկային կամ շեշտային ժխմը հաճախ նշմարվում է նույն լեզվի, երբեմն նույն անհատի խոսքում [4]:

Քիթմային դասակարգման դիտարկման չի հաստատվում Բ. Բոլդվելի հետազոտությամբ [5]: Նետազոտվելով հանպատրաստի խոսքի տակտերի հավասարատեսությունը՝ նա հանգում է այն ներկայացության, որ հանպատրաստի խոսքը մեծ մասամբ անկանոն է, ոչ իդիոսինուսի: Հավասարատեսությունը բնորոշ է միայն երբ շեշտված վանկ պարունակող ժխմիկ տակտին, որը կազմում է տակտերի ամբողջ քանակի միայն երեք տոկոսը:

